

Պ Ա Շ Տ Օ Ն

Փ Ա Ռ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ս Ո Ւ Ի Բ Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Ն Ե Ի Ն

Հ . Ի . Փ .

Ի Մ Ի Թ Ա Բ Ե Ա Ն Մ Ի Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ն Է

33944

Ե Բ Կ Ը Ր Ի Տ Պ Մ Ի Ր Ո Ւ Թ Ի Ն

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի Վ Ա Ն Ս Ս Բ Բ Յ Ե Ն Ղ Ա Ջ Ա Բ Ո Ւ

1862

ՅՈՐԳՈՐԱՆՔ

Մորք Մատուածասնայ շիրակ
 ասեղ ըրարոչ համար:



Ա. Ինչպէս որ աստուածային ո
 զորմութիւնը ան ատենները աւելի
 երեցեր է աշխրբիս մէջը, երբոր
 մարդիկ մտնալով զՄատուած աւե
 լի նեղութեան ու ծանր տառապա
 նայ մէջ ընկեր են նէ, ասանկ ալ
 սորբ Մատուածասնայ մայրական
 խնամքը ու սէրը քրիստոնէից վրայ
 առաւելապէս երեցեր է ու կ'երե
 նայ ան ատենները, երբոր մարդիկ
 թուղնալով իր ջերմեռանդութե
 նէն՝ փոխանակ բարեպաշտութեան
 ու աստուածային ծառայութեան՝
 սուեր են զիրենք աշխրբիս ունայ
 նութեանը, ու անով մատնուեր են

զանազան տանջանքներու ու անհա-
մար փորձանքներու : Ուստի կը տես-
նենք որ անասի ատեններ սուրբ Մշ-
տուածածին իրեն մասնաւոր խնամ-
քովը հասներ է Չերմեռանդ մար-
դիկներ, որ իրենց աղէկ օրինակով
ու բարի բարոյներովը յորդորեր ու
շարժեր են զուրիշները՝ բարեպաշտ
ու Չերմեռանդ ըլլալու : Ինչպէս որ
յայտնի է եկեղեցական պատմու-
թիւններէն, որ կը գրուի սուրբ Մշ-
տուածածնայ հրաշքներուն մէջը :

Բ. Մ Խնամքս սուրբ Մտուա-
ծածնայ նշան է իր մայրական սի-
րոյն, որ ունի մեր վրայ • ու աս մայ-
րական սէրը սկսաւ ունենալ ան ա-
տենը, երբոր ծնաւ իր Հիսուս միա-
ծին որդին աշխրբբիս փրկու թեանը
համար • ու ետքը աւելի վառուե-
ցաւ իր սիրտը մեր սիրով, երբոր
Հիսուս խաչին վրայ իր մայրութեան
նը յանձնեց զմեզ, (Յովհ. ԺԹ • 26)
իրեն որդի ընելով Հովհաննէս սի-
րելի աշկերտը, ու անով իր ամէն
հաւատացեալ ժողովուրդը՝ որոնց

համար որ աւելի սիրով խաչին վրայ
կը մեռնէր : Մասնի ըլլալով՝ սուրբ
Մտուածածնայ մայրութիւնը ոչ
երբէք պակտեր է եկեղեցնայ վրայ-
էն, թէպէտ և շատ մարդիկ եկե-
ղեցնայ մէջ ապերախտ ըլլալով՝ ի-
րեն ճշմարիտ որդիութիւն չեն ը-
րած • սակայն ինքը իր զթու թիւնը
անպակաս ցրցուցեր է ամենուն վրայ,
ու մասնաւոր շնորհքով յորդորեր
է զիրենք նոր նոր Չերմեռանդու-
թեան ու բարեպաշտութեան տեւէ
ըլլալու, մասնաւոր ծանր նեղու-
թեան ու հալածանքներու մէջ :

Գ. Մասնի ծանր նեղութիւն ու
սաստիկ հալածանք, որ աստուա-
ծային թոյլտուութեանէն շատ ան-
գամ եկեր էր բրիտանոնէից վրայ,
կրնանք բռել թէ ամենէն ետքինը
եղաւ ան խռովութիւնը, որ մեր օ-
րերը քաշեց Աւրոպա, ու իրեն հետ
բոլոր աշխարհս : Մ խռովութեանս
մէջը ուզելով սուրբ Մտուածածին
ցրցընէլ իր մասնաւոր խնամքը, շար-
ժեց մէկ բարեպաշտ կրօնաւորի մը

սիրտը, որ ժողովրդեան մէջ հաս-
տատե՛նք անանկ Չերմեռանդութիւն
մը, որ ըլլայ տարին անգամ մը եր-
սուն օր մայիս ամսուն մէջը իր պաշտ-
պանութեանը համար: և աս Չեր-
մեռանդութիւնս անանկ շատցաւ
Իտալեոյ մէջ, մանաւանդ Հռոմ՝
քաղաքը, որ յիսուն տարի է բոլոր
մայիսին ամիսը երսունըմէկ օր շատ
ժամերու մէջ հանդիսով տօնա-
խմբութիւն կ'ընեն, ամէն օր սրբ-
բութիւն դնելով ու քարոզներ տա-
լով, և այլ Չերմեռանդական ա-
ղօթքներ ընելով սուրբ Բարուա-
ծածնայ:

Դ. Բայ Չերմեռանդութեանս պը-
տուղը տեսնուեցաւ քիչ ատենի
մէջ. անանկ որ պաշտպանութեամբ
սուրբ Բարուածածնայ աշխարհս
գտաւ իր խաղաղութիւնը, խաղըսե-
լով ան խաղութեանն, որ տիրեր
էր վաթսունըութը տարուընէ ՚ի
վեր: Ուստի սուրբ եկեղեցին մայր
գլխած ըլլալով, ու փափաքելով չէ
թէ մինակ աշխրբիս խաղաղու-

թեանը, այլ մանաւանդ հողերոյ
յառաջադիմութեան իր զաւկընե-
րուն, որպէս զի բարեպաշտ ու Չեր-
մեռանդ ըլլան սուրբ Բարուածա-
ծնայ, կու տայ մանաւոր օրհնու-
թիւն ու ներողութիւն՝ ով որ տա-
րին հեղ մը աս ամսուան Չերմե-
ռանդութիւնը ինչպէս պետք է նէ՝
սիրով կատարէ, ու ետքի օրը աղէկ
խոստովանանք ըլլալով սրբութիւն
առնէ ու աղօթք ընէ սուրբ եկե-
ղեցնայ խաղաղութեանը համար:

Ե. Բայ օգտակար ու անուշ Չեր-
մեռանդութիւնը սուրբ Բարուա-
ծածնայ տեսնալով Հռոմ՝ քաղքին
մէջը, շատ տարուան փափաքս որ ու-
նէի պղտիկ բանով մը իմ որդեգրու-
թեան պարտքս նուիրելու ամէնօր-
հնեալ սուրբ Տիրամօրս, յորդօ-
րուեցայ քաղէլ զաս պղտի փունջս
ճաղկընէրու՝ իրեն անունով ընծայ-
ուած մայիս ամսուն գրքէն, որ կ'ը-
սուի Բար Բարեմաս. որպէս զի ըլ-
լայ մեր ազգին բարեպաշտներուն
ալ մէկ առիթ մը համոտն ընելու

իր անուշահոտութիւնը, մանաւանդ
 թէ վառուելու ու զմայլելու քաղցր
 ջերմեռանդութեամբ սուրբ Տիրա-
 մօրն: Այս որովհետեւ ես զիս կը ճանչ-
 նամ որ շատ պակսեր եմ իմ որ-
 դիութեանէս առ սուրբ Աստուածա-
 ծինը, կը փափաքեմ որ ուրիշներու
 ջերմեռանդութեան պատճառմը ըլ-
 լալով, մասնակից ըլլամ իրենց բա-
 րեգործութեանը, ու արժանի գը-
 թութեան և մայրական խնամոց ա-
 մենասուրբ Տիրուհւոյս:

Զ. Պիտնալով որ ամենուն յայտ-
 նի է սուրբ Աստուածածնայ մեծու-
 թիւնը, փառքը, պատիւը, սրբու-
 թիւնը, արժանաւորութիւնը, ան-
 պատմելի գովեստը ու շնորհքը, ինչ-
 պէս քիչէն շատէն գրուած է ուրիշ
 գրոց մէջ, ինչպէս են Չիսսեակ Բա-
 րեբանուբեան, Պարիէր Գօնից, Պան-
 չարան Դորհայ սուրբ Աստուածածնին,
 մէկզի կը թողում անոնց վրայ գրե-
 լը, յորգորելով բարեպաշտները որ
 երթան կարգան զան գրքերը, ու ի-
 մանան թէ ինչչափ մեծ ու զարմա-

նալի շնորհքներով ու փառքով լե-
 ցուած է սուրբ Աստուածածին:
 Այլ մինակ կը փափաքեմ դնել ա-
 տեղս մէկ քանի յորգորանք մը ցը-
 ցնելով իր մայրական գութը ու սէ-
 րը, որ ունի մեր վրայ. որպէս զի բա-
 րեպաշտները վառուին ու բորբոքին
 իրեն ջերմեռանդութեամբ:



Գոչք ոչ խնամք սոչքք Աստուա-
ծածնայ :

Ա՛ռ զէս իմննալ սուրբ Ա՛ստուա
ծածնայ սէրը ու սիրաը մեր վրայ ,
կարգա իրեն այցելու թեան պատ-
մու թիւնը՝) ու կասու աւետարանին
մէջ (Գլ . Ա . 39) . ուր կը տեսնես՝
թէ սուրբ կոյսը երբոր իմացաւ
Վաբբիէլ Տրեշտակին աւետօքը՝
թէ պիտի ըլլայ մայր Ա՛ստուծոյ , ա-
մենայն խոնարհու թեամբ հնազան-
դելով աստուածային կամբին , լե-
ցուեցաւ ուրախու թեամբ սրտի՝
ճանչնալով որ Ա՛ստուած զինքը պի-
տի առնու գործիք աշխրբբիս վեր-
կու թեանը , ու իր միջնորդու թեամբ
բարիք պիտոր ընէ ամենուն . ուստի
նոյն ուրախու թեամբ մէկէն ելաւ
տնէն ու գնաց Օւաքարիա քահա-
նային տունը , ու աստուածային
խնդու թեամբ բարե տուաւ Աղի-
սաբէ թի : Ա՛նչ անուշ ու հոգւով

սրբով լեցուած խօսքեր էր ան բա-
րեւ սուրբ Ա՛ստուածածնայ , որ եր-
բոր լսեց Աղիսաբէ թի՝ ինքն ալ ու-
իր զաւակն ալ լեցուեցան հոգւոյն
սրբոյ շնորհքովը . ու սկսաւ Աղի-
սաբէ թի օրհնել զուրբ կոյս Ա՛ս-
տուածածինը , երանու թիւն տալով
է թէ մինակ իրեն աստուածամայ-
րու թեանը , այլ և անոնց որ ճշմա-
րիտ հաւատքով կ'ընդունին ու կը
դիմեն իրեն : Ա՛ն ատենը սուրբ Ա՛ս-
տուածածին բացաւ իր ամէնօր-
հնեալ բերանը , ու մարդարեական
հոգւով ետքի ըլլալու հրաշքները
իր միջնորդու թեամբ առաջուց սկը-
սաւ պատմել Աղիսաբէ թի , փա-
ռաւորելով Ա՛ստուծոյ մեծու թիւնը
ու սքանչելիքներն որ պիտի ընէր իր
ձեռքովը . ուստի ըսաւ .

« Ա՛եծացուցե՛ անձն իմ զՏէր ,
և ցնծացաւ հոգի իմ յԱ՛ստուած
փրկիչ իմ , » : Ա՛ռ զէր ըսել թէ աս
մեծ շնորհքն որ Ա՛ստուած ինծի ը-
րաւ , որով եղայ մայր Ա՛ստուծոյ , ա-
նանկ մեծու թիւն մըն է , որ ինձ մնլ

պիտոր մեծնայ, ճանչցուի ու փա-
 աւորուի Մատուծոյ զԹու թիւնը,
 ողորմութիւնը, իմաստութիւնը, ա-
 մենակարող զօրութիւնը. ինչու որ
 միջնորդ ըլլալովս Մատուծոյ մարդե-
 դութեանը, ու անով մարդկային
 փրկութեան, ինծմով պիտոր ճանչ-
 նան մարդիկ թէ Մատուած ինչպիսի
 մեծ ու անհաւատալի բաներ կ'ընէ
 եղեր աշխրբքիս. ուստի աս սքանչե-
 լիքներուս համար կը ցնծայ ու կ'ու-
 բախանայ իմ հօգիս՝ մըտմտալով
 Մատուծոյ փառքը ու ողորմութիւնը
 մարդուս վրայ: Մա ողորմութիւնս
 երբոր Մատուած սկսաւ ընել աշ-
 խրբքիս, չուզեց ձեռք առնուլ ա-
 նանկ մեծատուն խաթուն մը, որ
 իր մարմնաւոր հարրատութեամբ ու
 փառքով ամենուն ճանչուոր ըլլայ,
 այլ ընտրեց խոնարհ ու բարեպաշտ
 կոյս մը, որ զինքը աղախին Մատու-
 ծոյ սեպելով, բոլոր կեանքը ջերմե-
 աանդութեամբ կ'անցընէր միշտ Մա-
 տուծոյ ծառայելով. անոր համար
 կ'ըսէ:

“Օ ի հայեցաւ ՚ի խոնարհու-
 թիւն աղախնոյ խրոյ”, Մա ան խո-
 նարհութիւնն է, որով բարձրըցաւ
 քան զամէնը վեր. ան խոնարհու-
 թիւնն է, որով կը հասնի ամենուն.
 ան խոնարհութիւնն է, որով զա-
 մէնը կը սիրէ ու մօր պէս ամենուն
 վրայ խնամք ունի ու իրենց կարօ-
 տութիւնը կը լեցնէ. ուստի ա-
 մէնքն ալ վայելելով իրեն սէրը ու
 զԹասրտութիւնը կ'օրհնեն, կը գո-
 վեն, կը մեծցընեն ու երանութիւն
 կու տան իրեն մայրութեանը. անոր
 համար ըսաւ.

“Օ ի ահա յայսմհետէ երա-
 նեացեն ինձ ամենայն ազգք”, իրաւ
 որ՝ չիկայ աշխրբքիս մէջը մէկ ազգ-
 մը, մէկ քաղաք մը, մէկ դեղ մը ու
 մէկ տուն մը, որ չիճանչնան իր մե-
 ծութիւնը ու փառքը, տեսած չըլ-
 լան իր հրաշքը, չեպատուեն զինքը,
 ու երանութիւն չիտան իր մայրու-
 թեանը: Մնչու որ ամէնքը կը ճանչ-
 նան թէ Մատուած ինչ պատուոյ
 հասուցեր է իր սուրբ մայրը, ու ինչ

անպատմելի կարողութիւններ տրուեցին էրեւն, որով կ'երևնայ Մատուցոյ ձեռքը, Մատուցոյ սքանչելիքը ու աստուածային սրբութիւնը. աւոր համար կ'ըսէ.

“Օ՛ր արար ինձ մեծամեծս հըզօրն”, : Քան զաս մեծ ինչ կրնայ ըլլալ, որ կոյս աղջիկ մը՝ խմնարհ ու անծանօթ աշխրբիս, ընտրուի ու ըլլայ մայր Մատուցոյ միջնորդ մարդկային փրկութեան, զանձապէտ շընորհաց ու բաշխող աստուածային ողորմութեան. անանկ որ լեցուած է աշխարքս իր հրաշքներով, իր գրութութեամբը, իր մայրական սիրով. որով մարդիկ Մատուցոյ կը մօտենան, Մատուցոյ կը ծառայեն, Մատուցոյ անունը կը պատուեն ու կը մեծարեն. ուստի կ'ըսէ.

“Եւ սուրբ է անուն նորա”, : Մատուցոյ սրբութիւնը երևցաւ Մատուածածնայ կուսական մայրութեամբը. անանկ որ աղջիկ մը ըլլայ մայր ու կոյս, ծնանի չէ թէ միակ զորդին Մատուցոյ, այլ և ըլլայ

մայր բազմութեան հաւատացելոց, որ զինքը սրբութեամբ ու կուսութեամբ կը պատուեն, սրբութեամբ ջերմեռանդութիւն կ'ընեն, ու իրեն մարբութեանը հետեւելու համար՝ կեանքերնին սուրբ ու անարատի անցընեն Մատուցոյ ծառայութեանը մէջ, ուստի արժանի ալ կ'ըլլան աստուածային ողորմութեանը. ինչպէս որ կ'ըսէ ետեւէն.

“Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց”, : Մատուածային ողորմութիւնն որ ըրեր է մեզի ու կ'ընէ միջնորդութեամբ սուրբ Մատուածածնայ՝ չիկարծենք որ զիպուածական կամ ժամանակաւոր բան մըն է. այլ մշտնջենաւոր ու յաւիտենական, անանկ որ որդեոց որդի պիտի երթայ. միայն թէ ճանչնայ մէկը ու իր կողմանէ արգելք մը չիգնէ աստուածային ողորմութեան, իմանայ որ մեծ պարգև Մատուցոյ է ունենալը ասանկ մայր միջնորդ ու բարեխօս, որով կրնանք ամէն ինչ իրբնիս առնուլ Մատուց-

մէ : Աս մեծ ողորմութիւնս որ Աստուած ըրաւ մեզի իր մարդեղութեամբը ու ցըցուց իր ամենակարող զօրութիւնը , ալ ուրիշ Բնչ բան կրնայ ըլլալ իրեն անկարելի . ուստի կ'ըսէ ետեւէն .

“Արար զօրութիւն բազկաւ իւրով , : Աստուծոյ բազուկը իր ամենամեծ իմաստութիւնը ու կարողութիւնն է . մեզի անկարելի երեցած բանը դիւրին ճամբով կ'ընէ , անանկ որ մարդկանց խելքը չիհասնիր . մանաւանդ հպարտ ու ամբարտաւան մարդիկներուն , որ զիրենք բանի տեղ զրեր են ու կը կարծեն որ մարդկային խելքով ու մարդկային ուժով ամէն բան կ'ըլլայ . սակայն Աստուած ուղեւորով խոնարհեցընել զանոնք , առաւ իր ձեռքը մէկ խոնարհ աղջիկ մը , ու անով այնպիսի մեծ ու զարմանալի հրաշքներ ըրաւ ու անդադար կ'ընէ , որպէս զի երեցնէ թէ ինքն Աստուած է որ զայս ամենայն կ'ընէ , չէ թէ մարդիկ իրենց տկար ու հողեղէն բնութեանովը . անոր համար կ'ըսէ .

“Յրուեաց զամբարտաւանս մը . տօք սրտից իւրեանց , քակեաց ըզհզօրս յաթուոց և բարձրացոյց ըզխոնարհս , : Առաջէ բսել թէ ասկեաց է կանոն աստուածային կառավարութեանը , որ իր ողորմութիւնը կ'ընէ մինակ խոնարհներուն , բարեպաշտներուն , երկիւղած ջերմեռանդներուն , կը լեցընէ զանոնք շնորհքով ու կը փառաւորէ իր մեծութեամբը . իսկ առջի հպարտին , այսինքն սատանային նման հպարտները կը մերժէ ու երեսէ կը ձգէ . մանաւանդ զանոնք որ Աստուծոյ բարիքը վայելէրով , չեն ճանչնար թէ Աստուծոյ ողորմութիւնն է , այլ իրենց խելքին ու բախտին կու տան յաջողութիւնը . իբր թէ իրենք անկարօտ են մէկի մը , ու կրնան ամէն բան ընել . սակայն Աստուած իր ուղորմութիւնը անոնց միայն կու տայ , որոնք որ կը փափաքին ու զիրենք ալ կարօտ կը ճանչնան Աստուծոյ շնորհացը , ինչպէս որ կ'ըսէ .

“Օ՛քաղցեալս լցոյց բարութիւն ,

44
339

և զմեծատունս արձակեաց ունայ-
 նրս , : Վարդած կ'ըսուին անոնք ,
 որ իրենց բարբ յոյսը զրեր են Մ-
 տուծոյ վրայ , ու ուրիշ բան չեն ու-
 գեր , բայց եթէ Մտուծոյ կամբը
 իրենց վրայ կատարուի . ուստի զՄ-
 տուած ալ կը պարտաւորեն՝ որ զի-
 րենք լեցընէ ամենայն բարութիւն ,
 այսինքն ամէն շնորհքով : Մոր հա-
 մար կը տեսնենք որ ճմարիտ բարե-
 պաշտնէրը ծառայելով Մտուծոյ ,
 թէ կպէտ և նեղութիւն մ'ալ ունե-
 նան , միշտ սրտերնին ուրախ է , զիտ-
 նալով որ Մտուած զիրենք հօր պէս
 կը նայի , ու սուրբ Մտուածածինն
 ալ մօր պէս կը խնամէ . ուստի ա-
 նանկ բարեպաշտները ոչ երբէք զըր-
 կուած են իրենց խնդիրքէն , այլ ուշ
 կամ շուտ իրենց անդադար աղօթ-
 քովը առեր են ամէն ուզածնին : Մ-
 տոնց ներհակ անոնք որ զիրենք բանի
 մը կարօտ չխտեպելով , անհոգ են ե-
 ղեր Մտուծոյ ծառայութեանը ,
 զրկուեր են թէ աշխարհիս բանե-
 րէն , և թէ որ մեծն է՝ արքայու-

17
18
19

թեան ժառանգութենէն : Ինչու որ՝
 Մտուած մինակ իր ծառաները կը
 պահէ ու կը պաշտպանէ , իր ծառա-
 ներուն կ'ողորմի ու զթալով՝ հօր
 պէս կը խնամէ զանոնք . ինչպէս որ
 առաջուց խոստացեր էր Մբրահամ
 նահապետին ու իրեն սուրբ զաւկը-
 ներուն . անոր համար կ'ըսէ ետեւէն .

« Պաշտպանեաց Եսրայելի ծա-
 ալի իւրում յիշել զողորմութիւնս ,
 որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Մը-
 բրահամու և զաւակի նորա յաւի-
 տեան , : Մբ բանովս սուրբ Մ-
 տուածածին Եսրայելի այսինքն հը-
 րէաներուն ժողովրդեան անունովը
 կ'իմացընէ զամէն մարդիկ , որ գե-
 բուած էին սատանային ձեռքը , ու
 անով մատնուած էին մեղքի ու մն-
 լորութեան մէջ . Մտուած տեսնա-
 լով անոնց խեղճութիւնը , յիշեց իր
 անբաւ ողորմութիւնը . ուստի ելաւ
 եկաւ աշխարհք փրկել ու պաշտպա-
 նել զամէնք իր սուրբ մարդերու
 թեամբը , ինչպէս որ խոստացեր էր
 Մբրահամու և ուրիշ նահապե-

տաց, թէ իր ողորմութիւնը պիտոր չիպահեսցընէ անոնցմէ, և թէ Մարաշամու նահապետին զաւկովը պիտի օրհնուին ամէն աղղեր. (Ծննդ. ԻԲ. 18):

Ահա աս ան ամէնօրհնեալ զաւակն է, որ եղաւ մայր Աստուծոյ, ու ծնաւ մեր Յիսուս փրկիչը, որով ազատեցանք յաւիտենական դատապարտութենէն, ու ժառանգ եղանք արքայութեան: Այս ամէնօրհնեալ զաւակն է, որով օրհնուեցաւ աշխարհքս, ազատեցաւ իր պատիժնէն ու զարդարուեցաւ անհամար շնորհքներով, որ Աստուած բրաւ ու կ'ընէ անդադար անօր միջնորդութեամբը: Թէ որ կ'ուզես դուն ալ տեսնալ սուրբ Աստուածածնայ զօրաւոր պաշտպանութիւնը քու վերադ, եղիր Չերմեռանդ, եղիր ազութեամբ, եղիր իրեն որդեգիրը կամ զաւկի պէս, որպէս զի ինքն ալ ըզքեզ մօր պէս հողայ ու իննամէ. ամէն կարօտութիւնդ լեցընելէն ետ-

քը, զարդարէ զքեզ աստուածային շնորհքով:

Կ'ուզէս իմանալ սուրբ Աստուածածնայ դու թը ու կակուզ սիրտը մեր վրայ, կարդա Յովհաննու աւետարանին մէջը Կանա զայիլեացոց հարսնիքին պատմութիւնը (Յովհ. 4. Բ). ուր կը տեսնես թէ սուրբ Աստուածածին ինչ իննամբ ունի անոնց վրայ, որ զինքը մեծարելով կը կանչեն իրենց տունը կամ իրենց հողոցն ընակարանը: Աս երջանիկ հարսնիքը երբոր եղաւ նէ, կանչուած էր սուրբ Աստուածածինը իբրև մայր դժած, որ իրենց ամէն կարօտութիւնը տեսնէ ու հոգայ. և որովհետև մեծ կարօտութիւննին Յիսուսին հոն չըլլալն էր, նայէ աստուածային կարգադրութիւնը՝ որ Յիսուս ալ կանչուեցաւ իր աշխերտ ներովը, որպէս զի հոն տեղը սուրբ Աստուածածնայ միջնորդութեամբը ընէ իր առջև հրաշքը: Կը փափաքէին հարսնեւորք որ իրենց հարս-

նիքը պատուով ըլլայ . կ'ուզէին որ
 նեղու թիւն կամ պակսու թիւն մը
 չիքաշեն . ուստի Մատուած անանկ
 կարգ մը դրաւ՝ որ ամէն ուղածնին
 շէնքով շնորհքով ըլլայ :

Ինչ ցանկալի բան էր ան հարս-
 նիքին խնտու մը . ուր սուրբ Մատուա
 ծածին եկեր էր զիրենք հոգալու , և
 Յիսուս օրհնելու ու կարօտու թիւն
 նին լեցընելու . ասոր համար կ'երև-
 նայ թէ հարսնեւորնեւուն աւելի ու-
 բախու թեւնէն , որ ասանկ մեծ պա-
 տուոյ են հասեր , մասնաւոր աստուա-
 ծային կարգադրու թեամբը պակսե-
 ցաւ զինին . և որովհետև անանկ
 անպատմելի ուրախու թեան մէջ
 մեծ ցաւ ու սրակտորուկ պիտի ըլ-
 լար փեսին ու ամէն հարսնեւորնե-
 րուն , շուտով մը սուրբ Մատուածա-
 ծին առանց մէկին իմացընելու գնաց
 ու ըսաւ իր սիրելի աստուածորդւոյն ,
 թէ հարսնիքը զինի պակսու թիւն
 ունի : Հասկըցիր ատով սուրբ Մ-
 տուածածնայ փոյթը ու խնամքը իր
 քերմեւանդներուն վրայ , թէ ինչ

պէս կը տեսնայ անոնց կարօտու-
 թիւնը , և թէ ինչպէս շուտով բա-
 րեխօս կ'ըլլայ իր աստուածորդւոյն
 առջևը :

Ինչ ատենը թէպէտ Յիսուս ե-
 րևցուց թէ հրաշք ընելու ժամա-
 նակը դեռ չէր եկած , բայց սուրբ
 կոյսը գիտնալով որ իր խնդիրքը ան-
 տարակոյս կ'ընէ իր սիրելի որդին ,
 մէկէն գնաց ըսաւ ծառայողներուն՝
 որ պատրաստ կենան ու ինչ որ Յի-
 սուս իրենց ըսէ նէ , նային որ շու-
 տով կատարեն : Ուստի Յիսուս ու-
 զենալով իր սիրելի մօրը կամքը կա-
 տարել , ու զմեզ աւ յորդորել որ
 միշտ անոր բարեխօտու թեանը զի-
 մենք ամէն կարօտու թեան մէջ ,
 ձեռք զարկաւ իր առջի հրաշքը ցը-
 ցընել աշխրբիս՝ ամենասուրբ մօ-
 րը խօսքովը . որով իմացուց թէ ա-
 մէն շնորհք որ կը տրուի մեզի , պի-
 տի ըլլայ պտուղ մասնաւոր բարե-
 խօտու թեան սուրբ Մատուածա-
 ծնայ :

Եւ որովհետև Մատուած իր ո-

ղորմութեան մէջը առատ է, մանաւանդ երբոր իր ամենասուրբ մօրը միջնորդութեամբը կ'ընէ, անոր համար Հիսուս հրամանեց ծառաներուն ջրով լեցնել վեց հատ քարէ կարաններն որ կային ան տանը մէջը, ու երբոր լեցուցին զանոնք ինչուան բերանը, Հիսուս մէկէն ըրաւ իր աստուածային հրաշքը. անանկ որ կարաններուն միջիեղած ջրերը զարձան անուշ զինի եղան. ու անով իրենց հարսնիքը առանց շիոթութեան կրցան ուրախ սրտով կատարել:


Ստորտա աս մասնաւոր ինամբն ալ սուրբ Մատուածածնայ, որ չէ թէ մինակ հրաշք ընել տուաւ, որպէս զի հարսնիքին ան ատենի կարօտութիւնը լեցուի, այլ և Հիսուսին ըրած հրաշքը չիմոռնալու համար այնչափ շատ ընել տուաւ զինին, որ կըրնային հարսնիքէն ետքն ալ վայել ու զմայլել Հիսուսին սիրովը. ինչպէս որ անանկ ալ եղաւ կ'ըսեն եկեղեցական պատմիչները: Ս ան զի

աս հարսնիքին տէրը կամ փեսան, որ էր կ'ըսեն Սիմոն կանանացի, տեսնալով Հիսուսին հրաշքը թողուց ամէն բանը, ու իրեն աշկերտ ըլլալով, ասրեցաւ ու մեռաւ Հիսուսին փառացը համար: (Վարժ Սրբոց հտ. Թ. երես 96):

Եպէ Մատուծոյ բանը, թէ որ մէկը ուզենայ փրկել ինչ ճամբայ կը դնէ, ու ինչ կերպով զինքը սուրբ կ'ընէ: Չրաէ մէկը՝ թէ աշխրբքիս հողը ու զբաղմունքը արդէլք կ'ըլլայ հողին փրկելու. ինչու որ ամէն վիճակի մէջ Մատուած իր շնորհքը ու ողորմութիւնը չիպակտեցնէր. միայն թէ տեսնեն մարդիկ ու հետեին իրեն ազգարարութեանը, որ կ'ընէ ոմանց աջողութեամբ, ու ոմանց ալ ձախորդութեամբ:

Վիտնաս որ փրկու թեան ապահով ճամբան է ջերմեռանդ ըլլալը սուրբ Մատուածածնայ: Ընիկայքէզի կը սորվեցնէ թէ ինչպէս սխաոր Մատուծոյ ծառայես, ինչ բարեգործութիւն սխալ ընես, ու կեանքդ

ինչպէս պիտի անցընես : Այլ որպէս
 զի քու ջերմեռանդու թիւնդ կարե-
 նաս առանց տարակուսելու ընել, ա-
 նոր համար ուղեցի աս կարճ գիւրջս
 շինել, որ դիւրին ըլլայ չէ թէ մի-
 նակ տարին հէզ մը ամսուան մտա-
 ծականներով ջերմեռանդու թիւն
 ընելու, այլ և ամէն օրուան աղօթք-
 ներով, (որ պիտի դնենք մտածա-
 կաններէն ետքը), պատուելու ու
 անդադար մեծարելու սուրբ Այ-
 տուածածնայ մայրու թիւնը, որով
 արժանի ալ կ'ըլլանք իր բարեխո-
 սու թեամբը յաւիտենական փրկու-
 թեան : Ինչպէս որ կ'աղաչէ սուրբ
 Վրիդոր Վարեկային . « Կ'ձեռն զօ-
 բեղ քոյն հայցուածոց լիցի մեզ
 անդատապարտ համարձակու թիւն
 յատենի մեծ և ահաւոր սուրբ դա-
 տաւորին » :



Կարգ ու կսկնոն ամսուան չերե-
 ւակոյորքեան սուրբ Աստուա-
 ճաճեայ :

Որպէս զի աս բարեպաշտու թիւ-
 նը չէ թէ միայն հաճոյ ու ընդունե-
 լի ըլլայ սուրբ Այտուածածնայ, այլ
 և ընողներուն ալ զուարճալի ու հօ-
 զեւոր զըօսանք մը, պէտք է պահել
 զաս կարգս :

Տանը մէջ ամենէն աղէկ տեղը
 կամ սենեակը, ուր որ սովորու թիւն
 ունին մէկտեղ ժողոված աղօթք
 ընելու, պէտք է դնել ջերմեռան-
 դաշարժ աղու որ պատկերք մը սուրբ
 Այտուածածնայ, ու որչափ կարելի
 է նէ զանազան մամբրով ու ծաղկը-
 ներով զարգարել զանիկայ, անանկ
 որ տեսնողները շարժէ ու յորդորէ
 ջերմեռանդու թիւն ընելու :

Ան իրիկունը որ պիտի մասնն
 մայիսի առջի օրը, ամէնքը մէկտեղ
 ժողոված խորանին առջևը մամբրը

վառելով՝ պիտի ըսուի ջերմեռան
 դռնէմք վարդարանը կամ պսա
 կը և կամ լիժանիայն սուրբ Լս
 տուածածնայ : Լսկից ետքը ըսելու
 է ինչ որ այլ սովորական աղօթք ու
 նիննէ իրենց տանը մէջ . միայն թէ
 ետքի աղօթքները չափաւոր ըլլայ՝
 որ չիճանձրանան ու աղօթքներուն
 շատու թեանը համար չկրկնուան
 որ շուտ լմննայ , այլ ջանան ընել ա
 մենայն զգաստու թեամբ ու ջերմե
 ռանդու թեամբ :

Լսօթքները լմննալէն ետքը՝ ա
 մէն մարդ վիճակաւ հանելու է մէյ
 մէկ հոգեւոր բան , (որ պիտի առա
 ջուց գրուած ու պատրաստած ըլ
 լայ մանաւոր պզտի թղթերու վրայ) ,
 որպէս զի ան կարճ հոգեւոր խօսքերը
 ամէն մէկին ըլլան հոգեւոր կրթու
 թիւն մայիս ամսուան մէջ : Լս հո
 գեւոր խօսքերս , որ կ'ըսուի Նոգեւոր
 ծաղիկներ , պիտի դնենք ետեւի գր
 խուն մէջը՝ տասուերկու հատ , տա
 սուերկու հոգիի համար . որպէս զի
 դիւրին ըլլայ բարեպաշտներուն ա

ռանց աշխատանաց օրինակելու բա
 նեցրնել :

Լս թղթերէն 'ի զատ (որ ամէն
 մէկը իրեն համար պիտի հանէ) ,
 պէտք է վիճակաւ հանել մէկ ուրիշ
 հոգեւոր ծաղիկ մ'ալ , որ ծառայէ ա
 մենուն մէկտեղ մայիսի առջի օրը :
 Լս հոգեւոր ծաղիկն ալ կը գտնաս
 ետեւի դիւնուն մէջը , ուր պիտի դնենք
 երսունըմէկ հատ մայիս ամսուն օ
 րերուն համարնորով :

Լս վիճակները կամ հոգեւոր ծաղ
 կները հանելէն ետքը , պիտի կար
 դացուի առջի օրուան մտածականը
 հանդերձ ետեւի պտղով ու աղթ
 քովը , որ կը ծառայէն ամէն մարդու :

Բաճնիս առջի իրիկուան համար ,
 պէտք է ընել ամէն իրիկուն մայիս
 ամսուան մէջը . բաց 'ի առջի վիճա
 կէն , որ պիտի ծառայէ ամէն մէկին
 բոլոր ամսուան համար . իսկ եր
 կրորդ վիճակը օրէ օր պիտի հանուի

Ստածականը կարգալու ատեն
 մէյմէկ քիչ մտմտալու է ամէն մէկ
 բաժնին վրայ , իսկ ետքի դրուած

պտղին հառաչանքը օրուան մէջ շատ
անգամ օրտանց զրուցելու է :

Ասկից 'ի զատ ամէն շաբաթ կամ
գոնէ տասնհինգ օրն անդամ մը
պէտք է մասնաւոր ջերմեւանդու-
թիւն ընել, խոտառվանսք ըլլալով
ու սրբութիւն անելով : Այս ամէն
օր անէն դուրս ելլելու ատենդ ջա-
նա որ երթաս այցելութիւն ընես
եկեղեցնայ մը, կամ խորանի ու
պատկերի մը սուրբ Տիրամօրն : Ա եր-
ջապէս բոլոր ամսուան մէջ անանկ
կենցաղավարէ, որով ճանցուիս թէ
նուիրուած ես սուրբ Աստուածա-
ծնայ . ջանալով գործքերդ անանկ
ընել, որ անհաճայ չերևնայ իրեն
սուրբ ու մաքուր աչքերուն : Այս եր-
բոր ամիսը ըմբնայ նէ, քու սիրտդ
ու հոգիդ նուիրէ սուրբ Աստուա-
ծածնայ մասնաւոր ազօթքով մը, որ
պիտի գնէնք մտածականներէն ետ-
քը :

ԾԱՂԻԿԻ ՀՈԳԵՒՈՐ

Տասուերկու բարի գործքեր, որ փնակու
րածեկու է բնուանաց Մայիսի ամիս օ-
րուան իրիկունը :

Ա. Աստուածանց անկողինէն ել-
լելու ատենդ ջանա որ ատանց հեղ-
գութեան ելլես, որպէս զի օրուան
սկիզբը զուարթութեամբ ըլլայ . ու
նայէ որ պարկեշտութեամբ հա-
ղուիս ու մտմտաս ամէն օրուան հօ-
ղեւոր կրթութիւնդ :

Բ. Չանա ամէն օր պատարագ
լսել, ու ջերմեւանդութեամբ ընել
սուրբ Աստուածածնայ պաշտօնը :

Գ. Ամէն օր քիչ մը ատեն ըլլայ
կարդաս մէկ հոգեւոր գիրք մը . ինչ-
պէս վարք սրբոց, կամ այլ խրատա-
կան բաներ . փախչելով ան սնտոի
զբերէն, որ քու վեճակեդ դուրս
են :

Դ. Չանա ամէն օր գքեզ գրկե-
լու մէկ զբօսանքէ մը, թէպէտ ան-

մեղ ու պատշաճ բան ըլլայ . ինչպէս նախաձաշիկ ընելէն, կամ զուարճալի բան մը տեսնալէն ու լսելէն, կամ անուշահոտ ծաղիկ մը հտուտը տալէն, և այլ ասոր նման բաներէն :

Ե . Ըրբքաներու վրայ դու թ ջրցուր, տալով իրենց ողորմութիւն մը . թէ որ ուրիշ բան ալ չունենաս տալու, դոնէ նախաձաշիկ տուր :

Զ . Ընէն որ՝ բանի մը ձեռք չի զարկած, ճունկ չողէ՝ օգնութիւն ու պաշտպանութիւն խնդրէ սուրբ Ըստուածածնէն :

Է . Ընէն որ տնէն ելլելու մտնալու ատենդ՝ սուրբ Ըստուածածնայ պատկերը պաճ, ու ըսէ՛ իրեն մէկ Ողջոյն քեզ Սարիամ մը :

Ը . Մանա՛ որ աղէկ հնազանդութիւն ընես քեզմէ մեծերուն, ու անոնց հրամանը սիրով կատարէ՛ առանց ուշանալու . միայն թէ ըսածնին չըլլայ մեղք, կամ Ըստուծոյ անհաճոյ բան մը :

Թ . Օգոյշ կեցիր ուրիշի վրայ գէշ խօսելէն ու բամբասելէն, կամ

ուրիշը ծաղրելէն, թէ պէտ և ըսածդ թէ թ և բան ըլլայ . որ գէշ չի սորվես ու մեծ բաներու մէջ չի նիս :

Ճ . Ընէն որ ջանա՛ որ բարի օրինակով մը կամ անոյշ խօսքերով վաստըկիս ընկերներուդ միջէն զանիկայ՝ որ քան զամէնը անփոյթ է հոգևորի . նայէ՛ որ տանիս զինքը եկեղեցին . յորդօրեա որ ըսէ սուրբ Ըստուածածնայ պաակը, խոստովանի, սրբութիւն առնէ, կամ այլ այսպիսի բարեգործութիւններ ընէ :

ՃԱ . Մանա՛ ամէն օր մէկ պըղտիկ ձգնու՛թիւն մը ընել, կամ նեղութիւն մը քաշել սուրբ Ըստուածածնայ փառացը համար . Ըս ճըգնութիւնս կրնայ ըլլալ, երբոր սեղանին վրայ մէկ աղէկ սիրած կերակուրդ դայ, կամ ամենուէն չուտելով անկից, և կամ քիչ ուտելով կամ թէ սեղանէն դուրս ջուր չիխմելով, թէ պէտ և ծարաւ ունենաս :

ՃԲ . Մանա՛ որ աս ամսուան մէջ ներելի ու թէ թ և մեղքի ալ զգուշանաս :

ԾՄԱԴԻԿՔ ՀՈԳԵՒՈՐ

Երստերակի բարի գործքեր, որ Մայիս ամսուան մէջ ամեն օր հանկուտ վիճակիս:

Ա. Սուրբ Աստուածածնայ անունը ուր որ գրուած տեսնաս նէ՛ համբուրէ՛ ջերմեռանդութեամբ:

Բ. Պատարագ ընել սուր, կամ գոնէ մէկ պատարագ մը աւելի լսէ՛ քաւարանին միջի եղած ան հօգիտներուն համար, որոնք որ իրենց կենացը մէջ աւելի ջերմեռանդ են եղեր սուրբ Աստուածածնայ:

Գ. Վանի որ միտքդ ինկնայ սուրբ Աստուածածնայ յիշատակը, ջանանք ըսես մէկ Ողջայն քեզ Մարիամ մը:

Դ. Առաւօտանց հագուածիդ պէս, ու իրիկունն ալ հանուելէդ առաջ դառնալով գէպ՛ի մէկ եկեղեցի մը, կամ մէկ ջերմեռանդաշարժ պատկեր մը սուրբ Աստուածածնայ, խորնդրէ՛ իր օրհնութիւնը քու վրայ:

Ե. Չանան մէկ բարիք մը ընել ան մարդուն, որուն հետ որ կարծես թէ ներհակութիւն մը ունիս, կամ թէ ատենօք փսաս մը տուերես իրեն:

Զ. Մանաւոր զգուշութեամբ պահէ՛ զգայարանքդ, մանաւանդ ան ընդերդ:

Է. Իսէ՛ տանըհինգ տուն վարդարանին իրէք մասին մէկը, կամ սուրբ Աստուածածնայ պսակը. զըրկելով զքեզ մէկ զբօսանքէ՛ մը:

Ը. Օգնութիւն մը ըրէ՛ քաւարանի ան հօգիտներուն, որ աւելի ջերմեռանդ են սուրբ Աստուածածնայ ու ըսէ՛ իրէք ի խորոց կարդացի:

Թ. Պատարագ լսելու ատենը ըզգաստութեամբ ու պարկէշտութեամբ կեցիր առանց ասդին անդին նայելու:

Ժ. Սուրբ Աստուածածնայ փառացը համար ջանանք որ պահես ան աղէկ խրատները ու կանոնները որ տրուած է քեզի բարի ըլլալու համար. մանաւանդ ան կանոնը, որ սովորաբար անփոյթ ես պահելու:

ժԱ. Չանս որ ուրիշի նեղու-
թիւն մը չիտաս. մանաւանդ թէ՛
էրբոր ուրիշը քեզի տալու ըլլայ նէ,
սիրով համբերես:

ժԲ. Եսլի որ ջանք ունենաս կար-
դալուդ, աղօթքիդ և ամէն կարգիդ
ու կանոններուդ, որ տրուած են
քեզի:

ժԳ. Ընտանաց կանուխ ամէն
գործքեդ առաջ՝ նուիրէ՛ սուրբ Ըն-
տուածածնայ քու զգայարանքդ՝ ու
ամէն գործողութիւնդ ալ որ պիտի
ընես ան օրուան մէջը:

ժԴ. Չանս ամէն օր քիչ մը ա-
տեն մտածական աղօթք ընել:

ժԵ. Պատարագ տեսնալու ա-
տենդ ջանս որ հոգևորապէս հա-
ղորդուիս: Բրէ՛ ներգործութիւն
հաւատոյ, երկրպագութեան, զըզ-
ման, առաջադրութեան ու փախա-
քանաց սիրտդ ընդունելու զ՛ Յիսուս:

ժԶ. Ի՞նչ որ վրադ մէկ սնտոխ ու
աւելորդ զարդարանք մը ունիս նէ,
ջանս վերցընել ու անոր դիմը տղը-
մու թիւն տալ աղքատներու:

ժԷ. ()ըր երկու անգամ ջանս՝
որ ներգործութիւն զըջման ընես՝
պահնելով խաչելու թիւնը:

ժԸ. Ընտանաց արթնցածիդ
պէս առանց արնտընալու ելիր ան-
կողմէնէն, որպէս զի օրուան սկիզբը
թուլութեամբ ու ծուլութեամբ
ըլլայ:

ժԹ. Օրկէ՛ զքեզ մէկ զըօսան-
քէ մը, թէպէտ և պատշաճ ու ան-
վնաս բան մը ըլլայ:

Ի. ()րուան մէջ քիչ մը ատեն
կարդաս մէկ հոգևոր գիրք մը:

ԻԱ. Իրիկունը պառկելէդ առաջ
քննութիւն ըրէ խղճմտանքիդ:

ԻԲ. Սէղանէն գուրս օրուան մէջ
մ՛ ուտեր մի՛ խմեր բան մը առանց
հարկաւորութեան:

ԻԳ. ()ըր իրէք անգամ կտրէ-
քու կամքդ, նուիրելով սուրբ Ըն-
տուածածնայ ան ճգնութիւնս:

ԻԴ. Ունեցած կերակրէդ կամ
նսխաձաշիկէդ ջանս որ բաժին մը
հանես աղքատի:

ԻԵ. Գնա այցելութիւն մը ըրէ՛

Չիտ

այսպէս ալ միտումն զարգացի

բանտը եղողներուն, կամ հիւանդի մը. կամ թէ մէկ բանով մը միւթ թարու թիւն տուր նեղու թեան մէջ եղողներուն:

Ի.Ձ. Սերմեռանդու թիւն ընելով սուրբ Մտուածածնայ, իրեն գթութեանը յանձնէ զանոնք, ոչ որ մահացու մեղքի մէջ կը գլտնուին նէ:

Ի.Ե. Վայէ որ խոնարհական դորձք մը ընես սուրբ Մտուածածնայ սիրոյն համար:

Ի.Ը. Սանա՛ որ մարմնաւոր ապաշխարանք մը քաշես խոտովանահօրդ հրամանովը:

Ի.Թ. Իւարի ու հոգևոր գործքերու մէջ նայէ որ ծուլութիւն չընես:

Լ. Ինչպիսիք արած կենայով ըսէ եօթը Փառք հօր ՚ի պատիւ եօթը ցաւոյ սուրբ Մտուածածնայ:

Լ.Ա. Եւրոպիայի ինդրէ՛ սուրբ Մտուածածնէն աս ամուռն միջի բրած պակսութիւններուդ համար:

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՕՐ

Թե՛ ինչո՛ւ համար աս բաժանակ չիսնուանողքիդ պէտք է ընել:

Ա. Հողւոյդ փրկութեանը համար մեծ կարօտութիւն ունիս սուրբ Մտուածածնայ: Թէ որ անմեղ ես, գիտցիր որ քու անմեղութիւնդ մեծ վտանգի մէջ է: Ինչպիսիք քանի մարդիկ որ քան դքեղ աւելի անմեղ էին, ինչպիսիք մեղաց մէջ ու դատապարտուեցան: Թէ որ ապաշխարող ես, գիտցիր որ հաստատուն մնալք ապահով չէ: Ինչպիսիք սովորութիւններդ, ան առիթները ու ան հին բարեկամներն որ ունիս, կրնան զքեզ նորէն ձգել: Թէ որ մեղաւոր ես, գիտցիր որ մեծ կարօտութիւն ունիս սուրբ Մտուածածնայ, որպէս զի կարենաս դառնալ ու զղջալ մեղացդ վրայ: Սկսար շատ անգամ ապաշխարել, ու չիկրցար զլուսհանել. գիտցիր որ եթէ սուրբ Մ.

տուածածնայ միջնորդութիւնը չըլ-
լար նէ, ինչուան հիման կարելի է որ
կորսուած ըլլայիր:

Բ. Ըստ ամուսան ջերմեանդու-
թեամբ կրնաս վաստրկիլ սուրբ Ըս-
տուածածնայ պաշտպանութիւնը ու
քու հոգեւոյդ փրկութիւնը: Ընկա-
րելի է որ ասանկ գթած մայր մը մը-
տիկ չընէ իր բարեպաշտ զաւկին:
Սէկ վարդարան մը բսելու համար,
ու մէկ ծամապահութիւն մը ընե-
լու իր սիրոյն, մասնաւոր շնորհք-
ներ աուեր է մեծամեծ մեղաւոր-
ներու. ուստի մտմտա թէ ինչ բա-
րիքներ պիտի ընէ քեզի աս ամ-
սուանս համար՝ որ բոլոր իր ծառայ-
ութեանը պիտոր նուիրես:

Գ. Սայ քեզի՝ թէ որ կորսնցը-
նես զաս շնորհքս. վսյ՝ թէ որ սկը-
սիս, ու քանի մը օրէն անհոգ ըլլա-
լով թողուս զաս ջերմեանդու-
թիւնս: Ս՛վ գիտէ թէ աս վերջի
շնորհքն է որ Ըստուած կու տայ
քեզի մեղքէդ դաճնալու համար:
Ս՛վ գիտէ թէ աս ջերմեանդու-

թեանս հետ կապուած ըլլայ քու
հոգեւոյդ փրկութեան ապահովու-
թիւնը: Եւ ս՛վ գիտէ թէ աս ա-
միսս ըլլայ քու կենացդ ետքի ամի-
սը: Արեւնալը մէկ պզտի բանով մը
վաստրկիլ ասանկ մեծ ու զօրաւոր
պաշտպանութիւնը սուրբ Ըստու-
ածածնայ, ու անհոգ ըլլալով չընել
զանիկայ, ինչ մեծ ցաւ ու խղճմը-
տանք պիտի ըլլայ մեռնելու ատե-
նը: Ընէկ մամըտա ու պատրաստէ
զքեզ:

Պատառ: Սուրբ Ըստուածածնայ
մէկ պզտի պատկերը կամ հանդեր-
ձը պահէ՛ք քու վրագդ, ու երբեմն միտ-
քդ բերելով զսուրբ կոյսը, սրտանց
բռնէ՛ իրեն. Ս՛վ ամենասուրբ կոյս
Սարիամ, քեզի կու տամ իմ սիր-
տըս ու հոգիս: “Ընկանիմք առաջի-
քս Ըստուածածին, և աղաչեմք զս-
նարատ զկոյսդ:”

ԱՂՍԹԻՔ

Մայր ողորմութեան և ապաւեն
 փրկութեան սուրբ կոյս Սարիամ,
 կը հատամ ու կը դաւանիմ ճմա-
 րիտ սրտով, թէ դուն ըլլալով մայր
 Մտուծոյ՝ միջնորդ եղար մեր փրկ-
 կութեանը: Վարօտ էինք քու կին
 կուսական մայրութեանդ, որպէս
 զի ունենանք մեր Հիսուս փրկիչը:
 Ինչպէս որ առանց քու աստուածա-
 մայրութեանդ որդի էինք դատա-
 պարտութեան, ասանկ ալ առանց
 քու բարեխօսութեանդ ամենեւին
 տկար ու անպիտան ենք մեր հոգին
 փրկելու: Վիտեմ որ մայրական սի-
 րովդ կ'ուզես իմ փրկութիւնս. ես
 ալ անոր կը փափաքիմ, սակայն մե-
 ղաւոր ըլլալով չեմ ճանչնար հո-
 դւոյս փրկութեան պէտք եղած բա-
 ները: Վիտեմ որ կը հոգաս ու կը
 խնամես քու որդիքդ. ես ալ կը փա-
 փաքիմ անոնց մէջը գտնուիլ, որ
 պէս զի արժանի ըլլամ քու կին ինա-

մոցդ, սակայն անարժանութիւնս
 կը վախցընէ զիս. ուստի կ'աղաչեմ
 զքեզ մայր ողորմութեան, մխիթա-
 ընէ զիս քու կին քաղցր սիրովդ. տուր
 ինձի անանկ չնոր հք մը, որ ասկից
 ետքը ճմարիտ որդիութիւն ընելով
 քեզի, աղէկ ծառայեմ Մտուծոյ
 ու հասնիմ յաւիտենական փրկու-
 թեան:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

Հոգոյ փրկութեան վրայ:

Ա. Եկեր ես աշխարհ մինակ քու
 հոգիդ փրկելու համար: Աղէկ գիտ-
 ցիր աս բանս: Էս եկեր ուտելու
 խմելու համար, կամ մեծնալու՝ հա-
 գուելու և կապուելու, ևս առաւել
 մեղանչելու համար. այլ եկեր ես մի-
 նակ փրկելու քու հոգիդ: Ի՞նչ օ-
 գուտ է քեզի աշխարհս վատրկիլ,
 ու քու հոգիդ կորսընցընել: Թէ
 թագաւոր ես, կամ փիլիսոփայ, կամ

մեծ կարգացող, ինչ կրնան օգտել
քեզի քու իշխանութիւնդ ու քու
կին գիտութիւնդ՝ երբոր չես սոր
ված քու հոգիդ փրկելը :

Բ. Սարգոսս փրկութիւնը ա
նանկ բաներէն չէ, որ ապահով ըլ
լայ : Ստրկով ծախու չառնուիր, այլ
աշխատանքով կը վաստակուի, ու
մէկ մահացու մեղքով ալ կը կոր
սուի : Փրկուելու համար չօգտեր որ
մէկ հեղ մը անմեղ ու սրբուած ըլ
լայ մեղքերէն, այլ պէտք է որ նոյն
սրբութեան ու անմեղութեան մէ
ջը մնայ ու տեւ ինչուան մահը : Ի՞նչ
ապահովութիւն ունիմ ես իմ հո
գիս խաղտելու : Ի՞նչ կեանքս ան
ցուցեր եմ մեղքով ու անհոգու
թեամբ : Հիմակուան կեանքս ա
նանկ խառնափնդոր բան մըն է, որ
ես ալ չեմ՝ ճանչնար : Ի՞նչ կից ետքի
կեանքս ինչպէս պիտոր ըլլայ, Ի՞ն
չտուած գիտէ :

Գ. Հոգին կորսնցընելը անանկ
ֆիսս մըն է, որ գեղ ու ճար չունի :
Թէ որ կորսնցընեմ մէկ առնելիք

մը, կամ դատաստան մը, կամ ա
ռողջութիւնս, կարելի է որ մէկ ճա
րը գտնուի . սակայն թէ որ անգամ
մը կորսնցուցի իմ հոգիս, յաւի
տեան պիտի կորսուի : Թէ որ մէկ
ձեռքս անպիտան ըլլայ, մէկալը կը
մնայ՝ որ կրնամ բանեցնել . թէ որ
մէկ ոտքս սախտի, մէկալով կրնամ
քալելու ճարը գտնալ . թէ որ մէկ
աչքս կուրնայ, մէկալով կրնամ տես
նալ . բայց հոգիս որ մէկ է՝ երկուք
չէ, կամ միայն կրնայ փրկուիլ, և
կամ միայն դատապարտուի : Հա
պա ինչու համար ասանկ անհոգ եմ
իմ հոգիս փրկելու . կ'երեւնայ որ իմ
փրկութիւնս ապահով եմ դրեր
մտքիս մէջը : Ապարիմ առանց մըտ
մըտալու, և չիտեմ թէ հիմա որ
մեռնելու ըլլամ նէ՛, ուր պիտի եր
թայ իմ հոգիս :

Պատասխան : Գնահատուած ա
ծնայ պատկերի մը առջև, ու բոլը
րով սրտիւ յանձնէ քու հոգիդ ի
րեն բարեխօսութեանը, ու ըսէ .
“ Լըստին Լստուծոյ և մայր, բար-

ճրասցի պատիւ քո ինև, և ցուցցի
փրկու թիւն իմ քեզ :

ԱՂՈԹՔ

Թէ որ այսչափ սիրելի է ինձի
աշխարհիս ողորմելի կեանքը, որչափ
աւելի պիտի ըլլայ յաւիտենական
երանու թիւնը արքայութեան մէջ.
սակայն ես կուրցած ըլլալով ու խա-
ւարեալ մեղքով չեմ տեսներ իմ
բարիքս, չեմ ճանչնար իմ օգուտս.
ուստի արքայութիւնը փնտրուելու
տեղ, ու իմ հոգւոյս փրկութեան
ետեկն իյնելու, աշխարհիս ունայն
բաներուն հետ եմ, մանաւանդ թէ՛
հոգիս կորանցընելու: Ա՛յ աղաչեմ ըզ-
քեզ մնայ Մատուծոյ դուն որ միջ-
նորդ եղար փրկութեան, լուսաւորէ
իմ խաւարեալ միտքս, կակրղցնուր
իմ բարացեալ սիրտս, որ ճանչնամ
իմ հոգւոյս յաւիտենական բարի-
քը, ու անոր փափաքելով ծառայեմ
Մատուծոյ բողոքով սրտիւ, ու քու
կին զօրաւոր միջնորդութեամբդ
հասնիմ արքայութիւն :

ԵՐՐՈՐԴ ՕՐ

Մարդոս նոզոյն ազնուորեսեր վրայ :

Ա. Մամլտա թէ քու հոգիդ որ-
չափ ազնիւ ու պատուական բան մըն
է՛ Մատուծոյ ստեղծուածը ըլլալուն
համար: Ո՛վ ըրեր է դքեզ. — Մա-
տուած իր ձեռքովը: Որո՞նք պատ-
կերքն ես դուն. — Մատուծոյ պատ-
կերքը ու նմանութիւնը, Մա լուսածս
անանկ ճշմարտութիւն մըն է, որ
Մատուած յայտներ է իր անստելի
խօսքովը. « Մար Մատուած ըզ-
մարդն ՚ի պատկեր իւր. լատ պատ-
կերի Մատուծոյ արար զնա », (Ծննդ.
Ա. 27): ինչու համար այսչափ ան-
հոգ ես քու հոգւոյդ ազնուութեան
նը վրայ, ու մեղքով կ'ուզես կոր-
սնցընել զաս գեղեցիկ Մատուծոյ
պատկերքը՝ սատանային փորձու-
թիւններուն մտիկ ընելով :
Բ. Սամլտա թէ որչափ ազնիւ
պիտի ըլլայ քու հոգիդ, որ ծախու-

առնուած է աստուածային արիւնով : Վիտես որ կորսուած է իր յաւիտեանական դատապարտութեամբ . ո՞վ խալըսեց զքեզ սատանային ձեռքէն . — Խալըսեց Տայրն երկնաւոր : Ի՞նչ բանով խալըսեց . — Ընդ օտի տալով և ոչ արծաթ , այլ անգին ու պատուական կեանքովը ու արիւնով իր միաձին որդւոյն : Ի՞նչ է մտմբտա , թէ աս ազնիւ հոգիք , որ ասանկ սուղ առնուած է , նորէն պիտի կորսընցընես մէկ չոր ցանկու թեան մը համար , կամ մէկ ոչինչ բանի մը համար :

Գ . Ստմբտա հոգւոյդ ազնուութիւնը , որ ստեղծուեր է յաւիտեանական երանութեանը համար : Վիտես որ որդեգրած ես երկնաւոր թաղաւորին , ու մէկ օր մը պիտի նրստիս իր քովը , ու իրեն հետ թաղաւորութիւն քչես : Պէտք է թաղաւորի տղին որ իր հօրը տունը աղէկ կենայ ու բարի բլայ , որպէս զի ինքն ալ ետքը կարենայ թագաւորել : Ստածէ թէ դուն որ ժառանգ ես

արքայութեան , քու կին կեանքդ ինչ բանով կ'անցընես , ու ո՞ր կը կենաս : Թէ որ աղէկ մտմբտաս նէ , կը գտնաս զքեզ տղմոյ ու աղտեղութեանց մէջ անբան անասունի մը պէս : Ս'երևնայ որ չես ամբնար ու չես վախնար՝ Ըստուծմէ հեռանալուդ համար :

Պարտաւ : Ի՞նչ է քննութիւն մը բրէ խղձմտանքիդ . ու թէ որ մահացու մեղք մը գտնաս հոգւոյդ վրայ , դնա՛ շուտով խոստովանանք եղիր , ու առաջագրէ՛ որ մէյ մ'ալ չիսիս ան մեղքին մէջը : Ս'իջնորդ բռնէ՛ քեզի սուրբ Ըստուածածինը , ու բսէ՛ իրեն . « Զեռն տուր անկեղոյս , տա՛ ճար երկնային . փառաւորեա՛ զորդիդ քո՛ ի քեզ՛ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն » :

ԱՂԹԻՔ

Գիտեմ ճմարիտ հաւատքովս , թէ ստեղծուած եմ Ըստուծոյ , ու

իմ հօգիս իրեն պատկերն է : Կորսուած էի յաւիտենական դատապարտութեամբ, ու ծախու առնուեցայ Յիսուսին ամենասուրբ արևնովը, զարդարուեցայ աստուածային շնորհքներով ու եղայ որդեգիր և ժառանգ արքայութեան : Բայց ես անհօգ ըլլալով աս ամէն բարերարութեանց, նորէն սեցուցի իմ հօգիս՝ աղտոտեցի զանազան մեղքով, հեռացայ իմ ստեղծողէս, գերի եղայ աստանայի : Կաղաչեմ զքեզ, սուրբ կոյս Սարիամ, դուն որ քու կին անարատ մաքրութեամբդ արժանի եղար մայր Բատուծոյ ըլլալու, ընդունիս իմ ապաշխարութիւնս, որ բողբով սրտիւ դառնալով մեղքերէս, կը ցաւիմ ու կը զղջամ իմ կուրութեանս վրայ, որով իկրցայ ձանձնալ հօգուոյս առնուութիւնը : Տուր ինձի հաստատուն շնորհք մը, որով կարենամ ասկից ետքը սուրբ սրտով ծառայել Բատուծոյ, ու արժանի ըլլալ երկնից արքայութեան :

ՉՈՐՐՈՐԴ ՕՐ

Մարմնոյ առողջութեան վրայ :

Ա. Կը մեղանչես մարմինդ հանգչեցրնելու համար, ու չես մամուտար որ մեղք ընելովդ՝ աւելի ֆիսաս կուտաս անոր : Սի կարծեք թէ հօգիդ կորսնցրնելով՝ մարմինդ առողջ կը պահես : Վիտցիր որ կամ երկուքն ալ պիտի ըլլան երանելի, և կամ երկուքն ալ դատապարտելի : Թե որ դատապարտուի ատ քու մարմինդ, չունիս ուրիշ ո՞՞ ալ, որ կարենաս զանիկայ երանելի ընել : Վը ժոխքին տանջանքը բոլոր մարմինդ իր ամէն բաներովը պիտոր տանջէ : Էթէ աս աշխրբբիս ցաւերուն պէս, որ կ'ըլլան մինակ մէկ տեղ մը, կամ մէկ մասնաւոր անդամի մը վրայ : Եանք կու գայ քեզի մէկ զլխու ցաւ մը քաշել, պինդ անկողնոյ մը վրայ պառկիլ, անհամ կերակուր մը ուտել, ու անհանգիստ տեղ մը նրս

տիւ : Հապա ինչպէս պիտի դիմանանս դժոխքին միջի սաստիկ տանջանքներուն :

Բ. Որչափ փափաք ու հպարտութիւն ունիս նէ քու մարմինդ զարգարելու, գիտցիր որ մեռնելէդ ետքը գլուխդ պիտի մնայ մէկ չոր ոսկոր մը առանց մորթի, առանց աչքի, առանց բերնի, առանց լեզուի. ձեռքդ սորդ առանց մտի. ու բոլոր մարմինդ մէկ աման մը գարշահատութեան ու որդերու : Եսոնցմէ ՚ի զատ՝ թէ որ դժոխքը երթալու ըլլաս նէ, բոլոր մարմինդ ներսէն զբրսէն կրակին մէջը պիտոր էրի միկի. երեսդ սենայ, մաղերդ կորնձմրտի, լեզուդ կապուի, աչուրներդ կրակի պէս վառուի, ու դուն ալ պիտի ըլլաս սատանայի մը պէս : Եղէկ մըտ մըտա զասոնք :

Գ. Թէ որ մարմինդ ուղեկայ մեղանել, պէտք է որ դուն քեզի ըսես . ինչ օգուտ ունի աս մարմնոյս կամքը կատարել, ու ետքը դժոխքին կրակով յաւիտեան էրիլ ու տալու

ըիւ . քիչ մը ատեն զուարճանալ, ու ետքը յաւիտեան տանջուիլ : Թէ որ կ'ուզես մարմինդ սիրել ու զարգարել, ջանա անանկ սիրես ու զարգարես, որ ըլլայ քեզի ճշմարիտ ազուորութիւն մը ու պարծանք արքայութեան մէջ :

Պարտ : Երէ մէկ մասնաւոր ճշգնութիւն մը, որ ըլլայ օպաշխարանքան աւելորդ զբօսանքներուն դէմ՝ որ ըրեր ես մարմինդ հանգչեցնելու համար . աղաչելով սուրբ Եստուածածինը, որ քեզի բարեխօս ըլլայ : Գիտցիր որ սուրբ Եստուածածինը չէ թէ միտակ իր ջերմութան գներուն հողոյն պաշտպանն է, այլ և իրենց մարմնոյն, ինչպէս՝ որ շատ հրաշքներ տեսնուած է . անոր համար աղաչէ՛ զինքը, ու բռն ջերմութեան դութեամբ . “ Հիւսեա՛ միաջն՝ զմեղուցելոյս դառն հեծութիւնըդ քուսդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց . . . զի ՚ի քէն օգնեալ և բարեգործեալ . . . կեցից Երիւստոսի որդւոյ քո և տեառն ” :

ԱՂՈԹՔ

Վայ իմին կուրու թեանս որ մու-
նալով հոգւոյս ազնուութիւնը, ու
Մտուծոյ յաւիտեանական բարիքն
որ ինծի համար պատրաստեր է,
մարմնոյս հանգստութեանը ետևէ
ինկեր եմ: Չեմ մտմտար որ մար-
մինս հոգալով, զէն կու տամ հո-
գւոյս, ու հոգիս կորսնցընելով մար-
մինս ալ մէկտեղ պիտի կորսնցընեմ:
Ո՛վ Մտուած իմ Հիսուս, լուսա-
ւորէ իմ խաւարեալ միտքս, որ ճանչ-
նամ իմ ճշմարիտ հոգևոր բարիս,
ու չխաբուիմ աշխրբբիս սուտ բա-
ներէն: Տուր ինծի քու կին շնորհ-
քըդ, որպէս զի սիրեմ նեղութիւն
բաշեւը քեզի համար, ու փախչիմ
աշխրբբիս հանգստութենէն, որ
զիս կը հեռացընէ քեզմէ: Ար փա-
փաքիմ քեզի հետ մեռնիլ խաչին
վրայ, քան թէ առանց քեզի թա-
գաւորել աշխրբբիս մէջը: Ո՛րք հան-
գըստութիւն է ինծի քու կին կալքդ

կատարելը ու չարչարուիլը, քան թէ
առանց քու կամացդ մեծութեան
հասնիլ ու փառաւորուիլ: Ի՞նչ բա-
րիք որ ունիմ՝ քեզմէ է, ու ի՞նչ ա-
զէկ բանի ալ յոյս ունիմ նէ, ան
ալ քեզմով պիտոր ըլլայ. ուստի կ'ա-
ղաչեմ զքեզ, փրկիչ իմ Հիսուս,
միջնորդութեամբ ամէնօր հնեալ
սուրբ մօրդ, արթնցուր իմ թըմ-
բած սիրտս, զքեզ սիրելու, զքեզ
փնտրելու, զքեզ տեսնալու, ու
յաւիտեան ժառանգելու:

ՀԻՆԳԵՐՈՐԳ ՕՐ

Ժամանակի վրայ:

Ա. Կ'անցնի ժամանակը, ու ա-
նոր հետ մէկտեղ իմ կեանքս ալ կը
պակսի: Տասնըհինգ, քսան, եր-
սուն, քառսուն տարիներն որ պակ-
սեր են իմ կեանքէս, մէյ մ'ալ չեն
դառնար. ու չիտեմ թէ որչափ մնա-
ցեր է, թէ պէտ պիտեմ որ քիչ մնա-

յաճ պիտոր ըլլայ : Եւամանակ ըսածնիս՝ կարճ բան մըն է . օրերը կ'անցնին առանց խմանալու : (Թէ որ աս Եւամանակս յախտենալիանու թեան հետ կընթ զարնելու ըլլանք նէ, չէ թէ միևնակ կարճ է, այլ և բան մը չէ անոր քովը :

Բ . Եւամանակին կարճութիւնը ունի հետը մէկ անգին օգուտ մը, որ կրնանք իր կարճութեանը մէջ վաստրկիլ մէկ յախտենալիան երանութիւն մը : Եւամանակին վայրկեան կրնամ ինծի համար մէյմէկ աստիճան փառաց եւեղընել արքայութեան մէջ : Վիչ մը ատեն թէ որ աղէկ մտմտամ հոգւոյս բաները, կրնամ խալտել իմ հոգիս ստանալիս ձեռքէն, ու դնել Եւտուծոյ ձեռքը : Եւթէ ամէն օր քիչ մը ատեն աղօթութի կամ պատարագ տեսնալու կամ հոգւոր գիրք մը կարդալու հետ ըլլամ նէ, կրնամ հեռանալ մեղքէն ու ապահով ընել իմ հոգւոյս փրկութիւնը :

Գ . Եւամանակին կարճութիւնը

ունի հետը մէկ մեծ վախ մըն ալ : Եւամանակին կրնամ մեղանչել, կրնամ մեռնիլ, կրնամ դատապարտուիլ : Այն ինչ, որ աս կարճ Եւամանակիս մէջ կրնայի սուրբ ըլլալ, ու դեռ ասանկ մեղաւոր մնացի : Կորսնցուցի Եւամանակս դատարկ բաներու մէջ . տղայութեան մէջ, խաղերու մէջ, զբօսանքի ու մեղքերու մէջ : Եւամանակին օգուտ ունիմ հիմայ ձեռքս առնել Եւամանակները դատարկ անցընելուս համար : Ախտի գայ օր մը, որ քիչ մը ատեն պիտոր խնդրեմ Եւտուծութեան ապաշխարելու համար, ու ան ալ պիտի չի գտնուի յախտենալու յախտենակց :

Պարտաւոր : Ասանաւոր աղօթք մը կամ ջերմեռանդութիւն մը ըրէ Եւտուծածանայ, գիտցիր որ ան ջերմեռանդութեան ատենը չէ թէ միևնակ դատարկ չանցնիր, հասցա մեծ մեծ բարիքներու ալ պատճառ կ'ըլլայ քեզի : Աւտի ըսէ՛ սուրբ Եւտուծածանայ . « Եւտուծածանայ օգնեալ վտանգեցելոյս գովեալդ՝ ի կա-

նայս . Տունը խոնարհեցո առ իմ
հաշտութիւն ճնօղդ Մատուծոյ ։

ԱՂՈԹՔԻ

Ի՛նչ մեծ բարիք է որ ինծի ըրեր
ես Մատուած իմ Յիսուս , տալով
ինծի ժամանակ որ պահսութիւն
ներս շտկելով հոգւոյս փրկութեան
ետեւ ըլլամ . սակայն ես անհոգ ըլ-
լալով չէ թէ մինակ դատարկ ան-
ցուցեր եմ իմ կեանքս , այլ մանա-
ւանդ մեղքով կորսընցուցեր եմ ան
աղնիւ ու անգին ատենը , որով կրք-
նայի քեզի ծառայել ու իմ հոգիս
փրկել : Աւստի բողբոլ սրտիւ կը
ցաւիմ ու կը զգջամ կորսընցելուս
վրայ , որ նորէն գտնալու ճարը չի-
կայ . բայց կ'աղաչեմ քու կին գթու-
թիւնդ , որ այսչափ համբերեր ես
իմին անկարգութեանս , տաս ինծի
քիչ մըն ալ ատեն , որպէս զի կա-
րենամ քու շնորհքովդ ապաշխա-
րել ըրածներուս վրայ , ու շտկել
իմ անթիւ պահսութիւններս : Ար

ինչդրեմ քեզմէ ալ սուրբ Մատու-
ծածին , որ կ'ուզես իմ հոգւոյս փրկ-
կութիւնը , բարեխոս եղիր Յիսու-
սին որ ողորմի ու տայ ինծի ժամա-
նակ ապաշխարելու . ես ալ կ'առա-
ջադրեմ հաստատ սրտով որ ասկից
ետքը իմ կեանքս անցընեմ Մատու-
ծոյ ծառայութեան մէջ : Ար փա-
փաքիմ մայր Մատուծոյ հաւատա-
րիմ մնալ որդիութեանդ մէջը , որ-
պէս զի աշխրբբիս վրայ վայելեմ մայ-
րական ինամքդ , ու ետքը արժանի
ըլլամ արքայութեան մէջն ալ ըզ-
քեզ փառաւորելու :

ՎԵՅԵՐՈՐԴ ՕՐ

Մանացու մեղաց վրայ :

Ա . Մամլտան թէ մահացու մեղք
բրած ատենդ ինչ ուզեր ես ընել :
Աւզեր ես քու կողմանեդ կուռիլ ու
ոտից տակ առնել քու տէրդ , քու
ստեղծողդ , քու հայրդ , քու փրկ-

կիւղ, քու հօգւոյդ փեասն, քու Մտտուածդ, քու ամէն բարիքդ ու մեծութիւնդ: Այլ որ ըրածդ ինչ ամբարտաւանութիւն է, որպիսի ապրտամբութիւն, ապերախտութիւն ու անկարգութիւն: Արմնցուցիր Մտտուծոյ շնորհքը, Մտտուծոյ որդեգրութիւնը, առջի կենացդ բարեգործութիւնը, արքայութեան ժառանգութիւնը, ու երկընթէն դժոխքը զտրեցար:

Բ. (Թ)է որ մեղաց մէջ էս նէ՝ վայքեզի. զիտցիր որ Մտտուած է քու թշնամիդ, զիտցիր որ սատանային դերին էս: Ար զբօսնուս, ժուռ կուգաս, կը պառկիս, կ'ելլես ու կը խնւտաս. չիտես որ եթէ Մտտուած իր ձեռքը վրայէդ վերցնէ, մէկէն կը մեռնիս ու կը դատասպարտուիս: Հազարաւոր հրեշտակներ դժոխք ինկան՝ մտքով գործուած մեղքի մը համար. հապա դուն ինչո՞ւ այսչափ մեղաց տէր ըլլալէն ետև ապահօլ կը կարծես զքեզ: Ի՞նչ կուրութիւն է ասիկայ:

Գ. (Թ)է որ մեղքի մէջ ալ չես նէ, զիտցիր որ միշտ վտանգի մէջ էս մեղանչելու: Ա՛յէկ սաստիկ փորձութիւն մը, ու մէկ անյուսալի դիպուած մը կրնայ քեզի ըլլալ պատճառ մեղանչելու. մնասաւանդ ան ա տենը՝ երբոր դուն չես կարծեր: Հրեշտակը երկինքը մեղանչեց. Մզամ՝ դրախտին մէջ. Հօգա ու Պետրոս առաքեալ մեղանչեցին Վրիստոսի դպրատան մէջը: Ա՛յէկ մտմտա զասիկայ՝ որ դուն ալ եթէ հրեշտակի կեանք ունենաս, կամ Մզամայ անմեղութիւնը, ու առաքեալներուն շնորհքը, կրնաս մէկ վայրկեան մը մէջ սատանայ դառնալ: Ա՛տմտա զասնք ու վախցիր:

Պրոֆ: (Թ)է որ փորձութիւն ունենաս մեղանչելու, առ ձեռքդ սուրբ Մտտուածածնայ վարդարանը, ու ջերմեռանդութեամբ պահնելով զանիկայ, յանձնէ իրեն քուկին սիրտդ ու հօգիդ: Վիտցիր որ սուրբ Մտտուածածնայ յիշատակը կը պահէ զքեզ ամէն տեսակ փորձութիւննէ:

րէն . ու պղաչելով ըսէ իրեն . «Վա-
րեխօսեա՛ս վասն անձանց մերոց և ա-
ղաչեա զմիածին որդիդ : Փրկել ըղ-
մեզ 'ի փորձու թէնէ և յամենայն
վտանգից մերոց , » :

ԱՂԹՔ

Չիտեմ թէ ընտօր լամ ու ցա-
ւիմ մեղքերուս վրայ , փրկիչ իմ
Հիսուս , որ մոռնալով քուկին մե-
ծութիւնդ , քու անթիւ բարերա-
րութիւններդ , ուղեցի աւելի սա-
տանային ծառայել , քան թէ քու
կամբդ կատարել : (Թէ որ մէկ բա-
րէք մը մինակ ըրած ըլլայիր ինծի ,
պէտք էր բոլոր կեանքս քեզի տայի .
նւր մնաց որ ամէն բարիքս քեզմէ
է , ու ես ալ առանց քուկին պահ-
պանութեանդ ոչինչ եմ :) Այ իմին
ապերախտութեանս , որ կուրցընե-
լով իմ հողիս՝ չէ թէ մինակ չու-
ղեցի ճանչնալ քուկին բարերարու-
թիւնդ , այլ և ծանր մեղքերովս
սրդողցուցի զքեզ իմ տէրս , իմ փրը-

կիչս , իմ բարերարս , իմ դատա-
ւորս : Աստի կ'ամբնամ ու կը վախ-
նամ առջևդ երևնալու . զիտեմ որ
արժանի եմ դատապարտութեան ,
արժանի եմ ամէն պատժոյ . սա-
կայն կը հաւտամ որ քուկին ողոր-
մութիւնդ շատ աւելի ու անթիւ է
քան զիմ մեղքերս . չէ թէ մինակ
կը ներես ողորմութեամբ ու կը թո-
ղուս մեղքերուս պատիժները , այլ
և կու տաս ինծի քու շնորհքդ , որ
ասկից ետքը մեռնիլս յանձն առ-
նում , քան թէ մահացու մեղքով
մը զքեզ սրդողցընեմ : Ար ցաւիմ
ու կը զզուիմ ըրած մեղքերէս . կ'ա-
ռաջագրեմ ու կը փափաքիմ աս-
տուածային շնորհքովդ մնալ ու մեռ-
նիլ քու ծառայութեանդ մէջը , փա-
ռաւորելով զանհուն ողորմութիւնդ ,
որ ցըցուցեր ես ինծի :

ԵՕԹՆԵՐՈՐԻ ՕՐ

Մեղաց պատահաներուն վրայ :

Ա. Մտուած կրնայ պատժել մեղքը՝ ինչպէս որ ուզենայ : Մարդիկ մէկմէկէ փաս քաշելով շատ հեղ կ'ուզեն ռիտերնին աւնուլ, ու չեն կրնար . սակայն Մտուած ասանկ չէ : Հերիք է որ կամենայ, մէկէն կ'ըլլայ ուղածը : Արնայ պատժել զքեզ վերցընելով քու առողջութիւնդ, ունեցած ասորանքդ, ընտանիքդ ու քու կեանքդ, հերիք է որ ուզենայ : Թիէ որ մեղաց մէջ ես նէ, կրնայ հիմայ ալ պատժել զքեզ յանկարծակի մահուամբ մը, հերիք է որ ուզենայ : Մամբտան թէ գիտես կամ կրնաս մի իմանալ Մտուածոյ կամքը : Արբոր չիտեսնէ, ինտոր կրնաս մեղանչել ու անհող կենալ քու մեղքիդ մէջը :

Բ. Մտուած կ'ուզէ անտարակոյս պատժել զմեղքը : Թիէ որ մեղք

ըրեր էս, գիտցիր որ Մտուած կ'ուզէ քեզմէ մէկ ապաշխարանք մը, կամ աս աշխարհի մէջը, և կամ անդին՝ ի հանդերձեայն . կամ զղջալով մեղքիդ վրայ, և կամ դժոխքը տանջուելով : Մտամ ու Աւա թուղութիւն առին իրենց անհնազանդութեանը, փրկուեցան ու սուրբ եղան . սակայն իրենց մեղքին մարմնաւոր պատիժը կը քաշուի կոր ինչուան հիմայ : Մըտեր թէ մեղք մը աւելի կամ մեղք մը պակաս եմ ըրեր, ինչ է եղեր . ինչու որ պատիժ մը աւելի, պատիժ մը պակաս ունենայը շատ մեծ բան է :

Գ. Մտուած հիմայ ալ կը պատժէ կոր քու մեղքերդ : Մն հիւանդութիւնները, ան քու տանդ ձախորդութիւնները, կորսնցուցած պատիւդ, յուսերուդ դատարկ ելլելը, քու թշնամիներուդ զրպարտութիւնները, այդչափ սաստիկ ու անհասնում փորձութիւնները, չըլլայ թէ քու հին մտցած մեղքերուդ համար ըլլան, որ դուն ամե-

նեւին շէս մտմբտար : Սակայն թէ որ ամէն կտորք կատարուեր է, ու ամէն ուզածդ ալ յաջողութեամբ կ'ըլլայ, գիտցիր որ աս պատիժը աւելի մեծ է քան զառջինը : Ինչու որ անով հաստատ կը կենաս քու գէշ վարքիդ մէջը, ու մեղք մեղքի վրայ դնելով՝ կրակդ կը շատընես դժոխքին մէջը : Ըսանց վրայ՝ թէ որ խղճմտանքդ ալ կորսնցուցեր էս, ու Ըստուծոյ պատուհասներուն վախն ալ չունիս սրտիդ մէջը, վայ քեզի : գիտցիր որ բոլորովին պատժուած էս աստուածային սաստիկ արգաբուժեամբը : Եթէ կայ մէկը, որ կարօտ ըլլայ մինակ սուրբ Ըստուածածնայ պաշտպանութեանը, գիտցիր որ դուն էս :

Պատու : Ինկիր սուրբ Ըստուածածնայ պատկերի մը առջև, ու ինդրէ իրմէ որ Ըստուծոյ պատիժը հեռացնէ քեզմէ : Քանն որ մեղքէ փախելով շտկես քու վարքդ : Եվ գիտէ թէ Ըստուած ինչուան հիմա չկատժեր զքեզ սուրբ Ըս-

տուածածնայ բարեխօսութեանը համար . ուստի լակ իրեն բոլորով սրտիւ . “ Բարեխօսեան, ինդրեան, աղաչեան . զի ըստ անձառելի մարտութեանդ և ճազ դամիդ հաւատամ զընդունելութիւն ” :

ԱՂԹԻՔ

Վայ ինձի, որ ճանչնալով Ըստուծոյ ամենակարող ըլլալը, ու գիտնալով թէ մեղքէն կը գարշի, կ'ատէ ու կը պատժէ ընողները, անհող եմ եղեր զգուշանալու, մանաւանդ թէ ուզեր եմ մեղանչել առանց մտմբտալու Ըստուծոյ արդարութիւնը : Գիտեմ, տէր, որ շատ անգամ արժանի եղեր եմ քու կին բարկութեանդ իմ մեղքերուս համար . սակայն աստուածային ողորմութեանդ իմ ապաշխարութիւնս ուզելով, անպատիժ թողուցեր է իմ մեղքս : Եւ որ պատժէիր, արդար դատաստանդ կը ցրցնէիր . բայց ողորմեցար, քաղցր բարութիւնդ է .

ընցընելով ինծի, որպէս զի դառնամ մեղքէս, պատկառիմ ըրածներէս, սիրեմ ողորմած տէրդ, ու ծառայելով քեզի՝ փառաւորեմ քու կին մեծութիւնդ: Այլ որովհետեւ ես ինծի տկար ըլլալով չեմ կրնար հաստատ մնալ առաջադրութեանս վրայ, կ'աղաչեմ զքեզ սուրբ Աստուածածին, եղիբ ինծի օգնական ու պաշտպան, քու մայրական խնամքովդ պահէ՛ զիս սատանային փորձութիւններէն, որ չըլլայ թէ մեղանչելով սրգողցընեմ իմ քաղցր փրկիչս, ու զրկուիմ իրեն անուշ տեսութենէն: Ար փափաքիմ հաս քաշել մեղքիս պատուհասը, որպէս զի խալըսիմ յաւիտենական տանջանքէն:

ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

Մանուս վրայ:

Ա. Պէտք է որ մեռնիմ մէկ օր մը. պիտի թողում իմ ընտանիքս, բարեկամներս, ունեցածս, ու այլ ամէն բաները՝ ինչուան աս մտայնես ալ: Աստեղի բնակութիւնս պիտոր ըլլայ որդնալից գերեզմանը. իսկ անգիլինը յաւիտենական տեղ մը, աղէկ թէ գէշ, չեմ գիտեր: Այլ սա՞ս անանկ ճմարտութիւն մըն է, որ կարօտութիւն չունի հաւտալու. վասն զի ամէն օր կը տեսնամ կոր իմ աչքովս: Ար մեռնին ճերերը, կը մեռնին պզտիկները, կը մեռնին աղբբոսները, կը մեռնին ունեւորները, կը մեռնին մեղաւորները, կը մեռնին սուրբերը. մեռաւ սուրբ Աստուածածինը, մեռաւ Յիսուս ալ. ուստի պէտք է որ ես ալ մեռնիմ:

Բ. Գիտեմ որ պիտի մեռնիմ.

բայց թէ ներ կամ ինչպէս . արդեօք տան մէջ, թէ եկեղեցոյս . նստած տեղս, թէ քայլելու ատեն, ան չի տես: Արդեօք մէկ պղտիկ տկարու թեամբ մը, թէ մէկ ծանր հիւանդու թեամբ, կամ յանկարծակի մահ հուամբ, չեմ գիտեր: Արդեօք ասկից երսուն տարիէն՝ թէ քսան տարիէն . ո՞վ գիտէ՞ կարելի է ըլլալ աս տարի, աս ամսուան մէջ, կամ աս գիշերս: Սինակ Աստուած գիտէ, ու ըսեր է ինծի թէ մահը գիշերուան գողն պէս ան ատենը կու գայ, երբոր չես կարծեր:

Գ. Ինչանկ կ'ապրիմ կոր, իբր թէ ամենեւին պիտի չիմեանիմ, ու չեմ ուզեր ալ միտքս բերել մահը: Թէ որ հիմայ մեռնելու ըլլամ, խղճմը տանքս անանկ աղտոտ է, որ աս աշխարհէն կրնամ մէկէն դժոխքը երթալ: Ար ճանչնամ զասիկայ ու կը վախնամ. բայց զճարը չեմ ուզեր մտնտալ: Ար ձգեմ ամէն ամիս ու օրէ օր, և քանի որ կ'երթամ նե՛ կը մտնեամ մահուան, ու մեղքերս

չեմ սրբեր: Թէ որ մեղքիս մէջը մեռնելու ըլլամ նե՛, ուսկից կրնամ գանդատիլ:

Պարտ: Օրունկ չըբելով գետինը, մամլտան քուկին հող ու մոխիր ըլլալ: Հողէ ստեղծած է մարմինդ, ու նորէն հող պիտի դառնայ: Աւտի խնդրէ սուրբ Աստուածածնէն, որ քովդ գտնուի հոգիդ տալու ատենը, ու ինքն ըլլայ քեզի բարեխօս Յիսուսին առջևը: Իսկ իրեն բոլորով սրախ . “ () Ժանդակեա՛ թեւոց աղօթիք՝ խոտովանեալ մայրդ կենդանեաց . և ելլցն իմ յերկրէս հօլտէ՛ առանց լկանաց հեռեւել ՚ի կեանս օթեվանայդ պատրաստութեան. զի թեթեւացի կատարածն իմ՝ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ ”:

ԱՂՈԹԻՔ

Մայր կենդանութեան ու ապաւէն փրկութեան սուրբ կոյս Սաբիամ, գիտեմ որ անտարակոյս պի-

տոր մեռնիմ: բայց չի գիտնալով թէ
 էրբ, ուր և ինչպէս պիտի մեռնիմ,
 կը դիմեմ խոնարհու թեամբ քու
 քաղցր մայրու թեանդ, որ կ'ուզես
 ու կը փափաքիս ամենուն փրկու
 թեանը: Վաղաչեմ որդիական պատ
 կառանքով որ ողորմիս ինձի, ու քու
 կին մայրական սիրովք ինամետս իմ
 հոգիս: որպէս զի կեանքս բարի
 գործքերով անցընեմ, ու ամէն ա
 տեն պատրաստ ըլլամ հոգիս քու
 ձեռքդ տալու: Վաղաչեմ զքեզ
 մայր ողորմու թեան, օգնական եղիր
 ինձի ան սոսկալի օրը, երբ որ հոգիս
 պիտի բաժնուի մարմինէս ու եր
 թայ ահա որ դատաւորիս առջևը:
 Դունիմ բարեգործու թիւն որ ար
 դարանամ: Զունիմ ինձի օգնական
 ու ապաւէն մը քեզմէ ՚ի զատ: Աւ
 բախացիւր իմ հոգիս քու պաշտպա
 նու թեամբդ: մխիթարէ՛ զիս քու
 կին մայրական սիրովք, որպէս զի
 արժանի ըլլամ արքայու թեան մէ
 ջը փառաւորելու քու ողորմու թիւնդ
 որ կը ցըցընես ինձի պէս մեղաւորին

ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

Դատաստանիկ վրայ:

Ա. Դատաստանին օրը պիտի ե
 րևնամ: Զիտուսի դատաւորին առ
 ջևը: Զիտուս իմ հայրս էր, ու ես
 զինքը չտրեցի: իմ տէրս էր, ու ես
 զինքը թողուցի: իմ Վստուածս էր,
 ու ես զինքը անարգեցի: Պիտի ի
 մայրնէ ինձի իմ ապերախտու
 թիւնս, իմ անհաւատարմու թիւնս,
 ու անհոգու թիւնս: Վստուածս ինչ
 երեսով կրնամ դիմել սուրբ Վս
 տուածածնայ, որովհետեւ իր սիրե
 լի որդին իմ մեղքովս խաչեցի: Եւ
 կրնար աղաչել պահապան հրեշտա
 կրս, որովհետեւ իր բարի յորդո
 րանքներուն ականջ չիտուի: Վշ
 խրքիս մէջը սատանան եղաւ իմ
 տէրս: ուստի ան օրն ալ՝ անիկայ
 պիտի ըլլայ իմ թշնամիս:
 Բ. Դատաստանին օրը աշխր
 քիս առջև պիտի կարդացուին իմ

ամէն մեղքերս : Ի՛նչ մեծ ամօթ
 պիտոր ունենամ ընկերներուս առ-
 ջւը , որոնց մէջը հրեշտակ մը կը
 սեպուէի . ծնողացս առջւը , որ զիս
 անմեղ կը կարծէին . խոստովանա-
 հօրս առջւը , որուն մեղքս չիզու-
 ցեցի : Պիտի կարգացուին ամէն մեղ-
 քերս , մաքիս ծածուկ խորհուրդ-
 ները , սրտիս փափաքներն ալ որ չեն
 կատարուած . ան ամբնալու հեշ-
 տութիւնները . ան մեղքերը՝ որ մի-
 նակ կամ մէկի մը հետ ըրեր եմ
 տանը մէջ , կամ վարպետին տունը ,
 կամ խանութը , կամ եկեղեցիաց
 մէջ : Ի՛նչ խախտութիւն պիտի ըլ-
 լայ ան ատենը :

9. Վատաստանին օրը պիտի առ-
 նում իմ վճիռս : Հիսուս Քրիս-
 տոս կամ պիտոր օրհնէ զիս սուրբե-
 բուն հետ , և կամ պիտի անիծէ մե-
 զաւորներուն հետ : Երբ կամ Հի-
 սուսին հետ պիտոր երթամ արքայ-
 ութիւն , կամ դատապարտելոց հետ
 դժոխքը : Եւ վճիռս չիկնար կախ
 մնալ քիչ մը ատեն , և ոչ ետ դառ-

նալ յաւիտեանս յաւիտենից : Ի՛նչ
 մեծ ուրախութիւն է լսելը : Հիսու-
 սին բերնէն , թէ Եկէք իմ հօրս օր-
 հնեալ զաւկները , վայելցէք իմ
 արքայութիւնս : Երբ ներհակ ի՛նչ
 ստկալի բան պիտի ըլլայ լսելը , թէ
 հեռացէք ինձմէ՝ ով անիծածներ ,
 ու զացէք տանջուելու յաւիտեա-
 կան կրակին մէջը : Եւ երկու վճիռ
 ո՞րը պիտի ըլլայ իմս : Այ ինձի ,
 զիտեմ որ դատաստան պիտոր եր-
 թամ , ու անհոգութեամբ չեմ մըտ-
 մըտար անոր վրայ :

Պորտա : Պառկելու ատենդ զիբ
 թէ Եստուծոյ առջևն ես , ու մամը
 տան թէ ինչ կ'ըսէ քեզի խղձմը
 տանքդ : Հիմակու ընէ միջնորդ բը-
 նէ քեզի սուրբ Եստուածածինը , որ
 ան ատենը պարզերես ելլես Եստու-
 ծոյ առջւը , ու ըսէ իրեն բարոյով
 սրտի . « Երացես տօն ինձ բեր-
 կրութեան՝ զօրն իմ տաղնապի , ոչ
 ջացուցիչ երկանցն Եւայի » :

ԱՂՊԹՔ

Քանի որ կը մտմբտամ իմ մեղքերս, կը դողամ ու կը սարսափիմ թէ ինչպէս պիտի երևնամ իմ դատաւորիս առջևը : Վիտեմ որ արժանի եմ ամէն պատժոյ . գիտեմ որ չունիմ բարիք մը, որ մեղքերուս դէմ գայ . այլ մանաւանդ Մարտոժոյ ինձի ըրած անթիւ ողորմութիւնները մոռնալով, բանի տեղ չեմ գրած ինձի տուած շնորհքները . ուստի անպատասխանի եմ, երբոր առջևս դնէ իր ըրած բարիքները, ու իմ ապերախտութիւնս : Սի միայն յոյս ու ապաւէն ճաննալով զքեզ ինձի սուրբ Մատուածածին, կ'աղաչեմ խոնարհութեամբ որ հիմակու ընէ բարեխօս ըլլաս ինձի համար, թողութիւն ինդրես մեղքերուս, ու տաս շնորհք մը որ ասկից ետքը Զանամ բոլորով սրտիւ ըրած մեղքերուս վրայ զղջալ, ու իմ ստեղծողիս կամբք կատարել, որպէս զի

պարզերես ելլելով իր առջևը՝ արժանի ըլլամ լսելու զան քաղցր ձայնը, թէ՛ Երկէք իմ հօրս օրհնեալ զաւակընէրը, ժառանգեցէք ձեզի համար պատրաստուած յաւիտենական արքայութիւնը . :

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

Դժոխքի վրայ :

Վ . Ո՛վ մեղաւոր, կը տեսնան զու ան ստեղծող կրակով ու ծխով լեցուն բանտը, որ քեզի համար պատրաստուած է՝ եթէ մեղքէզ չիղազրիս ու չիզղջաս : Էդէկ մտմբտա ան կրակը՝ որ մէջը պիտոր երիս հողւով ու մարմնով, որով ըրեր էս քու կին մեղքերդ : Էն կրակը պիտի մըսնայ քու բոլոր ներսի աղիքներուդ մէջը, բերնիդ՝ ոսկրներուդ ու գլխիդ մէջը, անանկ որ պիտի ըլլաս կրակ դարձած երկրթի մը պէս, ու տանջուելով սատանաներուն ձեռ

քր՝ ամէն զիւէդ կրակ պիտոր ցած
կէ : Ի՞նչպէս պիտի կենաս ան սոս-
կալի կրակին մէջը , որ հիմա չես
կրնար զիմանալ մէկ պղտիկ ճրագի
մը բոցին , ու ինտոր չես մտմը-
տար :

Բ. Ս) Ե որ դատապարտուիս զը-
ժոխքը , ի՞նչ պիտոր ընես ան տե-
ղը : Պիտի մտմբտաս՝ թէ քիչ մը
բանով կրնայիր փրկուիլ ու չուզե-
ցիր : Սխաբդ պիտի գան ան քարոզ-
ները , ան կրթութիւնները , ան
գրքերը , ու ան շնորհքները , որով
Լստուած կանչեր է զքեզ ու դուն
մտիկ չես ըրեր : Պիտի մտմբտաս
զանոնք որ քու վիճակովդ էին , քու
տարուօքդ , քու բնութեանովդ , նոյն
տնէն , ու նոյն վանքէն , որ փրկուե-
ցան , ու դուն դատապարտուեցար :
Լստուած մտմբտալէն ետքը պիտոր
կատղիս , յուսահատիս , անիծես
զքեզ , ու անարգես պահապան հրեշ-
տակդ , բարեխօս սուրբերդ , զձի-
տուս քու եղբայրդ , և զսուրբ Սոյսը
քու մայրդ : Ի՞նչ սոսկալի կեանք

պիտոր ըլլայ , ու ի՞նչ զարհուրելի
խառովութիւն դժոխքին մէջ :

Գ. Լ) Երբոր խնիս ան կրակին մէ-
ջը , մտմբտա թէ որչափ պիտի կե-
նաս հոն . արդեօք ճարիւր , կամ ճա-
զար , կամ բիւրաւոր տարիներ . չէ ,
այլ շատ աւելի : Իսկ թէ որչափ ,
զիտցիր որ որչափ Լստուած՝ Լս-
տուած է , դուն ալ միշտ և յաւի-
տեան պիտի մնաս ան տեղը , ամե-
նեին մէկ ատեն մը պիտոր չունե-
նաս հանդիստ , կամ շարժիլ մը ,
կամ աչքդ գոցել , կամ կածիլ մը
ջուր պատակդ անցրնելու : Ո՞վ զար-
հուրելի կրակ , սոսկալի դժոխք , ու
սարսափելի յաւիտենականութիւն :

Պատաշ : Ս) Ե որ կ'ուզես փրկու-
թեան հասնիլ , ինդրէ՞ սուրբ Լս-
տուածածնէն , որ աղէկ իմացնէ
քեզի թէ ի՞նչ է դժոխքը , ու երբոր
մտնաս մէկ եկեղեցի մը , մտածէ՞ աս
բանս . Լսթէ աս եկեղեցնայ մէջը
յաւիտեան մնալու ըլլայի նէ , (որ
սուրբ ու հանգիստ տեղ է) , ի՞նչ
ծանր նեղութիւն էր ինծի . հասպ

ինչ պիտի ըլլայ դժոխքին մէջ: Ու
 ըսէ՛ բողոքով սրտիւ առ սուրբ Աստուած
 առածածինը: «Սայր Աստուծոյ,
 փրկիչ զանձինս մեր՝ ի յաւիտենից
 ի հրոյն աղաչեմք զքեզ»:

ԱՂՐԹԻ

Քիտնայով մեղքերուս շատու-
 թիւնը ու ծանրութիւնը, ես ինձի
 կ'ընեմ իմ դատապարտութեանս
 վճիռը: Առ որովհետեւ ամէն տե-
 սակ մեղքով ու բոլոր մարմնովս մե-
 զանչեր եմ, արժանի եմ ամէն տե-
 սակ տանջանաց, մանաւանդ թէ մէկ
 դժոխքը քիչ է իմ մեղքերուս, վասն
 զի մեծ է ապերախտութիւնս որ ը-
 րեր եմ ստեղծողիս դէմ: Հոգի
 տուեր է ինձի, որ զինքը ձանձնամ
 ու սիրեմ, բայց ես իմ միտքս ու
 սիրտս տուեր եմ սատանային կամ
 քը ընելու: Սարմին տուեր է ին-
 ձի, որ իր ծառայութեանը մէջ բա-
 նեցրնելով բարիք պատրաստեմ ին-
 ձի արքայութեան համար, բայց ես

անհոգ ըլլալով տուեր եմ զիս աշ-
 խարհային բաներու: աչքս, ականջս,
 բերանս, ձեռքս ու այլ ամէն զգայա-
 րանքներս բանեցուցեր եմ իմ ստեղ-
 ծողիս դէմ. ուստի ես իմ բերնովս
 կը վկայեմ թէ արժանի եմ դժոխ-
 քին: Ասոյց զիտեմ քու անհուն ու
 դորմութիւնդ՝ Աստուած իմ, փրկիչ
 իմ, կեանք իմ: Յետոս Քրիստոս,
 նայէ՛ որորմելի հոգւոյս վրայ, որ ըն-
 կեր է քու առջևդ, ու կ'աղաչէ խո-
 նարհութեամբ քու կին դժութիւց.
 դուն որ ստեղծեր ես ձեռքովդ, փրկ-
 կեր ես չարչարանքովդ, պահեր ու
 պաշտպաներ ես քու շնորհքովդ, մի
 թողուր որ կորսուիմ, այլ միջնոր-
 դութեամբ ամէնօրհնեալ մօրդ
 դառնամ իմ մեղքէս, ու ճշմարիտ
 ասպախարութեամբ արժանի ըլլամ
 երկնից արքայութեան:

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԻ ՕՐ

Դատապարտեց համբարեիս վրայ :

Ա. Աչքդ դարձուր դէպ 'ի վար նայէ դժոխքը, ու համբէ թէ որչափ դատապարտուած մարդիկ կան ան տեղը Քրիստոսի աշխարհք դաւէն առաջ: Թիէ որ մամբտանք մի նակ ջրհեղեղին առենը, այն բազմու թեան գրեթէ ամէնը դատապարտուած են, բաց 'ի քանի մը հոգիէն, որ 'Եյնահապեալին հետ տապանը մտան, կամ զըջացան: Ուր դնենք Սողոմոյ ու Գամբայ բնակիչները, և ուրիշ կապաշտ աղգերը, որ կային ան առեւնները: Եւ և նոյն իսկ հրեից աղգէն որ Եստուծոյ ժողովուրդ էին, որչափ հողիք դատապարտուած կան դժոխքին մէջը:

Բ. Մամբտան ան դատապարտուածներուն համբարեքն ալ, երբոր Քրիստոս աշխարհքիս վրայ էր նէ:

Որչափ անդեղը անհաւատներ, որչափ խտասիրտ փիլիսոփաներ, որչափ հրէաներ որ հալածեցին զՅիսուս: որչափ մարդիկ ալ որ Յիսուսին հետը խօսեր են, վարուեր են, ու աչքոյնին ալ հրաշքները տեսած են: Ընծոյ մէջն է Պիղատոս դատաւորը, Վայիափա քահանայապետը, հերովդէս թագաւորը ու Յուդա Յիսուսին աշակերտը, նաև ձախակողմեան աւաղակը, որ Յիսուսին քովը խաչին վրայ մեռաւ:

Գ. Մամբտան անոնց համբարեքն ալ, որ Յիսուսին դաւէն ետքը դատապարտուած են: Որչափ մարդիկ որ Յիսուսի աւետարանին թշնամի եղան, Եստուծոյ հրաշքները չուղեցին տեսնալ, ու հալածեցին բրիտանները: Որչափ մեծ մեծ թագաւորներ, զօրապետներ, իշխաններ, փիլիսոփաներ, ճարտասաններ, գիտուն բանաստեղծներ, որ աշխարհքիս մէջը անուն ձգեցին: Եստուծոյ 'ի զատ որչափ ուղղափառ բրիտաններ ալ կան, որ ունենին

Ճշմարիտ հաւատք, լսեր էին քա-
րողներ, առեր էին Մատուծոյ շնորհ-
քը մկրտութեամբ և այլ խորհուրդ-
ներով: Արչափ քահանաներ, ե-
պիսկոսոսաներ ու կրօնաւորներ: Հի-
մա ալ որ ես կը մտմտամ կոր նէ,
արդեօք որչափ հողիք դժօխքը կը
թափին: Այ ամէնը գիտնալով կըր-
նայ մտքէ գանցնիլ թէ մեզաւորնե-
րուն ամէնքը դատապարտուելու ը-
լան նէ, արքայութեան համար ինչ
կը մնայ: Վիտցիւր որ մեզաւորնե-
րուն դատապարտուելէն ոչ Մատու-
ծոյ, և ոչ արքայութեան պահսու-
թիւն մը կ'ըլլայ: Թո՛ւ որ կ'ուզես
քիչերուն հետ փրկուիլ, նայէ որ
քիչ մարդու հետ վարուիս:

Պարտաւ: Վեր քեզի մասնաւոր
ըերմեանդութիւն մը, որ ընես բու-
լոր կենացդ մէջ 'ի պատիւ սուրբ
Մատուածմայ, որպէս զի ազատէ
զքեզ գժօխք երթալու վտանգնե-
րէն: Վիտցիւր որ շատ մարդիկ կըր-
նային դատապարտելոց համարաբն
մէջը ըլլալ, թէ որ սուրբ Մատուա-

ծածնայ բարեխօսութիւնը իրենց
չի հասնէր նէ: Աւտի բա՛ իրեն բու-
լորով սրտիւ . . . Միայն օրհնեալ
որբուհիդ 'ի կանայս . . . բարեխօ-
սեա՛ առ Տէր վասն անձանց մերոց,
զի փրկեսցէ զմեզ 'ի սպառնալեաց
դեհեանցն . . .

ԱՂՅԹԻՔ

Ճշմարտութիւն յաւիտենական
տէր իմ Յիսուս Քրիստոս, դուն
որ ըսիր քու անուու բերանովդ թէ
շատ են կանչուածները սուրբ հա-
ւատքին մէջ, ու քիչ են անոնցմէ
փրկուածները . զիտեմ որ ես ալ
աս սուրբ հաւատքովս արքայութիւն
կանչուածներուն մէջն եմ, բայց չի
տեմ թէ արդեօք արդարներուն
համարաբն մէջը պիտի գտնուիմ,
թէ չէ: Վիտեմ որ շատ են գժօխք
գացողները, ու քիչ են արքայու-
թիւն հասնողները, ուստի տարա-
կուսեր եմ իմ փրկութեանս վրայ՝
տեսնելով իմ անհոգութիւնս . որ

չէ թէ մինակ սէր չունիմ բարիք
 ընելու, այլ և անդադար մեղաց հետ
 ըլլալով, կը սրբողջընեմ զքեզ փրկը
 կիչ իմ Հիսուս. ուստի արժանի
 եմ որ դատապարտելոց համբանքին
 մէջը իս ալ դնես: Բայց զխանայով
 քու անբաւ գծու թիւնդ, որ մեղա-
 ւորները դժոխքէն խալըսելու հա-
 մար եկար աշխարհք, կ'աղաչեմ ըզ-
 քեզ տօւր ինձի քուկին շնորհքդ,
 որպէս զի միջնորդու թեամբ ամէն
 օրհնեալ մօրդ շտկեմ իմ վարքս.
 ու ճշմարիտ զղջումով ըրած մեղ-
 քերուս վրայ, արժանի ըլլամ սուր-
 բերուն համբանքին մէջը գտնուիլ,
 ու փառաւորել քու անհուն ողոր-
 մու թիւնդ, որ ամենուն փրկու թիւ-
 նը կ'ուղես:

ԵՐԿՈՏԱՍՍՆԵՐՈՐԴ ՕՐ

Յրիտանէին չարարեանը վրայ:

Ա. Ո՛վ Լ'ստուած իմ, իս փրկե-
 լու համար այ՛ ինչ բան կրնայիր ը-
 նել՝ որ չես ըրած: Թիչ որ կը կան-
 չես զիս ողորմութեամբդ, ես կը մե-
 զանչեմ՝ յուսալով քուկին բարու-
 թեանդ: Թիչ որ կ'իմանցընես ինձի
 քու արդարութիւնդ, կը մեղանչեմ
 յուսահատելով քու ողորմութե-
 նեդ: Թիչ որ կը միտի թարես իմ
 սիրտս, կը մեղանչեմ յանդգնու-
 թեամբ: Թիչ որ սրբողիս, կը մե-
 զանչեմ արհամարհու թեամբ: Կ'ըլ-
 լայ որ արցունքովս կը թրջեմ խա-
 չելու թիւնը, ու քիչ ատենէն ետ-
 քը՝ կը դառնամ իմ մեղքերովս նո-
 ըն Հիսուսին վէրքերը բանալու:
 Ի՛նչ մեծ չարութիւն է աս իմ չա-
 րութիւնս, որ ես ալ չեմ իմանար:
 Բ. Ո՛վ Լ'ստուած իմ, արդեօք
 բան մնացեր է, որ չես ըրած իմ

փրկու թեանս համար: Վրեր ես զիս սուրբ եկեղեցնայ մէջը, տուեր ես ինձի լոյս շանչնայու զքեզ, տուեր ես խղճնանք՝ մեղքի: զգուշանայու համար. տուեր ես շնորհք՝ մեղքի դէմ կենայու համար. տուեր ես զանազան խորհուրդներ՝ արիանալու համար. տուեր ես բարի օրինակներ՝ սիրտ առնելու համար: Մեղք բրած առնես կրնայիր պատահասել զիս, սակայն ողորմութեամբ թողութիւն տուիր: Արի մեղաւորներու հետ արդարութեամբ վարուեցար. իսկ ինձի մինակ քու ողորմութիւնդ զըցուցիր: Բնէն բան ըրիր ինձի մեղքէս զանալու համար, ու ես անզեղ մնացի իմ մեղքիս վրայ:

Գ. Ո՛վ Աստուած իմ, հիմա ինչ կրնամ ուզել քեզմէ իմ փրկութեանս համար: Թէ որ սուրբ արիւնդ ուզելու ըլլամ, ամէն ալ ինձի համար թափեցիր: Թէ որ հողիդ, զան ալ ինձի համար հօր Աստուծոյ ընծայեցիր: Թէ որ մար-

մինդ, ան ալ ինձի համար խաչուեցաւ, ու անդադար կր պատարագուի իմ փրկութեանս համար: Աստի չիտեմ՝ ինչ բան ուզեմ որ իս մեղքէն զազրեցնէ: Օ աս ամէն բարեք որ ըրեր ես իմ փրկութեանս համար, շանչնայով՝ նորէն կը մեղանչեմ: ու անանկ կու գայ ինձի, իբր թէ շնորհք ինձմէ պակաս ըլլալուն համար մեղքի մէջ կ'իյնիմ: Չեմ հասկընար իմ խենդութիւնս, որ պիտի դատապարտուի իմին չարութեանս համար:

Պատու: Միջնորդ բռնելով սուրբ Աստուածածինը՝ շնորհակալ եղիր աստուածային բարերարութեանցը որ քեզի ըրեր է, ու թողութիւն խնդրէ ապերախտութեան մեղքերուդ համար: Աղաչե՛ զինքը ու ըսէ՛ ջերմեռանդ սրտով. « Ի բարեխօսութիւն փութացիր մեզ սուրբ Աստուածածին՝ առ ՚ի փրկիլ զժողովուրդս ՚ի մեղաց և յապականութեանէ »:

ԱՂՅԹՅՈՒՆ

Ո՛վ տիրուհի իմ սուրբ Մատուա ծածին, մամբռայով Մատուծոյ ինծի ըրած բարերարութիւնները ու իմին ապերախտութիւններս կը դողամ ու կը սահմբռակիմ, թէ ինչ պատասխան պիտոյր տամ իմ ստեղծողիս՝ երբոր երեսս զարնէ ըրած չարութիւններս իր անբաւ բարութեանը դէմ: Վիտեմ ու կը շանչնամ թէ Մատուած՝ իմ փրկիութեանս համար չէ թողուցեր մէկ ճար մը, որ ըրած չըլլայ իսարքայութիւն տանելու. բայց ես իմ կուրութեամբս, իմ անհոգութեամբս, իմին չարութեամբս ամէնն ալ բանեցուցեր եմ զինքը սրդողջընէլու ու իմ հոգիս կորսնցընելու. ուստի հիմա շանչնայով իմ խենդութիւնս ու ամբնայով ըրածներուս վրայ, կը դիմեմ խոնարհութեամբ քու պէտքութեանդ սուրբ Մատուածածին: Ղուռն որ մեղաւորներուն հա-

մար եղար մայր Մատուծոյ, ցըցուր ինծի քու մայրութիւնդ՝ աղաչելով Հիսուս փրկիչը, որ իմ փրկիութեանս համար եկաւ աշխարհք, քարողեց, չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ ու յարութիւն առաւ, որ զիս ալ շնորհքով ողջընցընէ. քու կին միջնորդութեամբդ տայ ինծի շնորհք, որպէս զի դառնամ իմ մեղքերէն, ցաւիմ ու զղջամ ամէն չարութեանս վրայ, ու վարքս շտկելով ծառայեմ Մատուծոյ: Սի թողուր զիս մայր ողորմութեան, որ պաղիմ ու հեռանամ քու ջերմեռանդութենէդ. քանի որ սէրդ սըրտիս մէջը ըլլայ, դիտեմ որ պաշտպանութիւնդ ալ վըրայէս պակաս չըլլար, ու քու բարեխօսութեամբդ արժանի ալ կ'ըլլամ արքայութեանս

ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Գայրակորսեան մեղքիև վրայ :

Ա . Գայթակղու թեան մեղքը շատ մեծ անիրաւութիւն մըն է : Ս'ամըտան թէ մէկ հոգի մը ինչ գին նստեր է Յիսուսի Վրիստոսի : Վիտես թէ ինչ նեղութեամբ , որպիսի նախատինջով , չարչարանքով ու խաչով ծախու է առեր , ինչուան բոլոր արիւնը թափելով ու իր կեանքը տալով : Վուն որ գայթակղութեան մեղքով կ'ուզես գողնալ իր մէզան հոգին , Յիսուսին անոր համար քաջած չարչարանքը անպիտան կ'ընես : Մ'նչ մեծ ցաւ կու տաս Յիսուսի սրտին , ու կ'ըլլաս նման սատանայի , որ միշտ թշնամի է եղեր ու սպաննող հոգիներուն , անոր պէս դուն ալ մարդասպան կը սեպուիս քուկին դէշ խօսքերովդ , գործքերովդ , նայելովդ ու անկարգ վար-

քովդ , որ անմեղ հոգիները կը մատնես մահուան :

Բ . Գայթակղութեան մեղքը խորունկ փոս մըն է անթիւ մեղքերու : Մ'ն մեղքը՝ որ մէկին պատճառ կ'ըլլաս ընելու , քուկդ կը սեպուի , ու ան առջի մեղքէն ետքը ինչ մեղք ալ որ ընելու ըլլայ նէ , որովհետեւ քուկին գայթակղութեան մեղքէդ շարժած ու ըրած կ'ըլլայ , ամէն ալ քուկդ կը սեպուի : Միկից 'ի զատ՝ մեղանչեց մէկը քուկին չար օրինակովդ , ինքն ալ պատճառ կ'ըլլայ որ ըրիչի մեղաց . և ասանկ'ան մեղքերն որ կ'ըլլան , քուկինդ կը սեպուին , ինչու որ դուն ես առջի պատճառը , ու քեզմէ սորված՝ սկըսան մեղանչել :

Գ . Գայթակղութեան մեղքը ծանր անարգանք է Մատուծոյ : Մ'ն մեղքով Մատուծոյ գէմ կը կուռիս , ու սատանային հետ մէկտեղ ըլլալով՝ քու կողմանէդ կը ջանաս պակսեցընել Մատուծոյ փառքը ու պատիւը : Մ'նպարկեշտ նայելովդ , խըն-

տալովդ՝ խօսելովդ եկեղեցնայ մէջ
անպատիւ կ'ընես Մտուածոյ տունը :
Ար յափշտակես Յիսուսին ձեռքէն
իր անգին արիւնով ծախու առնուած
հոգիները, ու կը մատնես սատա-
նային ձեռքը, զրկելով զանոնք եր-
կնից արքայութենէն . անանկ որ՝
արքայութիւնն ալ կը զրկես իր յա-
ւիտենական փառքէն՝ պակսեցնել-
լով անկից Մտուածոյ օրհնաբանիչ-
ները, որ փրկուելով սուրբերուն
հետ պիտի օրհնէին զՄտուած յա-
ւիտեանս յաւիտենից : Թող զան
ալ՝ որ պատճառ ըլլալով ուրիշի դա-
տապարտութեան, կը շատցնեն զը-
ժոխքին միջի եղածները, որ պիտի
անիծեն ու հայհոյեն մէկզմէկ :
Ստմբտա՛ հիմա՝ թէ որչափ պարտք
պիտոր ունենաս Մտուածոյ այսչափ
տարուան գայթակղութեան մեղ-
քերուդ համար : Այլ գիտցիր որ Մտ-
տուած իր բարութեքը համար կ'ըն-
դունի քու ապաշխարութիւնդ ու
հերիք կը սեպէ, թէ որ ասկից ետ-
քը բարի օրինակովդ կամ խրատով

վաստակիս իրեն մէկ հոգի մը փո-
խանակ այնչափ հոգիներուն, օրոնց
կորսուելու պատճառ ես եղեր . ուս-
տի ջանն որ քիչ մը բանով հաշ-
տուիս Մտուածոյ հետ :

Պատառ : Այլ որ մասնաւոր պար-
կեշտութիւն մը ունենաս եկեղեց-
նայ մէջ, ճամբան քայլելու ատենդ,
ու կենցաղավարութեանդ մէջը . որ-
պէս զի ուրիշի տուած գայթակղու-
թիւններուդ դեղ մը ըլլայ . ու ըսէ
առ Մտուած բոլորով սրտիւ՝ միջ-
նորդ բանելով քեզի սուրբ Մտուա-
ծածինը . «Յամենայն ժամ աղա-
չանք իմ այս են, ի մեղաց իմց
սուրբ արս զիս Տէր, և յօտարէն
պահեան զծառայս քո » :

ԱՂՕԹԻՔ

Վայ ինծի, որ իմ մեղքերս հե-
րիք չսեպելով, ուրիշի ալ պատճառ
եղեր եմ չար օրինակներովս մեղքի
մէջ ձգելու : Վարձակից եմ եղեր
սատանայի՝ Յիսուսին դէմ կուտե-

լու համար . ու իր սուրբ արիւնով
 ծախու աւնուած հոգիները զրկեր
 եմ արքայութենէն , ու դժօխքի որ
 զի եմ ըրեր : Չիտեմ՝ թէ ինչ
 բանով կրնամ զեղ ընել աս իմ ը-
 րած վնասներուս , բայց եթէ ինչիլ
 քու առջևդ սուրբ Աստուածածին ,
 ու աղաչել քուկին բարեխօսու-
 թիւնդ : Վուն որ մայր էս ողորմու-
 թեան , ողորմէ ինձի անարժան մե-
 ղաւորիս , երեցընելով զօրաւոր միջ-
 նորդութիւնդ՝ որպէս զի խալըսիմ
 չէ թէ մինակ իմ մեղքերէս , որ էս
 ինձի զէն տուեր եմ , այլ մանաւանդ
 ան ծանր մեղքերէն , որով ուրիշ
 հոգւոյն պատճառ եմ եղեր կոր-
 սուելու : Մաղաչեմ զքեզ մայր Աս-
 տուծոյ . դուն որ ապաւէն էս մե-
 ղաւորաց , մխիթար վշտացելոց ,
 պաշտպանէ՛ ու մխիթարէ՛ իմ վշտա-
 ցեալ հոգիս , որ ճշմարիտ զղջումով
 կը ցաւիմ՝ ըրածներուս վրայ , ու
 կ'առաջադրեմ ՚՛ իսուսին շորհքը-
 վը , որ ասկից ետքը բարի օրինակ
 տալով՝ ուրիշի , ջանամ վաստակել

զանէ մէկ հոգի մը , որ զեղ ըլլայ
 անցած գացած մեղքերուս , ու ա-
 սով քու մայրութիւնդ փառաւո-
 րուի իմ վրաս :

ՁՈՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Մարդկային եկատման վրայ :

Ա. Մտմբտա՛ թէ ինչ է պատ-
 ճառը՝ որ կ'ուզես վարքդ շտկել , ու
 չես կրնար : թէ՛ որ աղէկ մտմբտա-
 լու ըլլաս նէ , ուրիշ բան չէ , բայց
 եթէ մարդկային նկատմունքը (սոյ-
 շը) , որ չիթողուր քեզի ձեռք զար-
 նելէ : թէ՛ որ չերթամ կ'ըսես ան
 տունը կամ ան տեղը , պիտի զրու-
 ցեն մարդիկ թէ խոտոտվանահայրը
 արդեւէր է որ չերթայ : թէ՛ որ հե-
 աանամ իմ գէշ ընկերներէս , պի-
 տի ըսեն որ ճշմաւոր կ'ուզէ ըլլալ :
 թէ՛ որ գաղբիմ՝ ծաղրածութիւն
 ընէլէն , պիտի ըսեն թէ տաքարիւն

մարդ չէ : Այժմ է պարհիշտոնայուածք
 ունենամ՝ ու փախչիմ խաղալէն ,
 խնտալէն ու զբօսանք երթալէն , պի-
 տի խնտան վրաս ու բսեն՝ թէ իրզ-
 ճահար մարդ մին է : Ա՛նչ մեծ խեն-
 դու թիւն է դատապարտուիլը մարդ-
 կային նկատմանը համար :

Բ . Փափաք կ'երեւցընես սուրբ
 ըլլալու , սակայն ամենեւին ետեւէն
 չես ինչիր : Ա՛նչ է պատճառը , եթէ
 ոչ մարդկային նկատմունք , թէ որ
 թողում կ'ըսես մարդկանց հետ վա-
 բուիլը , զբօսանք երթալը , պիտի ը-
 սեն ինծի համար՝ թէ լեռնցի է ու
 մարդկութիւն չունի : Թէ որ զար-
 դարանքներս ու աղուոր հագուստս
 մէկզի ձգեմ , պիտի բսեն թէ զե-
 դացի մին է , աղուոր բաներէն չե-
 հասկընար : Այժմ է տեսնան որ սուրբ
 տեղուանք կը պարտիմ , կամ ժա-
 մերը , կամ հիւանդանոցները ու
 քերականդու թեան հետ կ'ըլլամ ,
 պիտի բսեն թէ կեղծաւոր մարդ մի
 է : Այն գիտեր որ ատանկ սուտ մշտ
 մըտութներով կը կորսնցընես սրբու-

թեան փառքը , թէ հոս և թէ ան-
 դին արքայութեան մէջ :

Գ . Թէ որ քեզի ամօթ կը սեպես
 Յիսուսին խաչելու թիւնը , Յիսուս
 ալ քեզ պիտի ամբջցընէ հրեշտակ-
 ներուն առջևը , ինչպէս որ կը զրու-
 ցէ ինքը աւետարանին մէջը (Ղուկ .
 Թ . 26) : Աստատանին օրը երբ որ
 բսելու ըլլաս իրեն , թէ Տէր՝ չես
 ճանչնար զիս որ քրիստոնեայ եմ ,
 Յիսուս պիտի զրուցէ քեզի՝ թէ
 չեմ ճանչնար . ինչու որ ամբջցար
 իմ նշանս քու վրայ կրելու , չուզե-
 ցիր ջերմեռանդ երևնալ , բարի գործ-
 քեր ընել , երկեղած ըլլալ . ուստի
 չեմ ճանչնար քեզ՝ թէ իմ աշ-
 կերտս ես : Վնաս քու չար ընկերնե-
 բուդ հետ սատանային քովը , որ ըզ-
 քեզ կը ճանչնայ . վասն զի ես քեզ
 չեմ ճանչնար :

Պրոֆ . Սէր որ տեսնեսնէ սուրբ
 Աստուածածնայ պատկեր մը , ըրէ
 իրեն քու յարգութիւնդ առանց ա-
 մբնալու . գիտցի՛ր որ մինակ անոր
 բարեխօսութեամբ կրնաս պարզե-

րէս ելլել Յիսուսին առջևը, ու ըսէ իրեն բոլորով սրտաւ . « Արբուհի Ս' արիամ մայր Մատուծոյ, բարեխօսեա՛ն վասն մեր մեղաւորաց » :

ԱՂՕԹԻՔ

Ո՛վ Մատուած իմ Յիսուս՝ կ'ամբնանամ ու կը պատկառիմ՝ մամուռ տալով իմ խենդութիւնս, որ մնա նալով քու մեծութիւնդ՝ ծառայեր եմ աշխրբբիս ունայտութեանը : Մէլի ուզեր եմ մարդկանց հաճոյ ըլլալ՝ քան թէ քեզի փրկիչ իմ Յիսուս : Ա՛խտեր եմ մարդկանց խօսքերէն, ու չեմ վախցեր քու կին արդարութենէդ : Մ'նհոգ եմ եղեր պատուիրանքդ պահելու, աշխրբբիս գէշութեան հետևելու համար : Մեծ թեպէր եմ ինձի քու խաչդ, ու փախեր եմ անկից առանց մամուռ տալու՝ թէ սուրբ խաչը պիտի ըլլայ ինձի պարճանք արքայութեան մէջ : Մ'ըջեր եմ բարի քրիստոնէայ երեւնալու, ու չեմ ամբցեր

սատանային ծառայելու, ու մեղքերով իմ հոգիս սևցնելու : Այն ինձի երբոր ելլեմ քու առջևդ, երբոր մեղքերս երեսու տաս, երբոր ցըցունես ինձի քու կին բարկու թիւնդ ու վաճառես զիս քու տեսութենէդ : Արցաւիմ որ ինչուան հիմա ասանկ գէշ վարք ունենալով՝ անարդերեմ քրիստոնէութեան անունս, ու նախատինք եղեր եմ իմ փրկչիս . ուստի վախնալով ու ամբնալով՝ ըրածնելես՝ կը գիտեմ քեզի սուրբ Մատուածածին . գիտեմ որ մինակ քու բարեխօսութեամբդ կրնամ շտկել իմ վարքս, կրնամ պարզերես ելլել Յիսուսին առջևը . անոր համար կ'աղաչեմ զքեզ մայր ողորմութեան՝ ինամէ՛ զիս մայրական սիրովդ, վառէ՛ իմ սիրտս Յիսուսին սէրը, որ ասկից ետքը քու կին միջնորդութեամբդ ըլլամ ճամարիտ ծառայ Մատուծոյ, ու իմ բոլոր կեանքս սուրբեմ իր սիրոյն, որ արժանի է ամէն ծառայութեան :

ՀՆԳԵՏԱՍՍՆԵՐՈՐԴ ՕՐ

Արքայորեան դրաց :

Ա. Մտնտան թէ ինչ բան կը սիրես աշխրբքիս մէջը : թիւ որ ազատութիւն ու համարձակութիւն կ'ուզես, զիտցիր որ արքայութիւն երթաս նէ կրնաս ուղածիդ պէս համարձակ քալել օգոյն մէջը, զէպ'ի երկինքը երթալ՝ արեւուն, լուսնու կային ու աստղերուն քովը : Արնաս քիչ ատենի մէջ երկինքէն վար իջնիլ, ու աշխրբէս երկինքը ելլել : Արնաս համարձակ առանց արգելքի մտնալ ելլել ուր որ ուզենաս նէ : թիւ որ կը փափաքես անուշ ձայներ լսել, զնա՛ արքայութիւն, ուր լսես հրեշտակներուն ու սուրբերուն անուշ երգերը : Արքայութեան մէկ նուագարանին ձայնը քիչ մը ատեն լսելով սուրբ Յրանչիսիոս, բոլորովին յափշտակուելով մտքաւ զինքը ու իր ամէն զգայութիւնը :

Բ. թիւ որ կը փափաքես աղուոր ըլլալու, զիտցիր որ արքայութիւն երթաս նէ՛ աչուրներդ պիտի նմանին մէյմէկ աստղերու . բոլոր երեսդ պիտի փայլի արեգական պէս պայծառ և զեղեցիկ . ձեռուրներդ պիտի զարդարուի աննման զարդերով, ու բովանդակ մարմինդ փառաւոր և անպատմելի լուսով պայծառանայ : թիւ որ կ'ուզես խմաստուն ու խելացի ըլլալ, զնա՛ արքայութիւն, ուր մէկէն 'ի մէկ կ'ըլլաս խմաստուն քան զՍողոմոն, խելացի քան զամէն փիլիսոսիաները, առանց աշխատանքի կ'ունենաս ամենէն բարակ ու խորունկ զիտութիւնները, ու անոնցմով զմայլելով՝ ամենեւին չես ձանձրանար :

Գ. թիւ որ կը փափաքես վայելաշխրբքիս մէջի եղած բաներուն աղուորութիւնը, զիտցիր որ քան զանկր շատ աղուոր է իրենց ստեղծողը, զոր երես երեսով պիտի տեսնաս արքայութեան մէջը, ու մտանց պիտոր զմայլիս ու ըլլաս երանելի : թիւ որ

զան ուրախու թիւններն ալ որ պիտի ունենաս՝ տեսնալով Տրեշտակներուն բազմութիւնը, սուրբ նահապետները, առաքեալները, մարտիրոսները, քու պաշտպան սուրբերդ. և մանաւանդ զսուրբն սրբոց Յիսուս փրկիչը, ու սուրբ կոյս Մատուածաձինը: Այն որ կը փափաքիս մեծութիւն ու ապրանք վաստըկելու, զնա՛ արքայութիւն՝ ուր կը ժառանգես զՄատուած, որ տերն է ամէն մեծութեան ու աշխրբբիս հարատու թեանը: Ինքը բոլոր քու կողմից պիտի ըլլայ, ու բնաւ մէկը չի կրնար զանի քեզմէ դողնալ. ու գուն ալ չես կրնար զինքը կորսնցընել. ուստի պիտի վայլես զինքը յաւիտեանս յաւիտենից: Իյենդ ես, թէ որ մէկ ոչինչ բանի մը համար կորսնցընես ասանկ մեծ բարիքը արքայութեան:

Պատու: Վնտրուէ՛ ունեցածներուդ մէջը, թէ որ անանկ բան մը կը գրաւուի, որ անվայել է քեզի կամ պարկեշտութեան, գուրս ձգէ ու հետաջո՛ւր քեզմէ սուրբ Մատուածածնայ

սիրոյն համար: Վիտցիր որ շատ մեղաւորներ աս բանովս արժանի եղեր են արքայութեան, ու ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. «Մատուածաձին ապաւէն մեր և յոյս, բարեխօսեան առ որդիդ քո միածին, զի փրկկեսցէ զմեզ ՚ի հրոյն տանջանաց, և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւնն »:

ԱՂԹԻՔ

Ո՛վ Մատուած իմ, թէ որ աշխրբբիս մէջը իմ ողորմելի մարմնոյս համար այսչափ բարիք ստեղծեր ես, հապա սրջափ աւելի բրած պիտոր ըլլաս հոգւոյս համար արքայութեան մէջ. բայց ես կուրցած ըլլալով իմ մեղքերովս՝ անհոգ եմ, չեմ մտմտար ու չեմ փափաքիր յաւիտենական կենացը, որ զիս երանելի պիտոր ընէ: Ար հաւատամ, Մատուած իմ, թէ ամէն բարիքն էր են ՚ի զատ որ պատրաստեր ես ինձի արքայութեան մէջ, ամենէն մե-

Տը ու փափաքելին ան է, որ զքեզ պիտոր տեսնամ, զքեզ ժառանգեմ, քեզմով մխիթարուիմ, ու քեզմով պիտի զմայլիմ յաւիտեանս յաւիտենից: Այ ինձի որ չճանչնալով այսպիսի մեծ բարիքը՝ ինչուան հիմա իմ սիրտս աշխրբբիս ունայնու թեանը տուեր եմ, ու մոռնալով յաւիտենական կեանքը, անցաւ որ բաներու հետ եղեր եմ: Ա՛յ Մտաւած իմ Յիսուս, դուն որ ճանապարհ, ճամբարու թիւն ու կեանք ես, լուսաւորէ իմ խաւարեալ մտքս, որ ճանչնամ ինձի համար պատրաստուած բարիքը, վառէ իմ սիրտս արքայութեան սիրովը, որպէս զի աշխրբբիս բաները ինձի գարշելի ըլլան, ու ես ալ արքայութեան փափաքովը զքեզ սիրեմ, զքեզ պաշտեմ ու քու կին սիրովը առջորուիմ: Ար ինձ գրեմ քեզմէ ալ մայր Մտաւածոյ, որ ըլլաս ինձի բարեխօս՝ քաղցր դաւկիդ առջևը, ու քու միջնորդութեանդ իմ վարքս շտկելով, արժանի ըլլամ արքայութեան

մէջ սուրբերուն կարգը մանալու, ու հոն փառաւորելու քու կին ինձի ըրած պաշտպանութիւնդ ու մայրական զթածութիւնդ:

ՎԵՇՏԱՍՍՆԵՐՈՐԳ ԹՐ

Արքայտրեան ձամբոսն փրայ:

Ա. Արքայութիւն երթալու՝ մինակ երկու ճամբայ կայ: այսինքն անմեղու թիւն, ու ապաշխարութիւն: Անմեղութեանս համար կըրնամ ըսել թէ կորսնցուցեր եմ նախ քան զճանչնալս. այսինքն՝ առանց գիտնալու՝ թէ ինչ ազնիւ բան է անմեղութիւնը, առանց ցաւելու և լալու անոր կորսուելուն վրայ: Ա՛յլ զիտէ, որ չէ թէ մինակ իմ անմեղութիւնս կորսնցուցեր եմ, այլ և ուրիշի անմեղութեանն ալ կորսուելու պատճառ եմ եղեր: Ա՛յ եղբ ան ազնիւ անմեղութեան, որ ասանկ շուտով ու քիչ մը բանով կորսուեր

է, ու կարելի ալ չէ նորէն վատար-
կուելու :

Բ. Արնաս ըսել թէ անմեղու-
թիւնս թէպէտ կորսընցուցի, բայց
յուսամ որ մեղացս վրայ ապաշխա-
րեցի: Սակայն սլ գիտէ թէ ինչ
պէս ապաշխարեր ես, չիտեմ թէ ար-
դեօք պէտք եղածին պէս խոստովա-
նե՞ր ես մեղքերդ՝ թէ չէ. արդեօք
ան ապաշխարանքները, որ դուռած
էին մեղքերուդ համար, սիրով ըն-
դուներ ու կատարե՞ր ես, թէ ծանր
ու անտանելի երևցեր են քեզի:
Ղգնու թիւն ընելու տեղը, դուն
քեզ ժողվելու, պար ու ծով պա-
հելու տեղ, տուեր ես դքեզ հան-
դըստեան, ու քու կամքդ կատա-
րելու:

Գ. Այնչէ՛մ արքայութիւն եր-
թալ, բայց թէ ինչ ճամբով՝ չեմ
գիտեր: Այնք է երկու ճամբուն
մէկովը երթալ. կամ անմեղու-
թեամբ, և կամ ապաշխարութեամբ:
Ընմեղութեամբ չեմ կրնար երթալ,
ինչու որ կորսընցուցեր եմ. իսկ ա-

պաշխարութեամբ չեմ ուզեր, վասն
զի դժար կու դայ ինծի. հապա ինչ
պէս պիտոր հասնիմ փրկութեան:
Ուրեմն պէտք է որ առաջադրեմ
այսպէս: Թէ որ ինչուան հիմա չեմ
ըրած ապաշխարութիւն, գոնէ հի-
մա ընեմ: Մտնամ արքայութեան
ճամբան՝ քանի որ ժամանակ ունիմ,
սլ գիտէ թէ սրջալ պիտոր ապրիմ:
Կարելի է որ քիչ մնացեր է իմ կեան-
քէս, ու աս քիչ ատենին մէջը քիչ
ապաշխարութեամբ ալ կրնամ վա-
տրկիլ արքայութիւնը. հապա ինչու
չեմ ապաշխարեր:

Պրոտ-ը: Ո՛վ որ կորսնցնէ սուրբ
Ըստուածածնայ ջերմեռանութիւ-
նը, կը կորսնցնէ արքայութեան
ճամբան. ուստի՛ թէ որ պաղեր ես
սուրբ Ըստուածածնայ ջերմեռան-
դու թեւէն, ջանա՛ որ նորէն վառես
դքեզ իր սիրովը, որպէս զի փրկու-
թեան հասնիս, ու ըսէ՛ իրեն բոլ-
րով սրաի. “Չգեան զիս գհեա քո,
ի հոտ իւղոյ քոց ընթացուք” . և
թէ “Օ քեզ դուն երկնից և ճա-

նապարհ արքայութեան, բարձող
անիծից և սրովըէ հողեղէն մեծա-
ցուցանեմք, »

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամէնօրհնեալ կոյս տիրու-
հի սուրբ Աստուածածին, կ'իյնիմ
խոնարհութեամբ քու ոտքդ, ու ա-
պաւինելով մայրական գթութեդ,
կ'աղաչեմ դքեզ մայրողորմութեանս
կորսնցուցեր եմարքայութեան ճամ-
բան, ու չիտեմ ինչ ընելիքս. չու-
նիմ մկրտութեան անմեղութիւնը,
որ իմ մեղքերովս կորսուեր է. չու-
նիմ հիմա ալ հօգի ապաշխարու-
թեան, ինչու որ մեղքով սիրտս քա-
րացեր է: Ղուն որ մայր գթած ես,
կրնաս կախուղցնել իմ սիրտս. կըր-
նաս նորոգել իմ հոգիս. կրնաս դար-
ձնել զիս արքայութեան ճամբան.
կրնաս քու միջնորդութեամբ դ փր-
կել իմ հոգիս: Ղիտեմ մայրողոր-
մութեան՝ որ քեզի ջերմեռանդ ե-
ղողներուն սպաշտպանն ես, ու ան-

կարելի է աննոց դատապարտութիւ-
նը, ոյք որ քու մայրական խնամքիդ
տակն են. ուստի կ'աղաչեմ դքեզ
մայր Աստուծոյ զիս ալ ընդունէ քե-
զի ծառայ մշտնջենաւոր: Տուր ին-
ծի շնորհք հաստատուն մնալու քու
կին ջերմեռանդութեանդ մէջը. ու
բարի գործքերով արժանի ըլլալու՝
որ իմ հոգիս քու ձեռքդ տամ, ու
արքայութիւն հասնելով փառաւո-
րեմ քու անուշ գթութիւնդ:

ԵՅԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԿ ՕՐ

Սուրբ Աստուածածնայ չերմեսանդարեան
վրայ:

Ա. Սուրբ Աստուածածինը Աս-
տուծոյ մայր ըլլալուն համար, իրեն
եղած ջերմեռանդութիւնը շատ մեծ
ու զօրաւոր է. ինչու որ ինքն ըլլալով
մայր Աստուծոյ, կրնանք բսել թէ
զաւկին ամենակարողութեան, շը-
նորհքներուն ու ողորմութեան գոն

ճր իր ձեռքն է : Ս՛վ կրնայ ըսել թէ
 Հիսուս իր սուրբ մօրը խնդիրքները
 մտիկ չընէ . անանկ մօրը , որ զինքը
 կուսական կաթով սնուցեր , մեծ-
 ցուցեր , խնամեր՝ պահէր է . իրմէն
 չէ զատուէր ինչուան խաչէլու թեան
 ու թաղման ատենն ալ : Սուրբ Մը-
 տուածածին որ սիրեց զՀիսուս ա-
 մէն բանէն զէր , ինչպէս Հիսուս
 ալ չսիրէ իր մայրը ամենէն աւելի :

Բ . Սուրբ Մտուածածին մեր մայ-
 րը ըլլալով , իրեն ջերմեռանդու թիւն
 ընելը շատ անուշ բան է : Իմ մայրս
 սուրբ Մտուածածինն է , կ'ըսէր
 մէկ սուրբ կրօնաւոր մը . իսկ մէկալ
 բնական մայրն որ ունիմ , իմին կաթ-
 մայրս է : Ինչ անուշ բան է ըսե-
 լը , թէ Հիսուսին մայրը՝ իմ մայրս
 է . և թէ իմ մայրս՝ Հիսուսին մայ-
 րն է . երկուքս ալ մէկ մօր զուակ
 ենք : Աստի սուրբ Մտուածա-
 ծինը միշտ հետերնիս է իր շնորհք-
 ներով ու իր մայրական սիրովը . չէ
 թէ մինակ կըլտէ մեզի , այլ և կը
 խօսի ու կը շարժէ մեր սիրտը հօ-

ղևոր բաներով , ու աչքերնիս կը
 լեցունէ անուշ արցունքով :

Գ . Սուրբ Մտուածածինն ըլլա-
 լով մայր ու բարեխօս մեղաւորաց ,
 իր ջերմեռանդու թիւնը շատ փա-
 փաքելի բան է : Սեղաւորները թէ-
 պէտ իրենց մեղքովը կը խաչեն զՀի-
 սուս , սակայն սուրբ Մտուածածի-
 նը չի թողուր զանոնք ձեռքէ , իր սէ-
 րը կը շարժէ որ ջանայ զանոնք նո-
 րանց հաշտեցնել : Հիսուսին հետ .
 իր մայրական գուժը չի թողուր որ
 տեսնէ երկու եղբարքը մէկմէկու
 հետ թշնամի . ճար կ'ուզէ ընել որ
 Հիսուս մեղաւորին հետը հաշտ ըլ-
 լայ : Թէ որ մեղաւոր էս , կրնաս
 սուրբ Մտուածածնայ հաճոյական
 բան մը ընել , եթէ իյնելով իրեն
 ոտքը յայանես քու մեղքդ , որով
 սրդողցուցեր էս զՀիսուս . յանձնե-
 լով զքեզ իր գթութեանը ու զղջա-
 լով ըրածիդ վրայ : Բսէ իրեն բողո-
 քով սրտիւ . « Ծուր խոնարհեցն
 առ իմ հաշտութիւն՝ ծնօղդ Մը-
 տուծոյ . . . ձեռն տուր անկելոյս՝ տա-
 ճար երկնային » :

Պրոֆ. Սի կարծեր որ աղէկ ջեր
մեռանդ էս սուրբ Մտուածածնայ,
Թէ որ մեղքիդ մէջը անդարձ կե-
ցած էս: Ս անն ամէն օր ըսել Մ-
տուածածնայ վարդարանը. ու նայէ
որ ուրիշն ալ յորդորես ըսելու.
խնդրելով սուրբ Մտուածածնէն.
“Յոյս մեր և ապաւեն մայր Տեառն
և կոյս սուրբ... բարեխօսեան առ
Տէր վասն մերոյ փրկութեան”:

ԱՂԹԹ

Ո՛վ տիրամայր կոյս սուրբ Մ-
տուածածին, զլսոյ երկնից և Թա-
զուհի հրեշտակաց, կ'ուրախանամ
մեծութեանդ վրայ որ ասանկ ան-
զին շնորհքներու էս հասեր. կը
ցնծամ փառացդ վրայ՝ որ ասանկ
անհուն երանութեան էս հասեր:
Պիտեմ մայր Մտուծոյ՝ որ ամէն
բանի կարօղ էս, ու անով կ'երե-
ցնես քուկին մեծութիւնդ ու
փառքդ. ուստի կ'աղաչեմ զքեզ
ցրցուր քու գթութիւնդ՝ ողորմե-

լով ինձ մեղաւորիս. երեցուր քու
քաղցրութիւնդ՝ անուշցնելով իմ
սրտիս լեղու թիւնը. ցրցուր քու զօ-
րաւոր պաշտպանութիւնդ իմ յու-
սահատ կենացս վրայ, որ շատ պար-
տրկան եմ Մտուծոյ. երեցուր քու
աստուածային ընտանութիւնդ՝ մօ-
տեցնելով իմ հօգիս առ Մտուած-
ցրցուր քուկին պայծառութիւնդ՝
լուսաւորելով իմ խաւարած միտքս.
երեցուր քու ցնծութիւնդ՝ մխիթա-
րելով իմ սգաւոր սիրտս: Հերիք է
ինձի մէկ անուշ սիրով նայուածքդ,
որ զիս մէկէն ողջնցնէ, հերիք է
որ հեղ մը ինձի համար ըսես Յե-
սուսին, Թէ Տէր գուն ողորմէ աս
խեղձ մեղաւորին, զիտեմ անտա-
րակոյս որ պիտի ըսէ քեզի, Թէ
“Մղցի քեզ որպէս և կամիս”:
Թէ որ մէյ մը քու մայրական խը-
նամբիդ տակը խնիմ, մէկէն կ'ը-
ռնանամ, մէկէն կը լուացուիմ, մէ-
կէն կը սրբուիմ, մէկէն սիրելի կ'ըլ-
լամ Մտուծոյ, ու արժանի երկնից
արքայութեանս: Կ'աղաչեմ մայր Մ-

առ ծոյ, փառաւորէ՛ք. քու անունդ իմ վրաս, որպէս զի իմ հողւոյս փըրկու թեամբը մեծնայ ու քարոզուի մայրական դժու թիւնդ, որ մեղաւորն երանւն վրայ կ'երեւնայ:

ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

Աստուծոյ ներկայութեան վրայ:

Ա. Գիտես թէ որոնք քոյն ես հիմն: Աստուծոյ հետն ես: Վալելու ատենդ, կարդալու ատենդ, պահելու ելլելու ատենդ, խօսելու և ուտելու ատենդ գիտես որոնք հետն ես: Աստուծոյ հետ ես: Հապա երբոր մեղանչելու ըլլաս նէ, գիտես որոնք հետն ես: Աստուծոյ հետ ես: Աստուած քու առջևդ է, քու քովդ է, չորս դիզ է. կը տեսնայ քու ամէն գործքդ, կը լսէ ամէն խօսքդ, կը քննէ ամէն փափաքդ, կը չափէ ամէն մտմբտուքդ. վրայդ կը նայի զիշեր ցորեկ, թէ մինաւ.

ըիկ ես եղեր, և թէ ուրիշի հետ. ամէն տեղ ու ամէն ատեն: Աւտի մ'ըսեր ամենն ին, թէ կրնամ մեղանչել առանց ամբնայու, ինչու որ զիս մարդ չիտեսնար: Գիտցիր որ Աստուած քեզ միշտ կը տեսնայ:

Բ. Անչ մեծ յանդգնութիւն ու նախատինք է մեղանչել Աստուծոյ առջևը, որ ամենն ին սրբութիւն է ու ամենակարող: Արջափծանք բան է մեղանչելը անոր աչքին առջևը, որ է քու փրկիչդ, քու հայրդ, քու տէրդ, ու քու կին դատաւորդ: Ամբնաս մեղանչել մարդու մը առջև, ու չես ամբնար Աստուծոյ առջևը: Գիտես որ բոլոր մեղքերդ դրուած է իր մտքին մէջը, կը կարդայ, կը մտմբտայ ու կը շարժի 'ի բարիութիւն. վասն զի իր աչքին առջևը եղեր է քու ամէն անկարողութիւնդ:

Գ. Արբոր երթաս Աստուծոյ առջևը դատուելու համար, ոչ վկայ պէտք է և ոչ ամբաստանող. ինքն Աստուած պիտի ըսէ քեզի, թէ ես եմ քու դատաւորդ ու վկայ: Անչ

մեծ ամօթ ու նեղութիւն պիտոր
 ըլլայ քեզի տեսնելը Մտուծոյ սըր-
 դողած դէմքը քու վրայ. ու միտքդ
 դալը՝ թէ ան աստուածային աչքե-
 րը տեսեր են քու գէշ ու ամօթա-
 լի գործքերդ : Սե՛ծ կուրու թիւն է
 քրիստոնէի մը, որ կը մեղանչէ իր
 թշնամւոյն սատանային առջևը, որ
 պիտի ըլլայ չարախօս իր ըրածնե-
 րուն : Միկից ՚ի դատ՝ ինչ կուրու-
 թիւն է մեղք ընելը պահապան
 հրեշտակին առջևը, որ չի կրնար
 պաշտպանել դատաստանին ասե-
 նը : Հասպ ինչ սոսկալի խենդու-
 թիւն է մեղանչել Մտուծոյ առ-
 ջևը, որ պիտի ըլլայ դատաւոր մար-
 դուս ամէն գործքերուն :

Պատշ : Թի որ կ'ուզես առանց
 մեղաց ապրիլ, չէ թէ մինակ պէտք
 է որ յիշես Մտուծոյ ներկայու-
 թիւնը, այլ և սուրբ Մտուածա-
 ծնայ . մանաւանդ ան ատենը, երբ որ
 իրեն սիրոյն համար մէկ գործք մը
 ընելու ըլլաս նէ . և որպէս զի կա-
 րենաս ամէն գործքդ աղէկ ընել :

ձեռք չի դարկած միտքդ բեր, թէ
 Մտուած իս կը տեսնայ, ինծի կը
 նայի . ու ըսէ՛ բոլորով սրտիւ առ
 սուրբ Մտուածածինը . “ Հայցեմք
 զնորոգութիւն կենաց, և պաշտպան
 զտիրամօրդ ձեռնտուութիւն ” :

ԱՂՈԹՔ

Ճաննալով իմ յանդգնութիւնս,
 որ առանց վախնալու և ամբնալու
 մեղանչեր եմ Մտուծոյ առջևը, իր
 մեծութիւնը բանի տեղ չի դնելով,
 անուշ սէրը ոտքի տակ եմ առեր .
 ու հիմա երեւս չունենալով իր առ-
 ջևը երեսնալու, քեզի կը դիմեմ
 սուրբ Մտուածածին : Պուն որ
 մայր դթած ես ու բարեխօս մեղա-
 ւորներու, միջնորդ եղիր իմ հաշ-
 տութեանս : Արցալիմ ու կը զըզ-
 ջամ որ առանց մտմտալու մեղան-
 չեր եմ իմ ստեղծողիս աչքին առ-
 ջևը, սրտոցուցեր եմ իմ փրկիչս,
 իմ հայրս, իմ դատաւորս : Եւ կըը-
 նար գոցել ըրածներս, որ ամէն ալ

յայտնի են իրեն • չեմ կրնար ար-
գարանալ, ինչու որ ինքն է վկայ ը-
րածնեբուս • չեմ կրնար բան մը ը-
սել, վասն զի զիտեմ իմ չարութիւն-
ներս • ուստի ես ինձի ամբնջալով
կը խոստովանիմ մեղքերս Մտու-
ծոյ առջևը, ու կ'ըսեմ Գաւիթ
մարգարէին հետ • “ Բեզ միայն
մեղայ Տէր, և զչար առաջի քո ա-
րարի • ” Կապաւնիմ քու միջնոր-
դութեանդ մայր զորմութեան, որ
իմ մեղքերուս թողութիւն ընդու-
նիս ու տաս ինձի շնորհք, որպէս զի
ասկից ետքը Մտուծոյ վախը աչ-
քիս առջևը ըլլալով, սրբութեամբ
անցնեմ իմ կեանքս, ու արժանի
ըլլամ երկնից արքայութեան :

ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԻ ՕՐ

Առտուծոյ ու սատանային ծառայորեանց
վրայ :

Ա. Աղէկ մտմբտա թէ որոն կ'ու-
ղես ծառայել : Մտուծոյ թէ սա-
տանային • Ինչու որ երկուքին մէկ-
տեղ ծառայել չըլլար : Մտուած
ու սատանայ անհաշտ թշնամի են
մէկմէկու, ուստի երկուքին մէկտեղ
ծառայել ու հաճոյ ըլլալ անկարելի
բան է : () որ մը ապաշխարող ըլլալ
Յիսուսին ձեռաց ներքևը, ու մէ-
կալ որ մեղաւոր դառնալ սատա-
նային տակը • որ մը ջերմեռանդ ա-
զթասէր ու պահէցող ըլլալ, և որ
մը մեղքի ու անկարգութեան հետ,
ըսել է թէ սատանային բարեկամ
եմ, ու կ'ուղեմ իտրել զՄտուած :

Բ. Թէ որ կ'ուղես Մտուծոյ ծա-
ռայել, նեղութիւն քաշելը քիչ ա-
տեն է • Իսկ ուրախութիւնը պիտի
ըլլայ յաւիտենական : Բանի մը

տարի է աղաշխարհանքդ, իսկ մխի-
թարու թիւնը յաւիտենական. թող
որ Մատուած քաղցր տէր ըլլալով,
գիտէ օգնել, սիրտ տալ, ու մխի-
թարել զբեզ աս կենացս մէջն ալ:
Թէ որ Մատուծոյ ծառայելու հա-
մար խաչ պիտի քաշես, մի վախ-
նար. քու խաչդ չըլլար անանկ ծանր,
ինչպէս որ եղաւ անմեղ Յիսուսինը:
Գ. Եթէ կ'ուզես սատանային
ծառայել, ու բախու թիւնդ քիչ կ'ըլ-
լայ, իսկ նեղու թիւնդ յաւիտենա-
կան: Մտմբաս մէյ մը անհաւատ
ու անօրէն մեռած թագաւորները,
որ ասօրուան օրս դժօխքն են, ու
յաւիտենաս պիտի մնան ան տեղը:
Թող որ սատանան չիկրնար ամե-
նեւին աս աշխրբբիս մէջն ալ մխի-
թարել իր ծառաները. վասն զի ա-
մէն մեզք ունի հետը իր նեղու թիւ-
նը. ինչպէս որ համը առած կ'ըլլաս
մեղանչելովդ ու սատանային կամբը
կատարելով: Եղէկ գիտցիր աս ալ,
որ սատանան անանկ կ'ատէ զբեզ,
որ մէկ ուրիշ թշնամի մը չիկրնար

անանկ ատել. ուստի ինչ բարու
թիւն կրնաս յուսալ իրմէ:

Պարտաւոր է թէ որ կ'ուզես խալտիւ
սատանային ձեռքէն, ինկիր սուրբ
Մատուածածնայ օտքը, ու խնդրե-
լով իր զօրաւոր միջնորդու թիւնը
քեզի համար, ըսէ՛ յիսուսին. «Տուր
զօրու թիւն ծառայի քո, կեցի՛ զսր-
զի աղախնոյ քո, և արա՛ առ իսնը-
շան բարու թեան: Տեսցեն ատելիք
իմ և ամաչեսցեն. զի դու Տէր օգ-
նեցեր ինձ և մխիթարեցեր զիս »:

ԱՂՈՅՔ

Տարակուսեալ հոգեւով կը դիմեմ՝
քեզի սուրբ Մատուածածին, դուն
որ քուկին սրբու թեամբդ կօխեցիր
սատանային զուխը, ու եղար մեղե
միջնորդ փրկու թեան ու ազատու-
թեան անոր ձեռքէն, մի թողուր որ
նորէն մասնու իմ սատանային ձեռ-
քը. քու զօրաւոր պաշտպանու թէդ
խորտակէ իր զօրու թիւնը. լուսա-
ւորէ՛ իմ միտքս որ ձանձամ անոր

Երևան

խաբէու թիւնները ու փախչիմ հե-
ռանամ որոգայ թներէն, որով կ'ու-
ղէ հեռացընել զիս իմ ստեղծողէս :
Տուր ինձի շնորհք՝ որ ծառայեմ
մինակ Մատուծոյ իմ ստեղծողիս,
իմ փրկչիս, իմ բարեբարիս, որ ար-
ժանի է ամէն սիրոյ ու ծառայու-
թեան : Ար ցաւ իմ որ այսչափ ատեն
Մատուծոյ ծառայելու տեղ, սատա-
նային մտիկ ընելով՝ չար կամքս պաշ-
տեր եմ, ու անկարգ յօժարու թիւն-
ներս կատարեի եմ. չեմ մտմըտա-
ցեր թէ մէկ օր մը պիտոր պատաս-
խանտամ Մատուծոյ պիտի ըննու իմ
ու դատու իմ իր առջևը : Այն կու-
րու թեանս, որ ամենն ին չեմ ձանչ-
ցեր իմ պարտքս, ու անհոգ եմ ե-
ղեր ընելու . ուստի կ'իյնիմ քու ստբդ
սուրբ Մատուածածին . դուն որ այս-
չափ հրաշք ըրեր ես մեղաւորաց
դառնալուն համար, ցըցուր իմ վրաս
ալ քու ողորմու թիւնդ, որպէս զի
ես ալ արդարանալով իմ մեղքե-
րէս, փառաւորեմ քու գծու թիւնդ,
որ ամենուն կ'ուզես մայրու թիւն
ընել :

ԳՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Ապաշխարոյիսը ոչսացընկուն վրայ :

Ա. Կ'ուզէս մեղքէն ետ կենալ,
կ'ուզէս մէկ օր մը դբեղ Մատուծոյ
տալ : Գիտեմ որ կ'ուզես անտարա-
կոյս : Բայց թէ երբ, յայտնի չէ :
Ես օր չըլլար կ'ըսես . ինչու որ ըս-
տրկելու բաներ ունիմ . մէկ քանի
մտմըտալիք ունիմ . սիրտս քանի մը
բան կայ՝ լմընցընեմ ու ետքը : Աս-
կայն եթէ այսօր դժարու թիւն կ'ի-
մանաս ապաշխարելու՝ վարքդ շտ-
կելու, գիտցի՛ր որ նոյն դժարու թիւ-
նը պիտի ունենաս ամէն օր : Հապա
էրբ պիտոր դառնաս առ Մատուած :
Կ'ըսես թէ կը նայիմ որ աս ար-
գելքս վերնայ . սրտիս խռովու թիւ-
նը դադրի . երիտասարդու թիւնս
անցնի, ու ետքը անտարակոյս պիտի
ձեռք վարնեմ զիս շտկելու : Քանի
ատեն է որ միտքդ դրեր ես ու կը

զրուցես զասիկայ . բայց ամենևին
ձեռք չես զարներ :

Բ. Գ) ուն որ կ'ուշացընես ապաշ-
խարելդ , ու կը նայիս ատենի , ինչ
գիտես՝ Լստուած ալ քեզի կը սպա-
սէ մի : Ինչո՞ւ համար ասանկ անհիմն
բաներով քու հոգւոյդ փրկու թեան
գործքը ձեռքէ կը թողուս : Եր վախ-
նամ որ ատ բանիդ համար Լստուած
ալ չի համբերէ քեզի . ձանձրանայ
քու սուտ խոստմունքներէդ ու քու-
կին անհաւատարմութենէդ : Իրաւ
որ Լստուած ամենաբարի է . սա-
կայն գիտցիր որ իր բարութիւնը չա-
փէն աւելն ցրցուցեր է քեզի . ո՞վ
զիտէ՝ թէ ասկից ետքը պիտոր սկը-
սի դատաւորի պէս վարուիլ քու
հետդ : Թէ որ ուզենայ իր բարու-
թեանը համար քիչ մը ատեն ալ
անուշ վարուիլ հետդ , արժան է որ
դուն ալ ասկից ետքը սրդոզցընես
զինքը . քու մեղքովդ : Եւ մտածող :

Գ. Լսն քրիստոսեաններն որ կան
դժոխքին մէջը , կրնանք ըսել թէ

ամէնքն ալ դատապարտուած են՝ ա-
պաշխարութիւնը որէ որ ձգելով ու
ուշացընելով : Ընկայ անանկ խենդ
մը , որ ըսէ թէ չեմ՝ ուղեր դառ-
նալ՝ վարքս շահել : Բայց քիչ կը գըտ-
նուին խելայիք որ ըսեն . հիմա աս
ատենս կ'ուզեմ՝ դառնալ ու ապաշ-
խարել : Եւ հին որ համնի նէ , ան
ատենն ալ կը նային ուշացընել , յու-
սալով որ չեն մեռնիր ան հիւան-
դութեան մէջը , ան օրը ու ան ա-
տենը : Եւ կն որ աղէկ ատենին մէ-
ջը չէ ապաշխարած , ինչպէս կրնայ
ընել անանկ ժամանակ մը , որ Լս-
տուած իրեն չէ յայտնած , ու ինքն
ալ բոլոր կենացը մէջ ուղեր է զ՝ Լս-
տուած խաբել : Եւ ինչպէս մտմտան զա-
սիկայ . թէ որ դուն հիմա չես ջա-
նար վարքդ փոխել , վախցիր որ չե-
կարենաս ան ատենն ալ շահել , եր-
բոր կ'ուզես նէ :

Գ) Եւ Լստուած որ վարքերնին շըտ
կեր են նէ , այսու ամենայնիւ շատ պի-
տի վախնան մեռնելու ատենը . հա-
պա ինչ սոսկալի վախ պիտոր քաշեն

անոնք՝ որ ամենեւին անհոգ են եղեր :
 Ի՞նչ որ մահացու մեղք ունիս, ջանա՛
 որ շուտով երթաս խոստովանիս .
 իսկ եթէ Մտուծոյ շնորհացը մէջն
 ես, մտմտա՛ թէ ինչ բան է որ չե-
 թողուր քեզի բոլորովին Մտուծոյ
 ըլլալու, ու նայէ՛ որ յաղթես անոր :
 Բարեխօս բռնելով քեզի սուրբ Մ-
 տուածածինը, բռէ՛ իրեն. «Մաքեզ
 ապա ինիմք ամենասրբուհի՛ գերու-
 գոյն և հրաշարի և բաշխող բարու-
 թեանց, աղբիւր ես ծարուեաց և
 հանգիստ աշխատելոց » :

ԱՂՈԹԻՔ

Տէր իմ Հիսուս Վրիստոս, դուն
 որ չես ուղեր մեղաւորին մահը, հա-
 պա մեղքէն դառնալը ու ապաշխա-
 րելը, ես մեղաւորս բռնուած ըլլա-
 լով սատանային որոգայթներուն մէ-
 ջը, թէպէտ կը ճանչնամ մեղքե-
 րուս շատութիւնը, ու քուկին ան-
 բաւ ողորմութիւնդ, որ պատրաստ
 է թողութիւն տալու, և իմ հոգիս

մաքրելու, սակայն անհոգութեամբս
 օրէ օր կը ձգեմ իմ դառնալս ու ա-
 պաշխարելս : Ար խոստանամ ու կ'ա-
 ռաջագրեմ վարքս շտկելու, սակայն
 չունիմ սրտիս մէջը հաստատու թիւն՝
 առաջագրութեանս վրայ ամուր կե-
 նալու : Բուկին քաղցր երկայնատու-
 թիւնդ աւեր եմ ինձի պատճառ ան-
 հոգ ըլլալու . որչափ որ կ'ողորմիս ին-
 ծի ու կը համբերես, այնչափ աւե-
 լի գեշ կ'ըլլամ ու քեզ կը սրդողցը-
 նեմ : Աղաչեմ բարերար Հիսուս,
 ցրցուր ինձի քու բարկութիւնդ աշ-
 խրբքիս մէջ . որպէս զի արթննա-
 լով իմ թմրածութեանս, ճանչնամ
 քու մեծութիւնդ, քու խիսանու-
 թիւնդ, քու սէրդ որ ունիս իմ հո-
 գիս փրկելու, և զգաստութեամբ
 ջանամ ասկից ետքը իմ օրերս քու
 ծառայութեանդ մէջը անցընելու :
 Ար ինդրեմ քեզմէ փրկիչ իմ Հի-
 սուս՝ միջնորդութեամբ ամէնօր-
 հնեալ սուրբ մօրդ, մի խնայեր մաք-
 մնոյս, որպէս զի հոգիս ազատի յա-
 ւիտենական տանջանքէն :

ՔՍԱՆԵՐՈՐԻ ԱՌԱՋՆԵՐՈՐԻ ՕՐ

Խոստովանութեան վրայ :

Ա. Ար մեղանչես, ու չես ուզեր շուտով երթալ խոստովանանք ըլլալ : Թի որ հիւրնդնաս, մէկէն բըժըշկի կը վազես, որով կը ջըջընես թէ մարմնոյդ առողջութիւնը աւելի մեծ գրեր ես քան զհոգւոյդ : Վիտցի որ՝ եթէ առանց խոստովանանքի մեղքիդ մէջը մեռնիս նէ, խեղճ պիտոր ըլլաս յաւիտեանս յաւիտենից : Արչափ ու շայքնես խոստովանանքդ, այնչափ մեղքը կը հաստատուի հոգւոյդ մէջը, կ'ըլլայ քեզի սոխրութիւն ու բնութիւն : Ար նայիս որ մէկ մեծ տօնի մը, կամ զատկէ՛ի զատիկ ձգես խոստովանանք ըլլալդ . ուրեմն ձեռքդ ըլլար նէ՛ կ'ուզէիր որ զատկին՝ և կամ խոստովանանք եղած օրդ մեռնիս . սակայն չիտես երբ կը մեռնիս :

Բ. Արնաս ըսել թէ մահացու

մեղք չեմ ըրած . ուստի չեմ ալ խոստովանիր : Եայց զիտցիր որ ներելի մեղքերէն ազատ չես, ու ամէն օր կ'ընես . Ինչ ծանր պատիժներ պիտի քաշես քաւարանին մէջը ներելի մեղքերուդ համար : Արնաս հիւմակուրնէ թէ թեւջընել զան պատիժները շուտ շուտ խոստովանանք ըլլալով . Ինչո՞ համար ատանկ անհոգ ես հոգևոր օգտիդ վրայ : Թի որ երեսդ մէկ աղտ մը ըլլայ, չես ուզեր երևնալ մարդկանց մէջ՝ Ինչուան որ չիուացուիս . հապա հոգւոյդ աղտերովը Ինտոր առանց ամբնայու կ'երևնաս ու կը պարտիս Երաւօժոյ ու հրեշտակներուն առջևը :

Գ. Արնաս ըսել թէ շատ հեղ խոստովանանք եղայ ու օգուտ մը չիտեսայ . բայց մտնրտա թէ արդեօք աղէկ խոստովանանք եղեր ես մի : Եսկից ՚ի զատ՝ թէ որ աղէկ քննելով քու մեղքդ, ցաւելով, աւաջադրելով, խոստովանանք ըլլալով, նորէն կ'ընիս . հապա հիմա որ ամենեւին անհոգ ես, Ինչ օգուտ

կրնաս տեսնալ : Ո՛րչափ մեծ բան
կ'ըլլար մէկ դատապարտուած մե-
ղաւորի մը, թէ որ ունենար ան ա-
տենը ու շնորհքը խոստովանանք ըւ-
լալու՝ ինչ որ դուռն ունիս նէ հիմա,
սակայն կու գայ ժամանակ, որ դուռն
ալ պիտի փափաքիս ունենալու աս
հիմակուան ատենս, ու պիտոր չու-
նենաս :

Պատու : Եթէ աղէկ մտմբտաս
որ Մտուած կրնայ պատժել զբեղ
մեղքիդ մէջը, անտարակոյս չես
ուշացրներ քու խոստովանանքդ :
Վնենէ՛ առջի ըրած խոստովանանք-
ներդ, ու անոնց միջի եղած պակ-
սութիւնները ջանաս որ չուտով չըտ-
կես, միջնորդ բռնելով քեզի սուրբ
Մտուածածինը, ու ըսէ՛ իրեն բո-
լոր սրտով. « Մղաչեա՛ վասն մեր
զառ ՚ի քէն զմարմնացեալն Մտ-
տուած, ներել մեզ՝ անտես առնել
զյանցանս մեր » :

ԱՂՈՐԻ

Աս ինչ մեծ ողորմութիւն է որ
ինձի ըրեր ես փրկիչ իմ Հիսուս,
տալով իմ ցաւերուս համար մէկ զօ-
րաւոր դեղ մը ճնարիտ ապաշխա-
րութիւնը. որ անով մէկէն բժրը-
կուիմ իմ հոգևոր հիւանդութե-
նէս. սակայն ես չիդիմնալով, մա-
նաւանդ թէ բանի տեղ չիդնելով
անոր մեծ օգուտը, չէ թէ մինակ
անհոգ եմ եղեր բանեցրնելու, այլ
ե փասուեր եմ անկից՝ չարաչար
գործածելովս : Այն ինձի, որչափ
անշահ խոստովանանքներ եմ ըրեր,
առանց քննութեան, առանց զղջու-
մի, առանց առաջադրութեան, ու
առանց ըսելու ամէն մեղքս քահա-
նային. ուստի աւելի փասուեր եմ
խոստովանանքէն, քան թէ օգուտ
եմ տեսեր : Մտոր համար կը ցաւիմ
ու կը զղջամ Մտուած իմ Հի-
սուս, որ ինձի ըրած բարեբարու-
թիւնդ չիճանչնալով, սրդողոցեղեր

եմ գբեզ՝ իմ տէրս , իմ փրկիչս ,
 իմ բժիշկս , իմ կեանքս . ուստի հի-
 մա հիւանդ ըլլալով հոգիս , կը դի-
 մեմ քեզի՝ ու խոնարհութեամբ
 սրտի կ'իյնիմ քու սոքդ , ու անդա-
 դար կ'աղաչեմ աւետարանին միջի
 գրուած բորոտին հետ . “ Տէր , ե-
 թէ կամիս , կարող ես զիս սրբել , ”
 ինչուան որ երկնցընես քու սուրբ
 ձեռքդ իմ հոգւոյս վրայ , ու ըսես .
 “ Ամիմ սրբեաց , ” որպէս զի ող-
 ջըննալով իմ հիւանդութենէս , կա-
 ընամ քու ետեւէդ երթալ ու փա-
 ռաւորել ամենակարող զօրութիւնդ ,
 որ ամենուն բարին ու փրկութիւնը
 կ'ուզես :

ԻՍՍՆԵՐՈՐԻ ԵՐԿՐՈՐԻ ՕՐ

Սոքր հարարարեան վրայ :

Ա . Ի՛նչ մեծ պատիւ է՝ որ Յի-
 սուս ըրեր է քեզի աս բանովս : Սուրբ
 հաղորդութեամբ Յիսուս կ'ըլլայ

մեզի բարեկամ , կ'ըլլայ ընտանի ու
 կ'ըլլայ իմ տէրս : Ար կերակրէ զիս
 իր սուրբ մարմնովը ու անդին արիւ-
 նով . և զիս բոցորովին իրեն կը նը-
 մանցընէ : Իմ սիրտս ան ատենը կ'ըլ-
 լայ սուրբ ու մաքուր քան զժամե-
 ըր , քան զխորանները , քան զսկի-
 հը ու քան զայլ ամէն սուրբ գոր-
 ծիքները : Իմ հոգիս կրնայ ան ա-
 տենը ըսուիլ արքայութիւն . ինչու որ
 հոննատած է Քրիստոս փառաց թա-
 դաւորը :

Բ . Ո՛րչափ մեծ նախատինք կ'ը-
 նեմ Յիսուսին , երբ որ առանց ջեր-
 մեռանդութեան երթամ ընդունիլ
 զինքը . շուտով հեռանամ իրմէ ա-
 ռանց չնորհակալութեան , փախչիմ
 իր տեսութենէն , չերթամ իր սոքը
 աղօթք ընելու , չամբչնամ իր ներ-
 կայութենէն՝ որ նստած է խորանին
 վրայ : Ըսանկ նախատինքներ՝ մա-
 նաւանդ թէ քան զասոնք շատ ա-
 ւելի , որչափ տուեր եմ Յիսուսին .
 մեղքի մէջ ըլլալով ընդուներ եմ
 զինքը . աղտոտ բերնով Յուզային

պէս ճաշակեր եմ իր ամենասուրբ մարմինը. ու դժոխքի պէս սասանաներով լեցուած հոգիս՝ ուզեր եմ ներս առնել իմ փրկիչս:

Գ. Գիտես ինչ շնորհքներ կուտայ քեզի Յիսուս աս սուրբ հաղորդութեամբս: Ար զօրացնել ըզքեզ՝ չար սովորութիւններդ յաղծելու, սատանային դէմ դնելու, աշխրբքիս խաբէութիւններէն հեռանալու: Եւ սուրբ կերակուրը արիւթ թիւն տուաւ մարտիրոսներուն, սիրտ տուաւ հուսանքներուն, ու զանոնք սրբութեան հասուց: Ետ մեծ խեղճութիւն կ'ընեմ, թէ որ անհոգ ըլլամ վատարկելու զաս շնորհքներս: Առակից է որ միշտ տկար եմ փորձու թիւններու դէմ, ու ամենեկին առաջ չեմ երթար առաքինութեանց մէջը. վասն զի պատկառանքով չեմ մտնենար Յիսուսին քովը. բանի տեղ չեմ դներ Յիսուսին ներկայութիւնը, չեմ մտմտար արժանաւոր պատուով ընդունիլ զինքը իմ սիրտս: Ինչու համար

փոյթ չունիմ բարի վարքով զիս իրեն սիրելի ընելու:

Պարտաւ: Եթէ ամէն օր չես կըրնար սրբութիւն առնել, ջանս որ գոնէ հոգևորապէս բաղձանքով հաղորդուիս, բարեխօս բռնելով սուրբ Եստուածածինը: Գիտայիր որ՝ եթէ սուրբ Եստուածածինը մէկի մը վրայ մասնաւոր խնամք ունենայ նէ, անիկայ առանց հաղորդութեան չիմենիր: Առտի պատուելով իր քաղցր մայրութիւնը, ըսէ՝. «Արբուհի Աբիամսափոր օսկի և տապանակ կտուկարանաց, որ զի վերուօտ զհացն կենաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս. առ նա միշտ բարեխօսեան վասն քաւութեան մեղաց մերոց»,:

ԱՂՈԹԻ

Չիտեմ թէ ինչ բանով շնորհակալութիւն ընեմ քեզի փրկիչ իմ Յիսուս, քու անհուն սիրոյդ համար որ ցրցուցեր ես ինձի ամենասուրբ հաղորդութեան խորհըր-

դովը, որով առեր էս զքեզ ինձի կերակուր ու բնակելի . ու զեր էս առանց բաժնուելու կենալ իմ հետս, ըլլալ ինձի բարեկամ, բնտանի ու սիրելի: Այն ինձի, որչափ անարժանութեամբ ընդուներ էմ զքեզ իմ սիրտս, որչափ անսպասուելի էմ քու կին մեծութիւնդ, որչափ սրդողցուցեր էմ քու կին սերդ՝ առանց պատրաստութեան ու առանց քերմեւանդութեան ընդունելով զքեզ իմ հոգիս: Կոր համար զըրկուեր էմ քու շնորհքեդ, պաղեր էմ քու սիրոյդ, չեմ առեր քու կին անուշութիւնդ . ուստի անհաստատ էմ եղեր առաքինութեան վրայ, ու հոգիս այ տկար մնալով, խաբուեր է սատանայէն ու հեռացեր է քեզմէ: Հիմա ճանչնալով իմ պակսութիւնս, կը ցաւ իմ ապերախտութեանս վրայ, որ այսպիսի անհուն պարզեւզ մտոցեր էմ, ու կ'աղաչեմ զքեզ փրկելիք իմ հիսուս, թողութիւն տալով ըրած մեղքերուս, սրբէ ու նորոգէ իմ հոգիս, որ ասկից ետքը ար

ժանապէս ընդունիմ զքեզ . վառէ իմ սիրտս աստուածային սիրովդ, որ էս ալ ըլլամ քեզի պատարագ սերոյ, նուիրելով իմ բոլոր կեանքս քու ծառայութեանդ:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՕՐ

Ստորոյ ծածուկ շնորհներուն վրայ:

Ա. Գիտե՛ս թէ Մտուած ինչ ճամբաներով մեզ կանչեր է ու կը կանչէ իրեն . երբեմն սրտերնիս շարժելով ու մտքերնիս լուսաւորելով . երբեմն ծածուկ մէկ բարեկամի մը, կամ խոստովանահօր բերնով . երբեմն յայտնի պատիժ մը խրկելով, կամ մէկ բարոզ մը լսել տալով, կամ հոգեւոր գրքեր կարդալ տալով: Սեղաւոր մը երբոր դառնալու ըլլայ իր մեղքէն, կարծես թէ Մտուած կ'ըսէ անոր սրտին մէջը, թէ փոխէ քու վարքդ: Հանկարծակի մահ մը թէ որ հանդիպի մէկին, ամենուն քա-

րող կ'ըլլայ, թէ խոստովանանք եղէք մեղքերնիդ. ու պատրաստ կեցէք: Հիւանդութիւնները ու աշխրջքիս նեղութիւնները անդադար քարոզ կու տան, թէ մեղքէն փախէք ու հեռացէք: Հանգիստը ու ուրախութիւնը կը շարժէ սրտերնուս փափաքը, թէ իրջափ անուշ է Մտուծոյ ծառայելը:

Բ. Մտուած թէպէտ և կը կանչէ զմեզ, սակայն մեզի կ'իյնի հնազանդիւր իրեն: Հոգին սուրբ իրաւըս է՝ որ կը լուսաւորէ, կ'արթնցընէ ու կը պողաբերէ. բժիշկ է՝ որ կ'առողջացընէ, բայց անսոց մինակ կու տայ առողջութիւն, որոնք որ կ'ուզեն ու կը փափաքին նէ. ան սրբտերը մինակ չէն կը պահէ ու կը զարգարէ, որոնք որ իր առջևը զիրենք կը բանան. ան հոգիները կը լուսաւորէ, որոնք որ իրենց պատուհանը չեն գոցեր արևուն դէմ: Մտուած չնորհք կու տայ մեզի, կ'ուզէ որ փրկու թեան համինք. բայց չուզեր որ առանց աշխատանքի փրկուինք.

կ'ուզէ որ սուրբ ըլլանք, բայց չուզեր որ բանու թեամբ ըլլանք: Ինչ մեծ անկարգութիւն է փախչիւր քարոզէն, թողու խոստովանահայրը, չիկարդալ հոգևոր գիրք մը, որ մարգուն սիրտը կը շարժէ, ու մեղքը երեսը կու տայ: Ըս փախչիւր չէ թէ մինակ անհնազանդութիւն է, հասա ապստամբութիւն ալ կը սեպուի հոգւոյն սրբոյ դէմ:

Գ. Մտուած կը կանչէ զմեզ, սակայն վայ մեզի՝ թէ որ շուտով մտիկ չընենք իրեն: Սուրբ Մատթէոս Յիսուսին ձայնը լսածին պէս՝ թողուց իր ամէն բանը, ու գնաց Յիսուսին ետևէն. ուստի մարտաւոր ըլլալովը եղաւ առաքեալ ու աւետարանիչ: Սուրբ Պետրոս Յիսուսին մէկ նայելովը զգաստացաւ իր մեղքէն, ու ապաշխարութեան արցունքով լեցուեցան իր աչքերը. զողջաց ու եղաւ սուրբ և զլուխ առաքելոց: Յուդա մտիկ չըրաւ Յիսուսին խրատներուն ու իր խղճմանքին դրդելուն, անոր համար յու-

սահառեցաւ ու դատաւարտուեցաւ : Ո՛վ գիտէ թէ ան ծածուկ շնորհքն որ հիմա սրտիդ մէջը կ'իմանաս, ըլլայ ետքի շնորհքը որ Մատուած կու տայ կոր քեզի . եթէ մը տիկ ըրիր, փրկու թեան կը հասնիս . թէ չէ, կը դատաւարտուիս : Ո՛վ որ Մատուած կը կանչէ զքեզ մէկ աղէկ կենաց մը ձեռք զարնելու, ու դուն ալ շուտով չես հնազանդիր երեսն, կարելի է որ սրդողի ու մէյ մ'ալ չիկանչէ, դուն ալ քու զըլխուդ գէշ ճամբայ մը բռնես . նայէ որ ան ատենը ինչ պիտի ըլլայ քեզի :

Պրոտոյ : Վեր թէ հոգեվարու թեան մէջ էս . ու մամբտա թէ ինչ բանի վրայ խղճմտանքդ աւելի կըրնայ զարնել, հիմակուքնէ ջանս որ դեղ ընես, խնդրելով սուրբ Մատուածածնայ միջնորդութիւնը, ու ըսէ իրեն բողբով սրտիս . “ Ի քեզ եմք ապաւինեալ Քրիստոսի մայր Մատուծոյ մերոյ . . . մի դադարիր բարեխօսել վասն մեր՝ Քրիստոսի մայր Մատուծոյ մերոյ ” :

ԱՂՕԹԻ

Վայ իմ խաւարած մտքիս, չեմ տեսեր Մատուծոյ ինծի տուած ծածուկ շնորհքները . վայ իմ քարացեալ սրտիս, որ չեմ շարժեր Մատուծոյ շնորհքներովը : Ո՛րչափ կանչեր է զիս Մատուած իր ողորմութեամբը յորդորելով իմ հոգիս . իր արդարութեամբը պատժելով իմ մարմինս ու ունեցած բարիքս . սակայն էս ոչ ողորմութենէն շարժեր եմ, և ոչ արդարութենէն վախցեր եմ : Ո՛րչափ շնորհքներ կորսնցուցեր եմ, որով կրնայի դառնալ իմ մեղքէս, կրնայի բարիք ընել, կրնայի հաճոյ ըլլալ Մատուծոյ, ու կրնայի փրկու թեան հասնիլ : Հիմա որ զըրկուած եմ ամենէն, չիտեմ ընելիքս . քայցե թէ ապաւինիլ քու բարեխօսութեանդ սուրբ Մատուածածին . ո՛վ գիտէ՝ թէ աս ալ մասնաւոր շնորհք մըն է ինծի, որ կը շարժէ զիս քու կին մայրութեանդ զի :

մել, քու միջնորդութեանդ իցնիլ :
 Վիտեմ մայր Մատուծոյ, որ շատ մե-
 ղաւ որներ քու կին զորաւոր պաշտ-
 պանութեամբդ արդարացեր են, ու
 իրենց հոգին փրկութեան է հասեր :
 Ես ալ մէկն եմ անոնցմէ, ուստի
 կ'աղաչեմ խոնարհութեամբ սրտի,
 որ ինձի ալ ողորմիս ու տաս շնորհք
 ճշմարիտ խոստովանութեան և ա-
 պաշխարութեան, որով ըլլամ հա-
 խոյ Մատուծոյ, ու քու մայրութիւնդ
 իմ հոգւոյս փրկութեամբը փառա-
 ւորուի :

ԳՍԱՆԵՐՈՐԿ ԶՈՐԻՈՐԿ ՕՐ

Ներկի մեղաց վրայ :

Ա. Շատ անգամ կ'ըսուի թէ
 ներելի մեղքը պղտի բան մըն է . սա-
 կայն գիտցիր որ զՄատուած սրբող-
 ցնելը պղտիկ բան չէ : Մատուած
 որ մեծ է, մեր բարի հայրն է, մեր
 տէրն է, մեր գթած փրկիչն է, շատ

ծանր յանդգնութիւն ու ապերախ-
 տութիւն է զինքը սրբողցնելը . ա-
 նանկ որ պղտիկ բան մը սեպելու է
 անոր քովը բոլոր աշխարհիս փչելը
 ու կորսուիլը : Մէկ պղտիկ ներելի
 մեղք մը՝ որ Մատուծոյ դէմ կ'ըլ-
 լայ, շատ աւելի վնաս է՝ քան երկնի
 ու երկրիս ոչոնանալը :

Բ. (Թ)է որ մէկը գիպուածով կամ
 առանց գիտնալու մեղանէ, արժա-
 նի է թողութեան . բայց գիտնա-
 լով թէ ան սուտը, կամ աս անհնա-
 զանդութիւնը ներելի մեղք է, ու
 անհոգ ըլլալով մեղանէ, ըսել է՝
 թէ կ'ուզեմ իմ կամքս կատարել,
 ու հոգս չէ Մատուծոյ սրբողիլը : Սա-
 կայն գիտցիր որ սովորութիւն ընե-
 լով զՄատուած սրբողցնելը, ու բա-
 նի տեղ չի գնել Մատուծոյ կամքին
 անհնազանդ ըլլալը, թէպէտ և մանր
 ու ոչինչ բաներու մէջ ըլլայ, ծանր
 կու գայ իր հայրական սրտին . տես-
 նելով որ զաւկըները անհոգ են ու
 բանի տեղ չեն սեպեր իրենց հօրը
 սրբողիլը :

Գ. Թե որ ասանկ անհոգ ըլլալով ներելի մեղքերուն վրայ կէանքդ անցընես, զիտցիր որ մէկ օր մը աստարակոյս կ'իջնիս մահացու մեղքի մէջ. ինչու որ Մատուած շատ չիկըրնար կենալ ան մարդուն հետ, որ զինքը անդադար կը սրդողցընէ: Մեկից 'ի զատ' չէս մտմտար որ մանր մեղքերով կամաց կամաց հոգւոյդ ուժը կը պակսի, մահը ու դժոխքը քեզ չեն վախցըներ, ու Մատուած սլ քիչ քիչ կը հեռանայ քեզմէ: Ետ անդամ մահացու մեղքերուն քովը կը պտըտիս, ու չես իմանար. ո՞վ զիտէ թէ չէս ալ ինկնար: Կ'ուզեմ կ'ըսես փրկութեան հասնիլ, ու միշտ վտանգներու մէջ կը պտըտիս:

Պրոտէ: Ս'անա որ պատարագ տեսնալու ատենդ՝ մասնաւոր պատկառանք մը ունենաս, ու պարկեշտութեամբ աղօթք ընես. զիտցիր որ շատ պակասութիւններ թեթեւ ու ոչինչ բան մը կ'երևնան, բայց անհաճոյ են Մատուծոյ ու սուրբ Մ.

տուածածնայ, ուստի ինդրելով քեզի օգնութիւն, ըսէ՛ առ սուրբ տիրամայրը. «Վ. քեզ եմք ապաւինեալ, ամէնօր հնեալ սրբուհի. լէր բարեխօս անդադար վասն մերոյ փրկութեան»,:

ԱՂՕԹԻ

Ո՛վ անարատ կոյս սուրբ Մ. տուածածին, որ սրբութեան օրինակն ես ու անմեղութեան հայլի, կ'աղաչեմ քու անարատ մաքրութեանդ համար լուս ու սրբէ՛ իմ սիրտս ու հոգիս ամէն աղտոտութենէ: Գաւն որ աղբիւր ես Մ. տուծոյ շնորհներուն, ու քեզմով կ'ընդունինք մեր կենդանութեան ջուրը, արժանի ըրի՛ իմ ծարուած հոգիս՝ որ թուլցեր ու տկարացեր է զանազան մեղքով, որպէս զի առնում զօրութիւն ու արիւնամ մէն տեսակ մեղքերու դէմ. մանաւանդ ան մեղքերուն, որ առանց զիտնալու, առանց ձանձնալու, ու ա.

ուանց մտածելու որէ որ անդադար
 խնկելով՝ կը սրդողջընեմ իմ քաղցր
 փրկիչս, իմ ահաւոր տէրս, ու իմ
 դժած հայրս: Պիտեմ մայր Մ.
 տուծոյ, որ քեզի հաճոյ է աս խրն
 զիրքս. ուստի անտարակոյս եմ թէ
 կու տաս ինձի անանկ շնորհք մը,
 որ կարենամ իմ կեանքս սուրբ ու
 անարատ անցընելով փառաւորել
 իմ փրկիչս Հիսուս, ու արժանի ըլ-
 լալ արքայութեան:

ՔՍՍՆԵՐՈՐԳ ՀԻՆԳԵՐՈՐԳ ՕՐ

Քառարանին վրայ:

Ա. Մտմբտա թէ ինչ բան է քա-
 ւարանը: Սէկ բանտ մըն է լեցուն
 կրակով, զոր վառեր է աստուածայ-
 ին արդարութիւնը: Ընանկ տեղ
 մըն է, ուր մարդը թէպէտ և կը սի-
 րէ զՍտուած, սակայն կը քաշէ Մ.
 տուծոյ պատիժն ալ. կը փափաքի
 տեսնալ իր ստեղծողը, ու չի կրնար.

կը սպասէ մէկ ատենի մը՝ որ երթայ
 արքայութիւն, ու չիտէ թէ երբ կը
 հասնի: Արչարչարուի անանկ ծանր
 տանջանքներով, որ չի գտուիր աշ-
 խրըքիս մէջը. սակայն պէտք է որ
 քաշէ առանց վարձքի, առջի ըրած
 թեթեւ մեղքերուն համար, ու թու
 զուած մեղքերուն ալ ապաշխարան
 քը չընելուն համար: Ընանկ տեղ
 մըն է, որ մինակ մտմբտալը մար-
 դուն սիրտը դող կը ձգէ. սակայն
 դուն ամենեւին բանի մը տեղ չես
 դներ զանիկայ:

Բ. Մտմբտա թէ ինչու համար
 կ'երթըցուի քաւարանը: Սէկ թե-
 թեւ բանի մը համար, որ մարդիկ
 մեղքի տեղ ալ չեն դներ: Պզտիկ
 անհոգութի մը աղօթքի մէջ. պրդ-
 տի խօսակցութիւն մը եկեղեցնայ
 մէջ. ոչինչ փափաք մը կամ մտմբ-
 տուք մը աշխրըքիս ունայն բանե-
 լուն. աւելորդ ծիծաղ մը. և այլ
 ուրիշ մանր բաներ, ինչպէս որ Մ.
 տուած շատ անգամ յայտներ է
 սուրբերուն: Ըսոնցմէ իմացիր թէ

ինչ պիտոր ըլլայ քեզի այդչափ բարկու թիւններուդ համար, սուտ խօսիլներուդ, անհնազանդու թիւններուդ, եկեղեցնայ մէջ ըրած անկարգու թիւններուդ, պարտքերուդ վըրայ անհոգ ըլլալուդ, դատարկ խօսքերուդ, աւելորդ զարդարանքներուդ, ու այլ անհամար պակաս թիւններուդ համար որ ըրեր ես ուրիշի դէմ, ու չես մտմտար դեղ մը ընելու :

Գ. Ստմբտան թէ որչափ ատեն պիտի կենաս քաւարանին մէջը : Լ'քտուած ամէն մէկին իր մեղացը յարմար կը չափէ պատիժը . որչափ շատ է ներելի մեղքդ կամ թողուած մա՛հուչափ մեղքերուդ քաշելու պատիժը, այնչափ աւելի պէտք է որ զրկուած կենաս Լ'ցտուծոյ ցանկալի տեսու թենէն : Լ'ն ծաստիկ փափաքն որ ունի մեր հոգին մեռնելէն ետքը շուտով տեսնալու զԼ'ցտուած, որչափ քիչ ատեն ալ զրկուած մնայ անկից, միշտ մեծ տանջանք է ու շատ կ'երևնայ իրեն, որովհետեւ չէ

հասած իր փափաքանայը ու ետքի վախճանին . ուստի մէկ օրը ամիսներ կ'ըլլայ իրեն, և ամիսը հարիւրաւոր տարիներ : Լայէ թէ ինչ գնով ծախու կ'առնես մէկ թեթեւ ու ներելի մեղք մը :

Պատու : Ստանաւ որ ջերմեռանդու թիւն ընելով ըսէ՛ Ստորոց կորդոյի սաղմուսը քաւարանը եղած ան հոգիին համար, որ իր կենացը մէջ աւելի ջերմեռանդ է եղեր սուրբ Լ'ցտուածածնայ . աղաչելով զտիրամայրը, որ դքեղ ալ ազատէ քաւարանին տանջանքէն . ուստի ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ . “ Սիրոյ անմահ փեսային եղեր դու մայր Ստրիամ, բարեխօսեան վասն մեր 'ի յայնմ աւուր ահեղին ” :

ԱՂՕԹԲ

Ո՛վ սրբութիւն սրբոց և անբաւելի բարութիւն Լ'ցտուած իմ ճե սուս, որ ուղենալով իմ փրկութիւնս՝ զրեր ես ամէն ճամբան մաք

րուելու, սրբուելու ու անարատու-
 թեամբ քու քովդ հասնելու ար-
 քայու թեան մէջ: Վիտեմ տէր,
 որ հողեղէն ըլլալովս չեմ կրնար աշ-
 խրրբիս մէջը ազատ ըլլալ ամէն մեղ-
 քէ, չեմ կրնար անանկ սրբուիլ, որ
 չըլլամ կարօտ քաւարանին մաքրու-
 թեանը. սակայն ապաւինելով քու
 ողորմութեանդ՝ կ'աղաչեմ փրկիչ
 իմ Հիսուս, տուր ինձի որ աս աշ-
 խրրբիս մէջը քաշեմ իմ արաշխա-
 րանքս, հոս նեղութիմ, հոս տան-
 ջութիմ, հոս խաչութիմու մեռնիմ քե-
 ղի հետ, որպէս զի լուացուելով իմ
 ամէն աղատուութեանս՝ առանց տան-
 ջանաց քաւարանին արժանի ըլլամ
 սսկենասուրբ երեսդ տեսնալու: Աբ
 խնդրեմ քեզմէ ալ մայր ողորմու-
 թեան. քու մայրական խնամքդ ցը-
 ցնելով իմ վրաս, միջնորդ եղիր առ
 Արդիդ քո միածին աս իմ խնդիրքս
 կատարելու, որպէս զի մաքուր և ան-
 բիծ հօգուով աղէկ ծառայեմ Մը-
 տուծոյ, ու քու սրաշապանութիւնդ
 առանց քաւարանի հասնիմ արքայ-

ութիւն, և հոն վայելեմ իմ յաւի-
 տենական երանութիւնս՝ տեսնա-
 լով զԱստուած ու ժառանգելով զին-
 քը յաւիտեանս յաւիտենից:

ՔՍՍՆԵՐՈՐԴ ՎԵՅԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսին տղայութեանը վրայ:

Ա. Մտմբան մանուկ Հիսուսին
 աղքատութեանը իր ծննդեան ատե-
 նը, ու նայէ թէ ինչ կարօտութիւն
 ներ քաշեց: Տուն մը չունենալով՝
 պէտք եղաւ որ մորին մէջը ծնանի:
 Լ'նկողին չունենալով՝ հարկ եղաւ
 որ կտոր մը խոտին վրայ պառկի:
 Տաքնալու համար կրակ չունենա-
 լով՝ կարօտ եղաւ որ երկու կենդա-
 նիք երեսն շնչով զինքը տաքցընեն:
 Անոց ըլլալ որ խանձարուրէն զատ՝
 պլլուելու լաթ չունէր, պէտք եղաւ
 որ սուրբ Հոլմէփ իր լաթովը ծած-
 կէ: Հիսուս ասանկ աղքատ է. իսկ

դուն մեծութիւն կը սիրես, ու ետեւէն ալ կ'իյնիս:

Բ. Ստմբտան Թէ Յիսուս ինչ նեղութիւն ալ քաշեց ան աղքատութեանը մէջ: Լինի ու փափուկ մարմնով ինչ ցուրտ քաշած պիտի ըլլայ ան ձմեռուան ատենը, ինչ չար չարանք՝ ան չոր խոտին վրայ պառկելովը, և որչափ ուրիշ նեղութիւններ ալ քաշած կ'ըլլայ իր անէն դուրս ըլլալով: Սակայն աս ամէն վշտաց մէջը չիստեցաւ բերնէն մէկ ձիւ մը, կամ առ ընտրէն արցունք մը: Յիսուս ասանկ համբերող է. իսկ դուն հանգստեան և ուրախութեան ետեւէ ես:

Գ. Ստմբտան Յիսուսին խոնարհութիւնն ալ, նայէ ինչպէս ծնաւ: Սուրբ գիշեր ատեն, ու անծանօթ տեղ մը, չունեցաւ մէկը՝ որ իրեն ծառայէ, բայց եթէ իր մայրը՝ ու սուրբ Յովսէփ: Ինչ մարդիկներու ճանչցուց զինքը, բայց եթէ մէկ քանի գեղացի հովուներու, երեցնելով զինքը մէկ խեղճ աղքատի մը

պէս. ու չիզանուեցաւ մէկը, որ զինքը գիշեր մը տուն ընդունի ողորմութեան համար: Յիսուս ասանկ խոնարհ է, իսկ դուն կ'ուզես որ ամէնը քեզ պատուեն ու մեծարեն: Գնան մտքովդ Յիսուս մանուկին քովը, ու մտիկ ըրէ ինչ քարոզ կու տան քեզի ան մտուրը, ան չոր խոտերը ուր պառկեր է Վրիստոս, ու ամբողջը քու կենացդ վրայ:

Պարտաւ: Սովորութիւն ըրէ քեզի, որ ամէն դործքիդ մէջը միտքդ բերես Յիսուս ու սուրբ Ստուածածինը, իրենց յանձնելով քու ամէն բանդ՝ ու խնդրելով օգնութիւն որ կարենաս ըլլալ ճշմարիտ հետեւող Վրիստոսի, ու ըսէ՛ բոլորով սրտիս. «() Ըհնեալ ես դու՛ ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո »:

ԱՂԹԹԻ

Ո՛վ Մտուած իմ Յիսուս մըտ-
մըտալով քու խոնարհութիւնդ, քու
աղքատութիւնդ, քու նեղութիւնդ
որ քաշեր ես ինձի համար, մանա-
ւանդ պղտիկութեանդ ատեն, կը
ցաւ իմ ու կը զղջամ իմ հպարտու-
թեանս վրայ: Իսկ որ Մտուած
ըլլալով անկարօտ բանի մը, ու զե-
ցիր իմ փրկութեանս համար զըր-
կուիլ ամէն բանէն, ինչուան չիզբա-
նուեցաւ տուն մը՝ ուր կարենաս ծնա-
նիլ ու հանգչիլ. իսկ ես որ ոչինչ եմ
քու առջևդ՝ իմ հպարտութեամբս
չէ թէ մինակ հանդիստս կը փնտը-
ռեմ, այլ և աւելորդ ու անշահ բա-
ներու ետեւէ եմ, որով կը ցրցընեմ
թէ չեմ քու շնորհաւ աչկերտդ,
չեմ ուզեր քու ետեւէդ երթալ, ու
վարբիդ նմանիլ: Մասնկ ըլլալով
ինչպէս կրնամ յոյս ունենալ ար-
քայութիւն հասնելու, ու իմ հո-
գիս փրկելու, որովհետեւ արքայու-

թեան ճամբէն դուրս կը պտըտիմ,
ու չեմ ուզեր քու խոնարհութեանդ
հետեւիլ: Այդպէս փրկիչ իմ Յի-
սուս, միջնորդութեամբ անարատ
Ծնողիդ լուսաւորէ իմ միտքս, զօ-
րացուր իմ հաւատքս որ կարենամ
ճանչնալ ինձի տուած օրինակներդ,
ու բոլորով սրաիւ հետեւիլ անոնց.
որպէս զի վարբուս ցրցընեմ թէ
իրաւ քու աչկերտդ եմ, ու կը փա-
փաքիմ զքեզ պաշտել, զքեզ փա-
ռաւորել ու յաւիտեան քեզի հետ
ըլլալ արքայութեան մէջ:

ԻՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսին մեզի տուած օրինակներուն
վրայ:

Ա. Յիսուս իր տղայութեան ա-
տենը միտ հնազանդ եղաւ իր սուրբ
մօրը, ու սրբոյն Յովսեփայ: Այլե
ինչ մեծ հնազանդութիւն է՝ որ որ
զին Մտուածոյ հնազանդի ստեղ-

ծուածի մը : Ստորոտս թէ ինչ բանի մէջ հնազանդեցաւ : Իր հնազանդութիւնը երևցուց ամէն խոնարհ աշխատանքներու մէջ . ինչուան ալել ու փայտ կտորել . որ տեսնողները կարծեցին թէ հիւսան (փխրկերի) զաւակ մըն է : Ուստի աշխատանքներս անանկ սիրով ու յօժարութեամբ կ'ընէր, ինչպէս թէ հնազանդիլը ըլլար իր պարտքը : Հիմա նայէ թէ ինչ մեծ ամօթ է քուան հնազանդութիւնդ, որ կը ցըցնէս մեծաւորներուդ :

Բ . Յիսուս իր տղայութեան ատենը անդադար աշխատանքի ու ազօթքի հետ էր . չէ թէ պարտալիւնայէն վախ մը ունէր, կամ վտանգ կար փորձութիւն քաշելու, (որ ազատ էր ասանկ բաներէն), հասպառուղեց բարի օրինակ տալ տկար ու ողորմելի կտրիճներուն, որպէս զի իրենք ալ աշխատանաց ու ազօթքի հետ ըլլան, աշխարհիս ու սատանային փորձութիւններէն խալըսելու համար :

Գ . Յիսուս որչափ որ տարուք կը մեծնար, այնչափ աւելի իր սրբութիւնը դրսէն կ'երևցընէր . չէ թէ մինակ հօր Մտուծոյ առջևը՝ այլ և մարդիկներուն կը ցըցընէր, որպէս զի սորվցընէ մեզի, թէ պէտք է դրսուանց ալ աղէկ երևնալ՝ ուրիշի բարի օրինակ ու շինութիւն տալու համար : Եւ ինչպէս որ Յիսուս առաջ իր հօրը, այսինքն Մտուծոյ աջքին աղէկ երևցաւ, ու ետքը մարդիկներուն, ասանկ ալ մենք պիտի ջանանք որ էս առաջ Մտուծոյ հաւնոյ ըլլանք : Ուստի մեծ ամօթ է մեզի՝ որ անհոգ ենք աղէկ ըլլալու, ուրիշի բարի օրինակ տալու . և ասոր ներհակ՝ մարդկային նիստման համար կեանքերնիս գէշ կ'անցընենք :

Պատու : Չանան որ դատարի ատեն ամենեւին չանցընէս . և եթէ բան մը չունենաս ընելու, կարդան անանկ գիրք մը, որ սուրբ Մտուծոյ ծածնայ մեծութիւնը, փառքը, մայրական խնամքը ու ջերմեռանդութիւնը սորվցընէ քեզի : Եւ ըսէ՛

իրեն բողոքով սրտիւ . “ Կառ կե-
նաց , որ զանմահութեան պտուղն
'ի քէն ետուր նախնոյ մօրն Եւայի'
'ի մահաբեր երկանց ազատելով . բա-
րեխօսեալ առ Տէր վասն մերոյ փրկ-
կութեան ” :

ԱՂՈԹՊ

Շնորհակալ եմ քեզմէ Լ'ստուած
իմ Յիսուս , որ քուկին տուած բա-
րի օրինակներովդ անուշցուցեր ես
արքայութեան ճամբան . խոնարհ
հնազանդութիւնդ կը յորդորէ զիս
առանց մտմտալու խոնարհիլ ու
հնազանդիլ իմ հոգևոր հօրս . քու
անդադար աղօթքդ ու աշխատանքդ
սիրտ կու տայ ինձ ի բողոք իմ կեան-
քըս Լ'ստուծոյ ճառագլութեան մէ-
ջը անցնելու , քու անուշ վարմունքդ
ու կենցաղավարութիւնդ կը շարժէ
զիս սրբութեան ու առաքինութեան
ետեւ ըլլալու : Սակայն հողեղէն ը-
լալով՝ տկարութիւնս կը վախցնէ
զիս աշխատանքէն , ետ կը քաշէ նե-

ղութենէն , ու անպտուղ կ'ընէ իմ
կեանքս : Ա'ազաչեմ փրկիլ իմ Յի-
սուս , բայ իմ աչքս , զօրացուր իմ
սիրտս , որ արհամարհեմ զաշխարհ ,
բանի տեղ չիղնեմ նեղութիւնը ,
սիրեմ զխաչը , ու մեռնիմ քու սի-
րոյդ համար . որպէս զի նմանելով
քուկին կենացդ՝ արժանի ըլլամ ար-
քայութեան մէջն ալ քու տեսու-
թեանդ ու աստուածային փառացդ :

ԲՍԱՆՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսին անապատի մէջ տուած օրինակ-
ներուն վրայ :

Ա . Յիսուս անապատին մէջ իր
միտաւորութեամբը կը սորվըցնէ
ինձի մէկ անդադղ կեանք մը : Ինք
թէպէտ բանէ մը վախ չունէր որ
խաբուի , ոչ ընկերներէն՝ որ զինքը
մոլորցնեն , ոչ խօսակցութիւննե-
րէն՝ որ իր միտքը դարձնեն , սա-
կայն այսու ամենայնիւ ուղեց փախ

չիլ քաղքէն ու երթալ անապատը .
 հապա ես որ ասանկ տկար եմ , ու
 ամէն պղտիկ բանէն կը խաբուիմ ,
 ինչո՞ւ համար չեմ քաշուիր , այլ կ'ու-
 գեմ անդադար մարդկանց մէջ կե-
 նալ , ու ամենուն հետ կենցաղա-
 վարիլ :

Բ . Յիսուս անապատին մէջը իր
 ծամապահած եամբը կը սորվըցընէ
 ինծի ճգնութիւն մարմնոց : Ինչո՞ւ
 համար քառսուն օր բերանը բան
 չիղբաւ , ոչ պատառ մը հաց , և ոչ
 պուտ մը ջուր , այլ կեցաւ անտեղը
 դաղաններու մէջ , ու կը հանգչէր
 չոր ցամաք գետնին վրայ : Մանա-
 ւանդ որ իր սուրբ մարմինը բոլորո-
 վին հնազանդ էր հօգուոյն ու անմե-
 ղանչափան Հիմնամտութեմէ , դուն
 որ մեղքով ծներ ես , մեղքը կը սի-
 բես , ու կարելի է թէ մեղքի մէջ
 ալ ես , ամենեւին չես ուզեր նեղու-
 թիւն մը քաշել : Յիսուս անմեղ
 ըլլալով ասանկ խիստ ծամապահու-
 թիւն ընէ քառսուն օր . իսկ դուն
 մեղաւոր ըլլալովդ՝ սուրբ եկեղեց-

նայ դրած քանի մը պաքն ալ չես
 ուզեր պահել , կամ կը ջանաս բա-
 նով մը թէ թեղցընել :

Գ . Յիսուս անապատին մէջը իր
 անդադար աղօթքովը կը սորվըցընէ
 ինծի աղօթքի հետ ըլլալ : Ի՞նչ կա-
 րօտութիւն ունէր Յիսուս աղօթք
 ընելու . միթէ իրեն շնորհք մի կը
 պակտէր՝ որ տերն էր շնորհաց . մի-
 թէ առաքինութեան կը կարօտէր ,
 որ լի էր ամէն առաքինութեամբ .
 միթէ դիտութիւն չունէր , որ ինքն
 էր Մտածոյ հօր խնամութիւնը :
 Հապա ես որ կարօտ եմ շնորհքի ,
 առաքինութեան ու դիտութեան ,
 ինչո՞ւ ասանկ քիչ աղօթք կ'ընեմ .
 ու ան ալ չուզելով , դաղջութեամբ
 ու խելքս միտքս ասդին անդին ցը-
 բուելով :

Պրօֆ . Սրչափ որ կրնաս նէ՛ ջա-
 նա՛ քեզ ժողուբտել ու մինաւորիկ
 հօգեւոր կեանք մը վարել . մասնա-
 ւոր հօգ ունեցիր դործք ընելու ա-
 տենդ բութիւն պահել սուրբ Մը-
 սուածածնայ սիրոյն համար . ու ըսէ

տու Յիսուս . “ Կիր տէր պահատան բերանոյ իմոյ , և դուան ամուր շրժանց իմոց . զի մի խոտորեացի սիրտ իմ բանիւ չարութեան , , , ”

ԱՂՈԹՔԻ

Կը փափաքիմ փրկիչ իմ Յիսուս՝ քեզի հետ անասպատը ելլալ . քեզի հետ քաշուիլ , քեզի հետ նեղութիւն քաշել , ու մեղքերուս ապաշխարութիւնը քու քովդ ընել : Գիտեմ փրկիչ իմ Յիսուս՝ որ քաղցր ես , սիրով կ'ընդունիս քեզի ընկածները . կ'ողջընցընես իրենց տըկարութիւնը , կը մաքրես իրենց մեղքերը , կ'արգարացընես իրենց հողին , ու կը զարգարես աստուածային շնորհքներովդ . ուստի կ'աղաչեմ որ ընդունիս իմ հոգիս ալ , որ զղջալով ըրած մեղքերուն վրայ , կը փափաքի ասկից ետքը քեզի ծառայելու , ու քու սիրոյդ համար յանձն կ'առնու աշխրբքէս հեռանալը , ու ամէն տանջանաց համբերելը . միայն

Թէ արժանի ըլլայ քու անուշ ձայնդ լսելու , և հողեւոր մխիթարութիւնդ տեսնալու իր սրտին մէջը : ՄԻՎԵՐ՝ տուած իմ Յիսուս , դուն ես իմ կեանքս . դուն ես իմ յոյս , դուն ես իմ փրկութիւն . դուն ես իմ արքայութիւն . Թէ որ քեզ զըտնամ , Թէ որ քեզ տեսնամ , Թէ որ քեզ ժառանգեմ , կը լեցուի ամէն փափաքս , ու ես ալ անկարօտ մնալով երանելի կ'ըլլամ յաւիտեան :

ԳՍԱՆՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսի խաչկոտորեալ վրայ :

Ա . Մտմտամ քեզի ըրած Բստուծոյ բարութիւնը Յիսուսին խաչելու թեամբը : Հայրն Բստուած իր միածինը քեզի համար զոհ կ'ընէ . ու միածին որդին ալ ինք զինքը կու տայ քու փրկութեանդ համար : Հերիք էր միտակ մէկ կաթիլը իր սուրբ արիւնին զքեզ փրկելու .

սակայն իր բարութեանը համար ուզեց բոլորը թափել՝ ինչուան ետքի կաթիլը : Լ'սկից 'ի զատ՝ թող իր քաջած չարչարանքները նախատինքքը, թուքը, ծեծը, փուռ պսակը, զամերը, ու լեղին : Լայկն որ Լ'ստուած սիրեց զքեզ ամենէն եւել, իսկ դու կ'անարգես զինքը, ու ամէն բանէն վար ես զրեբ զանիկայ :

Բ. Ստմբտան Լ'ստուածոյ սաստկութիւնը ու արդարութիւնը Յիսուսին վրայ . նայէ՛ թէ իր միածին Որդին ինչպէս նախատական մահուան տակը ձգեց աշխրբքիս մեղացը համար : Լ'ս մեղքերս թէպէտ իրը չէր, սակայն մարդկանց փրկութեանը համար առեր էր իր վրայ . ուստի պէտք եղաւ որ քաջէ : (Թէպէտ ինքն անմեղութիւն ու սրբութիւն էր, բայց ուրիշի մեղացը համար յանձն առաւ խաչուիլ : (Թէպէտ միածին որդի էր Լ'ստուածոյ ու զառն անարատ, սակայն մեղաւոր երեցաւ, ուստի պէտք եղաւ որ մեռնի երկու աւազակաց մէջ, մեռնի

իբրև իր հօրը երեսէ ինկած, մեռնի իբրև մէկ վատանուն մը : Լայկն թէ ինչ սոսկալի բան է մեղքը . որպիսի անողորմ դահիճ է, որ Լ'ստուածորդին խաչ հանել տուաւ :

Գ. Ստմբտան Լ'ստուածոյ բարութիւնը ու սաստկութիւնը : Լ'դէկ միտքդ դիւր աս երկու ճշմարտութիւնը, որ Լ'ստուած քու վրայ ալ կը բանեցնէ : (Թէ որ Յիսուս քու հօգուցդ փրկութեանը համար մեռնիլ ուզեց խաչին վրայ, ուրեմն փրկուցութիւնը մեծ ու հարկաւոր բան մըն է, և նշան աստուածային բարութեան . ուստի վայ քեզի, թէ որ դատապարտուիս : (Թէ որ Լ'ստուածոյ արդարութեամբ բոլորովին սուրբ ու անմեղ Յիսուսը ասանկ չարչարուեցաւ ուրիշի մեղացը համար, ինչ պիտոր ըլլայ քեզի դժոխքին մէջը քու անթիւ չար մեղքերուդ համար : Ո՛վ անդին ու պատուական արիւն Յիսուսի, որ իմ մեղքիս համար թափուեցար խաչին վրայ, թողութիւն տուր իմ մեղ-

քերուս: Մի խաչելու թիւն է Յիսուսի՝ փրկիչ իմ հոգիս:

Պատու: Ըն մեծ բարերարութիւնն որ Մտուած ըրեր է քեզի, ջանս ամէն օր յիշել ու միտքդ բերել մանաւանդ զգոսանքի ու յաջողութեան մէջ. չնորհակալ ըլլալով ու դուն քեզի բտելով. իմ ահբա, իմ փրկիչս խաչին վրայ մեռաւ. իսկ ես կ'ուզեմ հանգստեան մէջ ապրիլ: Ըզաչէ սուրբ Մտուածածիւնը, որ սիրտդ տոգորէ: Յիսուսին խաչելու թեան սիրովը, ու բսէ իրենս. «Փախաքիմ ընդ քեզ լինելի ՚ի Վոզգոթ ա առ ոտս փրկչին իմոյ»:

ԱՂՈԹՔ

Երկրպագեմ անճառելի խոնարհութեանդ Մտուած իմ Յիսուս, որ իմ փրկու թեանս համար յանձն առիր չէ թէ միայն մարդ ըլլալ. այլ եւ իմ սիրոյս համար մոռնալով քու մեծութիւնդ, քու փառքդ, քու սքանչելիքդ՝ ուզեցիր մատնուիլ ան-

ողորմ զինուորաց ձեռքը. կապուիլ, չարչարուիլ, փշով պատկուիլ ու էն ետքը խաչին վրայ մեռնիլ, որպէս զի իմ ծանր մեղքերուս թողութիւն ըլլայ, վերքերս ըսրնտնան, սեղսծ հոգիս լուացուի քու սուրբ արիւնովդ: Մի իմաստութիւն յախտե՛նական, չետեմ թէ ինչ բանով չնորհակալ ըլլամ քեզի, որ ասանկ մեծ բարերարութիւն ըրեր էս ինծի. մինակ մոմբտալը քու սէրդ իմ վրաս՝ կ'ուրասացնէ զիս ու կը յորդորէ որ ես ալ իմ կեանքս բոլոր քեզի ընծայեմ: Մի Տէր իմ խաչեալ՝ կը փափաքիմ քեզի հետ Վոզգոթութեան ելլել, քեզի հետ խաչուիլ, քեզի հետ մեռնիլ ու քեզի հետ թաղուիլ աշխրբբիս մէջը, որ կարենամ քեզի հետ ալ յարութիւն առնուլ ու մանալ արքայութիւն: Մ'ազաչեմ փրկիչ իմ Յիսուս տպաւորէ իմ սիրտս քու չարչարանքներուդ յիշատակը, որպէս զի անուշնայ ինծի քեզի համար չարչարուիլ, քու սիրոյդ համար մեռնիլը աշ-

խորքիս վրայ, որով կ'երևնայ թէ ճշմարիտ քու աշակերտդ եմ, ու կը վախաբիմ քեզի նամանելու :

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՕՐ

Սուրբ Աստուածածնայ ցառցը վրայ :

Ա. Ա՛մէն ցաւերուն մէջը, որ սուրբ Մատուածածին քաջեց Յիսուսին չարչարանացը համար, իրեքը եղան աւելի սաստիկ սրեր՝ որ խոցեցին իր մայրական զթած սիրտը : Ընչինը եղաւ կորսնցընելը իր գեղեցիկ, ամենասուրբ ու քան զամէնը անմեղ որդին : Ի՛նչ ծանր ու անտանելի ցաւ է տեսնալը մէկ հատիկ որդին վերաւորուած, ձեռքը ոտքը ծակուած, երկու աւազակի մէջ կախուած ու մեռած : մանաւանդ անանկ աղբոր հասակի մէջ : Ըստ այլ կը մտմտար՝ թէ Յիսուս որուն համար կը թափէ կոր իր սուրբ արիւնը : թէ պէտ ամէնմարդու համար կը չարչարուէր,

սակայն անոնց մէջը պիտի գտուի քեզի պէս մէկ ուղղափառ քրիստոնէայ մը, որ Յիսուսին չարչարանքները բանի տեղ չիդնելով, պիտոր ուզէ մեղանչել ու դժոխք երթալ : Վիտես թէ ինչ մեծ կսկիծ ու ցաւ կ'ըլայ իր սրտին . ինչու որ կը տեսնէ թէ Յիսուսին չարչարանքը ամենեկին օգուտ մը չէ բրած անոր :

Բ. Երկրորդ ցաւը եղաւ տեսնալը, թէ իր զաւկին արիւն թափելը չէ թէ մինակ անօգուտ պիտի ըլլայ շատ քրիստոնէաներուն, այլ և պատճառ սաստիկ տանջանաց դժոխքին մէջը . վասն զի նոյն արիւնը պիտի ամբաստանէ, երեսնուն զարնէ ու դատապարտէ զիրենք : Այլէ թէ ինչ ծանր ցաւ է սուրբ Մատուածածնայ ան մարդիկներուն դատապարտուիլը, որ իրեն որդեգիր են եղեր : Վեզի համար կորսնցընէ իր զաւակը, ու դուն ալ չիփրկուիս . այլ մանաւանդ ան պատճառաւ աւելի տանջուիս : Ի՛նչպէս կրնայ մէկ զըթած մայր մը դիմանալ աս ցաւերուս :

Գ. Արքայորդ ցարը եղաւ մտածելու, թէ շատ քրիստոնէայք բանի տեղ պիտի չի գնեն իր զաւկին ամենասուրբ արիւնը, որ զիրենք պիտոր փրկէ. այլ մանաւանդ անով աւելի գէշ ու անհոգ պիտի ըլլան: Անանկ կ'երևցընենք, թէ Յիսուս սուրբ Աստուածածնայ միածին որդին մեզի համար մեռած չըլլար նէ, մենք այսչափ մեղք չէինք ընէր. ինչու որ հիմա կը մեղանչենք՝ յուսալով թէ Յիսուսին սուրբ արիւնը մեզի կ'օգործի. չենք դադրիր մեղքէն ինչուան մեռնելու ատենը ատ յոյսը ունենալով, թէ Յիսուսին թափած արիւնը մեզ կը խալըսէ: Բոնք ալ հերիք չեն, այլ և գործքով կը հայհոյենք, ու բանի տեղ չենք դներ իր սուրբ արիւնը: Ինչ սոսկալի ցաւ ու վիշտ է սուրբ Աստուածածնայ քաշածը գէշ ու անկարգ քրիստոնէաներէն:

Պրոտա: Ինչ նեղու թիւն քաշելու ըլլաս նէ ասոր, ամենուն ալ սիրով համբերէ՞ սուրբ Աստուածա-

ծնայ ցաւերուն համար, ու ըսէ՞ իր բերնէն. «Իմ միածին գառն անպարտական՝ ընդ ո՞ր մեղաց կաս դու՞ ի խաչին »:

ԱՂՈԹԻՔ

Ո՛վ ցաւաղին կոյս մայրդ Աստուծոյ, ճանչնալով որ քուկին սատիկ ցաւերուդ պատճառը իմ ապերախտութիւնս է եղեր, կը ցաւիմ բոլորով սրտիւ, ու կը դիմեմ խոնարհութեամբ քու ոտքդ, որպէս զի արցունքովս մարեմ սրտիդ կրակը՝ որ իմ մեղքերովս վաւեր եմ սրտիս ցաւով թէթեղընեմ քու կսկիծդ. ճմարիտ աղաշխարութեամբս մտի թարեմ քու վշտացեալ սիրտդ: Կ'աղչեմ դքեզ մայր ոգորմու թեան՝ նայէ իմ վրաս մայրական սիրովդ, որով ծնար զիս Յիսուսին խաչին տակը: Որդի եմ քու ցաւոյդ, մի թողուր զիս՝ որ մոռնալով քու մայրութիւնդ հեռանամ քեզմէ. այլ քեզի հետ կենամ Յի-

սուսի խաչին քովը • քեզի հետ լամ,
 քեզի հետ ցաւիմ • քու միածնիդ ին
 ծի համար քաշած նեղու թիւննե
 րուն վրայ : Այ ինծի , այսչափ ա
 տեն է որ իմ անկարգ վարուքս հե
 աացեր եմ • քու որդիու թենեդ , փա
 խեր եմ խաչէն , չեմ ուզած հե
 տելիլ ցաւագնեալ մօրդ , վիրաւո
 րեր եմ սիրտդ , եւ ելցուցեր եմ կըս
 կիծդ • ուստի անարժան գտուեր
 եմ մայրական խնամնդ • սակայն
 հիմն կ'առաջագրեմ ճշմարիտ սըր
 տիւ , ու կը փափաքիմ մեռնիլ որ
 դիու թեանդ մէջը : Աղաչեմ մայր
 սղորմութեան , ցըցուր ինծի քու
 գթութեանդ նորէն ընդունելով զիս
 քեզ որդի ու ծառայ մշտնջենաւոր •
 տալով ինծի շնորհք հաստատուն
 մնալու առաջագրութեանս վրայ :

ԵՐԵՄՅԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսին սիրոյն վրայ :

Ա . Թե՛ որ կ'ուզես աշխարհիս մէ
 ջը աղէկ բան մը սիրել , սիրէ՛ զՅի
 սուս քու փրկիչդ , որ սիրելի ու գե
 ղեցիկ է քան զամէն մարդիկ • գետ
 ցիր որ իր աստուածային գեղեցիու
 թեանը ամենեւին բան մը չի հաս
 նիր : Անչ մեծ խենդութիւն է սի
 րելը մէկ պղտիկ մատնի մը , մէկ քա
 ըի կտոր մը , մէկ բուրջ մը , մէկ հո
 զաթափ մը ու այլ չնչին բաներ • և
 չուզելը սիրել զՅիսուս , որ ճշմա
 րիտ մեծութիւն ու բովանդակ գե
 ղեցիութիւն է :

Բ . Կ'ուն որ զՅիսուս չես սիրեր ,
 գիտցիր որ Յիսուս քեզ կը սիրէ •
 ու անանկ շատ կը սիրէ , որ պղտի
 կուց 'ի վեր իր ամէն մտմբտուքը ե
 ղեր է քու փրկութեանդ համար :
 Անուկ եղաւ քեզի համար , աշ
 խատեցաւ խանութի մէջ , քարոզեց

Ծանր Ծանր նեղութիւններ քաշելով քեզի համար. համբերեց նա խատանաց, Թուքի, բանտի ու ծեծի. և իր սուրբ արիւնը Թափեց ու մեռաւ քեզի համար: Թէ որ աս քաշածները քիչ կ'երևնան քեզի, զիտցիր որ անոնցմէ աւելի աս բանն ալ բրաւ, որ զինքը բոլոր քեզի Թողուց, իր մարմինը կերակուր ընելով, ու սուրբ արիւնը խմելիք: Սըտմտան Թէ ինչ այլ աւելի բան կրնար ընել զքեզ շարժելու համար, որ սիրես զինքը: Սէկ պզտիկ անասուն մը Թէ որ առջիդ խաղայ ու ցաթ կրտէ, կամ տղայ մը որ քեզ անուշ նայի՝ խնտացընէ, անոր սիրովը կը խենդեանաս ու սրտիդ մէջը կ'ուզես դնել. հապա Յիսուս որ այսչափ մեծ սիրով սիրեր է ու կը սիրէ զքեզ, ինչպէս ամենեւին հոգ չունիս զինքը սիրելու:

Գ. Գրեր ես միաբը Թէ դուն կը սիրես զՅիսուս, ինչու որ շատ հեղբերնով կը զրուցես իրեն, Թէ «Յիսուս կը սիրեմ զքեզ», Սակայն

պէտք է հաւատարմով յուսով ու գործքով սիրել, էէ Թէ բերնով ըսել ու սրտանց ատել: Թէ և մեղաւոր ըլլաս, պէտքը է որ Յիսուսը սիրելէն ետ կենաս. զիտցիր որ Յիսուսին սէրը զքեզ սուրբ կ'ընէ: Ինքը քու ետևէդ կը վազէ՝ զքեզ վատրկելու համար. կը բանայ իր սիրտը քեզի ցրցընելու համար իր աստուածային սէրը՝ որ ունի քու վերայ. զանազան շնորհքներով կը շարժէ սիրտդ որ սիրես զինքը: Բարէ սիրտ պիտոր ունենաս որ զիշարժիս զինքը սիրելու:

Պարտաւ: Սանաւոր ջերմեռանդութեամբ արթնք բրէ Յիսուսին ու սուրբ Ըստուածածնայ գթած սրտերուն, որ քու սիրտդ վառեն աստուածային սիրով, ու ըսէ բոլորով սրտիւ. «Սէր անուն Յիսուս, սիրով քո ճիկեան սիրտ իմ քարեղէն. վասն գթութեանդ վասն ու զորմութեանդ վերստին կեցի»,

ԱՂՁԹԻՐ

Ո՛վ սէր և զթուծիւն անբաւ
 տէր իմ Յիսուս Վրիստոս , քանի
 որ կը մտմբտամ ինծի ըրած բարիք-
 ներդ , կ'ուրախանամ ու կը ցնծամ
 հոգւով , տեսնալով թէ որչափ սի-
 բեր ես զիս : Ե՛նորհակալ եմ Մը-
 տուած իմ , զոհանամ ու կը փառա-
 ւորեմ քու մեծութիւնդ , քու կին
 մարդասիրութիւնդ ու բարութիւնդ
 որ ցըցուցեր ես ինծի . խկ ես չու-
 նենալով մէկ արժանաւոր բան մը
 քեզի ընծայելու , կ'առաջադրեմ
 բոլոր սրտով սիրել զքեզ , Տէր զո-
 րութիւն իմ , Տէր օգնական իմ , ա-
 պաւէն իմ և փրկիչ իմ : Դուն որ
 քու բարութեանդ համար արժանի
 ես ամենայն սիրոյ , քու մեծու-
 թեամբդ արժանի ես ամենայն փա-
 ռաց , կը ցաւիմ որ իմ կուրութիւն
 ինչուան հիմա չեմ ճանչցած , չեմ
 մեծարած , ու չեմ սիրած զքեզ Մը-
 տուած իմ Յիսուս : Կ'աղաչեմ խո

նարհութեամբ՝ մի նայիր իմ անար-
 ժանութեանս , մի սրդողիր իմ ա-
 պերախտութեանս , մի ձգեր զիս
 քու անուշ երեսէդ , այլ տուր ինծի
 շնորհքդ , որ կարենամ ակից ետ-
 քը բոլոր կեանքս քու ծառայու-
 թեանդ մէջը անցընել , քեզի հա-
 մար ապրել , քեզի համար մեռնել ,
 ու քու սիրովդ տոչորուել , ինչուան
 հասնիմ քովդ արբայութեան մէջ :

Խ Ր Ա Տ

Աստուան հրաճախաները զբնական
էրբը, յոսնեստ ատշտ օրը՝ (որ նոստ
բոսած է սոսրբ (Կարոսածածնայ), էամ
Տօրիէ էիրանէն որ էը հանրիպտ ան օրերը,
պէրբ է Տաննատր ջերմեաննրոսնիան
ընէլ. օր սոսալ աղէէ պարբասարանիան
ընէլը՝ Խոսարովաննիք ըլլալ ոս սրբոս-
նիան սոսնէլ:

Ա Ղ Օ Թ Ք

Խոստովանանքիկն սասալ:

Տէր իմ՝ Հիսուս Քրիստոս, դուն
որ իմ փրկիւթեանս համար եկար
աշխարհ, ու ծնար ամենասուրբ կու-
սէն. խալըսեցիր զիս սատանային ձեռ-
քէն. մաքրեցիր իմ հօղիս քու սուրբ
արիւնսովդ: Աս ասերախոս մոռնա-
լով քու կին բարերարու թիւնդ՝ իմ

մեղքերովս նորէն մանուկայ սա-
տանային ձեռքը, ու սեցուցի իմ
հօղիս: Գիտեմ որ մեղանչեր եմ,
ու շատ մեղք ալ ունիմ. բայց չեմ
ճանչնար մեղացս ծանրութիւնը՝
չարութիւնը ու համբանքը. ուստի
կ'աղաչեմ զքեզ միջնորդութեամբ
ամէնօրհնեալ մօրդ լուսաօրէ իմ
խաւարած միտքս, կակողցուր իմ քա-
րացեալ սիրտս, որ ճանչնամ ըրած
մեղքերս, ու զզուելով անոնցմէ՝
ճմարիտ զղջումով խոստովանիմ
քու փոխանորդիդ. ու հաշտուե-
լով քեզի հետ գանամ թողութիւն
ամէն մեղքերուս. «Վ զս տուր Տէր
աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից՝ ի
մահ»:

Խոստովանանքիկն ետրր:

Ենորհակալ եմ փրկիչ իմ Հի-
սուս, գոհանամ ու կը փառաւորեմ
անբաւ ողորմութիւնդ, որով թու-
զութիւն տուիր իմ ծանր մեղքե-
րուս. երեցուցիր քու սրբութիւնդ՝

մաքրելով իմ աղտոտ հոգիս : Կը
 փափաքիմ Լստուած իմ Հիտուս՝
 ասկից ետքը մնալ ու մեռնիլ քու
 շնորհքիդ մէջը . ուստի կ'աղայեմ
 որ բարեխօսութեամբ ամէնօր
 հնեալ մօրդ տաս ինծի շնորհք յա-
 րատուութեան , որպէս զի բարի ա-
 ռաջադրութեանս վրայ հաստատ մը
 նայալ , ինչուան 'ի մահ չիբաժնուիմ
 քեզմէ : Բարձր առնեմ զքեզ
 Տէր , զի ընկալար զիս , և ոչ ուրախ
 արարեր զթշնամիսն իմ յիս : Տէր
 Լստուած իմ կարգացի առ քեզ և
 բժշկեցեր զիս . Տէր հաներ 'ի գժո-
 խոց զանձն իմ . փրկեցեր զիս յայն-
 ցանէ , որ իջանեն 'ի գուբ : Լուա
 ինձ Տէր և ողորմեցաւ . և Տէր եղև
 ինձ օգնական : Բարձոյց զսուգ իմ
 յուրախութիւն , զերժ յինէն ըլ-
 քուրձ . և ինձ զգեցոյց զուրախու-
 թիւն : Արպէս սաղմս ասացեն
 քեզ փառք իմ . և այլ մի ևս զըջա-
 ցայց . Տէր Լստուած իմ յաւիտեան
 խոստովան եղէց քեզ :

Հայրորդեկեան սասց :

Ո՛վ Հիտուս փրկիչ իմ , կեանք
 իմ , յոյս իմ , ապաւէն իմ և մխի-
 թարութիւն սրտիս . կը փափաքիմ
 ընդունիլ զքեզ իմ հոգիս , բայց
 անարժանութիւնս կը վախցընէ զիս
 քեզի մտեհալու : Գուր որ սրբու-
 թիւն սրբոց ես՝ մաքրէ՛ իմ սիրտս ,
 որ ըլլայ քեզի արժանաւոր ընակա-
 րան . լուսաւորէ՛ իմ միտքս՝ որ ճանչ-
 նայ քու մեծութիւնդ . վառէ՛ իմ
 հոգիս աստուածային շնորհքով , որ
 տոչորուի քու սիրովդ : Ո՛վ տիրա-
 մայր սուրբ կոյս Լստուածածին ,
 ինծի համար բարեխօս եղիր առ
 Հոգին սուրբ . որ ինչպէս պատրաս-
 տեց զքեզ մարմնարան ըլլալու Որ-
 դոյն Լստուծոյ , անանկ ալ պատ-
 րաստէ իմ հոգիս արժանաւոր բնա-
 կարան ըլլալու միածնի որդոյ քո :
 « Սէր անուն Հիտուս՝ սիրով քո
 ճնշեա՛ սիրտ իմ քարեղէն : Տէնչալի
 տեսլեամբ՝ տուր ինձ յազենալ՝ Տէր

Յիսուս Վրիստոս : Յօղ արեան քո
Տէր ցօղեա՛ ՚ի հոգիս՝ ցնձացէ անձն
իմ , :

Հարորդակէն ետքը :

Փառք քեզ Տէր, փառք քեզ Մա-
տուած իմ. գոհանամ ու չնորհա-
կալ եւմ անձառելի բարութեանդ,
որ զիս անարժանս արժանի ըրիր
հաղորդակից ըլլալ ամենասուրբ
մարմնոյդ : Կաղաչեմ զքեզ պահէ
զիս քու չնորհացդ մէջը, որպէս զի
անգողար յիշելով ինձի ըրած բա-
րերարութիւնդ, չիբաժնու իմ քեզ-
մէ : Օրհնէ զիս աստուածային օր-
հնութեամբդ, մի թողուր որ աս-
կից ետքը սատանան մօտենայ իմ
քովս : Կատարէ քու անսուտ խոստ-
մունքդ որ ըրիր մեզի, թէ՛ «Որ ու-
տէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն
իմ, նա յիս բնակեցի, և ես ՚ի
նմա , : Սի հեռանար ինձմէ Մա-
տուած իմ Յիսուս. և մի թողուր
զիս կարօտ աստուածային քաղցրու-

թեանդ . դուն ես աղբիւր ողորմու-
թեան, զթու թեան, մարդասիրու-
թեան, միխթարութեան և ամե-
նայն բարեաց, և քեզ վայելէ փառք
պատիւ յաւիտեանս ամէն : « Օր-
հնեցից զՏէր յամենայն ժամ, յա-
մենայն ժամ օրհնութիւն նորա ՚ի
բերան իմ : Ի Տէր պարծեցի անձն
իմ. լուիցեն հեղք և ուրախ եղի-
ցին : Սէ՛ծ արարէք զՏէր ինև, և
բարձր արասցուք զանուն նորա ՚ի
միասին : Խնդրեցի ՚ի Տեառնէ և
լուա ինձ . յամենայն նեղութենէ
իմմէ փրկեաց զիս : Ստաիք առ Տէր
և առէք զլոյս . և երեւք ձեր մի ա-
մաչեցեն : Մյս աղքատ կարգաց
առ Տէր, և Տէր լուա սմա, յա-
մենայն նեղութենէ սորա փրկեաց
զսա : Բանակ հրեշտակաց Տեառն
չուրջ է զերկիւղածովք իւրովք, և
պահէ զնոսա : Շաշակեցէք և տե-
սէք, զի քաղցր է Տէր . երանեալ
է այր՝ որ յուսայ ՚ի նա , :

Վերի աղօրքներէն ետքը, սա ետե՛ի դը-
յառած ինե՛ց ետիրմունքն այ յրէ ստ առքը
Աստուածածինը :

Ա. Ընծայէ՛ իրեն ան ջերմեռան-
դու թիւնները, որ բոլոր մայիս ամ-
սուն մէջը ըրեր էս իր փառացը հա-
մար. աղաչելով զինքը՝ որ մայրա-
կան սիրով ընդունի քու ընծադ. ու
քեզի ալ չնորհք տայ կեանքդ աղէկ
ու սուրբ անցընելու :

Բ. Պատուէ՛ ու մեծարէ՛ իր մայ-
րական գթած սիրտը, որ Մտուած
ասանկ մեծ փառաց հասցընելով՝
զարդարեր է զինքը ամէն չնորհքով,
ու ըրեր է թագուհի երկնից և գան-
ձապետ չնորհաց մեզի բաշխելու
համար :

Գ. Ըղաչէ՛ արքայու թեան սուր-
բերն ալ, մանաւանդ զանոնք որ աշ-
խրրքիս մէջը մանաւոր ջերմեռանդ
են եղեր սուրբ Մտուածածնայ, որ
տէս զի բարեխօս ըլլան քեզի հա-
մար, ու թողու թիւն առնուն ան

պակսու թիւններուն որ ըրեր էս աս
ամառան ջերմեռանդու թեան մէջը :

Դ. Ըղաչէ՛ սուրբ Մտուածածին-
նը, որ ընդունի քու սրտիդ ընծան,
միջնորդ ըլլալով քեզի համար, որ
որ մէկ օր մը արքայու թեան մէջն
ալ կարենաս պատուել ու փառա-
ւորել զինքը, ինչպէս որ աս աշխր-
քիս մէջը կը փափաքիս ընելու :

Յ. Ըջ ջերմեռանդու թիւնս ըրած
օրդ նայէ՛ որ ամէն աղօթքդ սիրով
ու սրտանց կատարես : Մսկից՝ ի զատ
ուխտ երթաս մէկ ժամ մը կամ
մէկ հրաշագործ Մտուածածնայ
պատկերի մը : Ու ջանանոյն օրը ու
ղորմու թիւն մը տալ աղքըտի սուրբ
Մտուածածնայ սիրոյն համար :
Ս երջապէս՝ նայէ՛ որ ան օրը առուը-
տանց ինչուան իրիկունսրբու թեամբ
ու առանց մեղաց անցընես :

ԱՂՕԹՔ

Ո՛վ ամենասրբուհի կոյս Սա-
րիամ մայր Աստուծոյ, ես մեղա-
ւորս ու անարժան ծառայս խնկելով
քու սուրբ ստքդ կ'ընծայեմ քեզի
իմ ողորմելի սիրտս . ու կը փափա-
քիմ որ ասկից ետքը ըլլայ մինակ
քու կինդ, ու քու սիրելի զաւկիդ :
Ո՛վ ամենագթած մայր, կ'աղաչեմ
որ արքայութեան սուրբերուն բա-
րեխօսութեամբը ընդունիս իմ աղ-
քատ սրտիս նուիրմունքը, որ ասօր
կ'ընեմ քեզի : Տէր ինձի մայրական
օրհնութիւնդ, որ կարենամ ապրիլ
մինակ Աստուծոյ ծառայութեանը
համար . ու քու կին Չերմեռանդու-
թեամբդ անցնելով իմ կեանքս,
արժանի ըլլամ արքայութեան մէջն
ալ սուրբերուն հետ զքեզ գովել
ու փառաւորել յաւիտեանս յաւի-
տենից :

Որիչ Աղօրք :

Ամենասուրբ կոյս մայր Աստու-
ծոյ՝ գանձապետ շնորհաց, ապաս-
տան մեղաւորաց . ես անարժանս
ձչմարիտ ու հաստատուն հաւատ-
քով կը դիմեմ մայրական սիրոյդ,
ու կ'աղաչեմ որ տաս ինձի զօրաւոր
շնորհք մը, որպէս զի կարենամ միշտ
Աստուծոյ ու քու կամբդ կատարել :
Վ'ընծայեմ քեզի իմ սիրտս, խնդրե-
լով քեզմէ իմ հոգւոյս փրկութիւ-
նը . ու կը յուսամ որ մայրական
գթութեանդ զիս չի թողուր ձեռքէ՝
ինչուան դամ հասնիմ արքայու-
թիւն, ու հոն փառաւորեմ զքեզ
յաւիտեան :

Ներգործութիւն Հաւատոյ, Յու-
տոյ, Սիրոյ և Զորման :

Ո՛վ Աստուած իմ, կը փափաքիմ
քեզի ընծայել իմ կեանքս աս ճրջ
մարիտ աստուածային հաւատքիս
մէջը, որով ուղեր ես սրբել ու զար-
դարել իմ հոգիս մկրտութեամբ
սուրբ աւազանին: Հաստատուն սրբ-
տով կը հաւատամ ու կ'ընդունիմ
զայն ամենայն ճմարտութիւնը, որ
դուն անսահման իմաստութիւնդ ու
անսխալ ճմարտութիւնդ յայտներ
ես սուրբ եկեղեցնայ:

Ար խոստանամ իմ ամէն յոյս
ու ապահւնութիւնս դնել քու վրայդ
ինչուան ետքի նեղութեան մեռնե-
լու ատենս, որովհետեւ դու ամենա-
կարող ու զթած հայրս ըլլալով: Յե-
սուսի Վրիստոսի չարչարանքովը
խոստացեր ես տալ ինծի հարկաւոր
չնորհքներդ, որպէս զի կարենամ
բարի գործքերով ժառանգել զքեզ,

որ իմ առջի պատճառս ես, ու ետ-
քի վախճանս:

Ո՛վ Աստուած իմ անհուն բա-
րութիւն, կը փափաքիմ բոլոր կեան-
քըս քու սիրուդ համար անցընել,
ու կ'ուզեմ որ իմ մահս ալ ըլլայ
քեզի պատարազ սիրոյ. ուստի կը
խոստանամ սիրել զքեզ ամէն բա-
նէն ՚ի վեր, որ քան զամէնը բարի
ու սիրելի ես. և քու սիրուդ հա-
մար իմ անձիս պէս կը սիրեմ ըն-
կերներս ալ, որ քու պատկերքդ ըլ-
լալով արժանի են սիրոյ:

Ո՛վ Աստուած իմ, զիտեմ որ
սրգողացեր եմ զքեզ իմ մեղքե-
րովս, բայց կ'աղաչեմ որ նայիս իմ
զգջացեալ ու ցաւազնեալ սրտիս:
Ար խոստանամ ապաշխարել ՚ի բո-
լոր սրտէ. կը փափաքիմ անմիտեմ
ցաւով տողորուիլ զքեզ ամենաբա-
րիդ սրգողցընելուս համար. կ'առա-
ջադրեմ ասկից ետքը յանձն առ-
նուլ իմ մահս՝ քան թէ մահացու
մեղքով մը սրգողցընել զքեզ:

Յ Ա Ն Կ

Յրրգորանք սուրբ Աստուածածնայ ջեր մեանդ ըրարու համար	3
Գաւթ ու խնամք սուրբ Աստուածածնայ	10
Կարգ ու կանոն ամսուան քերմեանդու թեան սուրբ Աստուածածնայ	27
Ծաղիկք հոգևոր, տասուերկու բարի գործքեր	31
Ծաղիկք հոգևոր, երսունըմեկ բարի գործքեր	34
Ա ՕԲ . Թե ինչու համար աս ամսուան ջերմեանդութիւնը պէտք է ընել	39
Բ ՕԲ . Հոգւոյ փրկութեան վրայ	43
Գ ՕԲ . Մարդուս հոգւոյն աղնուու թեանը վրայ	47
Դ ՕԲ . Մարմնոյ առողջութեան վրայ	51
Ե ՕԲ . Ժամանակի վրայ	55
Զ ՕԲ . Մահացու մեղաց վրայ	59
Է ՕԲ . Մեղաց պատուհաններուն վրայ	64
Ը ՕԲ . Մահուան վրայ	69
Թ ՕԲ . Դատաստանին վրայ	73
Ժ ՕԲ . Դժոխքի վրայ	77
ԺԱ ՕԲ . Դատաստարտելոց համրանքին վրայ	82

ժԲ ՕԲ • Քրիստոնէին չարութեանը վրայ	87
ժԳ ՕԲ • Գայթակղութեան մեղքին վրայ	92
ժԴ ՕԲ • Մարդկային նկատման վրայ	97
ժԵ ՕԲ • Աբբայութեան վրայ	102
ժԶ ՕԲ • Արքայութեան ճամբուն վրայ	107
ժԷ ՕԲ • Սուրբ Աստուածածնայ շէր- մեանդութեան վրայ	111
ժԸ ՕԲ • Աստուծոյ ներկայութեան վրայ	116
ժԹ ՕԲ • Աստուծոյ ու ստատնային ծա- ւայութեանը վրայ	121
Ի ՕԲ • Ապաշխարութիւնը ու չարնե- լուն վրայ	125
ԻԱ ՕԲ • Խոստովանութեան վրայ	130
ԻԲ ՕԲ • Սուրբ Հաղորդութեան վրայ	134
ԻԳ ՕԲ • Աստուծոյ ծածուկ շնորհքնե- րուն վրայ	139
ԻԴ ՕԲ • Ներելի մեղաց վրայ	144
ԻԵ ՕԲ • Քաւարանին վրայ	148
ԻԶ ՕԲ • Յիսուսին տղայութեանը վրայ	153
ԻԷ ՕԲ • Յիսուսին մեղի տուած օրինակ- ներուն վրայ	157
ԻԸ ՕԲ • Յիսուսին անապատի մէջ տը- ւած օրինակներուն վրայ	161
ԻԹ ՕԲ • Յիսուսին խաչելութեան վրայ	165
Լ ՕԲ • Յուրբ Աստուածածնայ ցաւոցը վրայ	170
ԼԱ ՕԲ • Յիսուսին սիրոյն վրայ	175
Խրատ	180
Ազօժք խոստովանանքէն առաջ	—
Խոստովանանքէն ետքը	181

Հաղորդուելէն առաջ	183
Հաղորդուելէն ետքը	184
Հինգ նուիրմունք առ սուրբ Աստուածա- ծինը	186
Ազօժք	188
Ուրիշ ազօժք	189
Ներգործութիւն Հաւատոյ, Յուսոյ, Սի- րոյ և Զղջման	190

181
182
183
184
185
186
187
188
189
190

Պ Ա Շ Տ Օ Ն

Փ Ա Ռ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Մ Ո Ւ Բ Բ Ա Ս Տ Ո Ւ Ա Ն Ա Ն Ի Ն

Պ Ա Շ Տ Օ Ն

Ս Ո Ւ Ր Բ Կ Ո Ւ Ս Ի Ն

Տէր եթէ զըթուան իմ բանաս,
բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս
մօր քո :

() օրհնեալ ես դու 'ի կանայս, և
օրհնեալ է պտուղ որովայնի քո :

Երգ սրբոյ կուսին :

Մեծացուցէ անձն իմ զՏէր, և
ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկ-
կիչ իմ : Օ ի հայեցաւ 'ի խոնար-
հութիւն աղախնոյ իւրոյ, զի ահա
յայտահետէ երանեսցեն ինձ ամե-
նայն ազգք : Օ ի արար ինձ մեծա-
մեծս հզօրն, և սուրբ է անուն նո-
րա : Եւ ողորմութիւն նորա ազգաց
յազգս երկիւղածաց իւրոց : Աւար

զօրու թիւն բազկաւ իւրով . ցրուեաց
 զամբարտաւանս մտօք սրտից իւ-
 րեանց : Բակեաց զՏՂՅՈՐՍ յաթոռոց,
 և բարձրացոյց զխոնարհս : Օքաղ-
 ցեալս լցոյց բարու թեամբ, և զմեծա-
 տունս արձակեաց ունայնս : Պաշտ-
 պանեաց Իսրայելի ծառայի իւրում՝
 յիշել զողորմութիւնս : Արդէս խօ-
 սեցաւ առ հարս մեր՝ Լաբրահամու
 և զաւակի նորա յաւիտեան :

Պ Ա Շ Տ Օ Ն

Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

ԱՂՈԹՔ

Ամենօրհնեալ սուրբ կոյս Սա-
 րիամ, ցանկալիդ հրեշտակաց և
 մարդկան, դուն որ քուկին անուշ
 բերնիդ օրհնութեամբը փառաւո-
 րեցիր զՍտուծոյ մեծութիւնը, բաց
 իմ բերանս ալ որ օրհնեմ, գովեմ
 ու փառաւորեմ քու մայրութիւնդ :
 Ի սուսաւորէ՛ իմ միտքս, որ ճանչ-
 նամ քու զթութիւնդ ու խնամքդ
 իմ վրաս : Սառէ՛ իմ սիրտս քու
 ջերմեռանդութեան սիրովդ : Տնք
 ինձի շնորհք հաւատարիմ մնալու
 ծառայութեանդ մէջ : Սաղաչեմ
 մայր ողորմութեան, մի նայիր իմ
 պակասութիւններուս, այլ քու զթութե-
 ամբդ մաքրէ՛, սրբէ՛ իմ հոգիս

ամէն աղտոտութենէ, որպէս զի անարատ վարքով ըլլամ արժանաւոր որդէ-գիր, մանաւանդ թէ մտնջե նաւոր ծառայ քուկին մեծութեդ :
 Վաղաչեմ տիրուհի, դուն պահէ զիս ասօր շնորհքիդ մէջը, որ չըլլայ թէ Լստուծոյ պատուիրանքները մոռնալով սրդողընեմ իմ ստեղծողս . այլ բարի գործքերով փառաւորեմ զինքը, որ տուեր է ինձի միտք՝ զինքը ճանչնալու, կամք՝ զինքը սիրելու : յիշողութիւն՝ չմոռնալու զինքը, զգայութիւն՝ իրեն ծառայելու, ու բոլոր կեանքս իրեն նուիրելու : Վաղաչեմ մայր Լստուծոյ՝ օգնական եղիր իմ տկարութեանս, պաշտպան ու ապաւեն սատանային փորձանքներէն խալըսելու, աշխրքիս նեղութիւններուն համբերելու, մեղքէն զգուշանալու . որ ամէն գործքս Լստուծոյ փառացը համար ընելով, արժանի ըլլամ . քու օրհնութեամբդ ու բարեխօսութեամբդ աջողութիւն գտնալու իմ ամէն հագեւոր ու մարմնաւոր գործքերուս

մէջ, և կեանքս բարի անցընելով՝ օրհնեմ անդադար քու մայրական խնամքդ, որ կը ցրցընես ինձի պէս ողորմելի մեղաւորին :

Երգ :

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Լստուածածին Սարիամ մայր Վրխատոսի՝ մատո՞ղաղաչանս մեր որդւոյ քո և Լստուծոյ մերոյ :

Մարտնք :

Ո՞ղջ լեր թագուհի՝ մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն, և յոյս մեր, ողջ լեր . առ քեզ ազաղակեմք աքսորեալ որդիքս Լուայի, առ քեզ հառաչեմք հեծեծելով և ողբալով յայսմ հովտի արտասուաց . աղէ ուրեմն ո՞վ փաստաբան մեր՝ դարձն առ մեզ զգթա՞ծահայեաց աչս քո . և զօրհնեալ պտուղ սրովայնի քո զճխուսս յետ

այսր արքայորական վայրիս ցոյց մեզ .
նի գծած , նի բարեգուծ , նի
քաղցր կոյս Մարիամ :

Բարեխօսեալ վասն մեր սուրբ
Մտուածածին , զի խօստմանցն
Քրիստոսի արժանաւորք եղիցուք :

Բարերանորիւն առ սուրբ կոյսն :

Տէր ողորմեաց .

Քրիստոս ողորմեաց .

Տէր ողորմեաց .

Քրիստոս լուր մեզ .

Քրիստոս յար լուր մեզ :

Հայր երկնաւոր Մտուած , ողոր-
մեաց մեզ :

Որդի փրկիչ աշխարհի Մտուած ,
ողորմեաց :

Հոգիդ սուրբ Մտուած , ողորմեաց :

Սուրբ Երրորդուծիւն մի Մտուած ,
ողորմեաց :

Սրբուհի Մարիամ , աղօթեալ վասն
մեր :

Սուրբ Մտուածածին . աղօթ :

Սուրբ կոյս կուսանաց . աղօթ :

Մայր Քրիստոսի . աղօթ :

Մայր աստուածային շնորհաց . աղ :

Մայր ամենամաքուր . աղօթ :

Մայր ամենողջախոհ . աղօթ :

Մայր անարատ . աղօթ :

Մայր ամբիծ . աղօթ :

Մայր սիրելի . աղօթ :

Մայր սքանչելի . աղօթ :

Մայր ստեղծողին . աղօթ :

Մայր կեցուցչին . աղօթ :

Կոյս ամենախոհեմ . աղօթ :

Կոյս գերյարգելի . աղօթ :

Կոյս քարոզելի . աղօթ :

Կոյս կարող . աղօթ :

Կոյս բարեգուծ . աղօթ :

Կոյս հաւատարիմ . աղօթ :

Հայելի արդարութեան . աղօթ :

Ըծող իմաստութեան . աղօթ :

Պատճառ մերոյ ինդուութեան . աղ :

Ընօթ հոգեւորական . աղօթ :

Ընօթ պատուելի . աղօթ :

Ընօթ յարգական ջերմե-

ւանդութեան . աղօթ :

Սարգիստրհրական . աղօթ :

Ըշտարակ դաւութեան . աղօթ :

Աշտարակ փղոսկրեայ . աղօթ :
 Պալատ օսկեղէն . աղօթ :
 Տապանակ ուխտի . աղօթ :
 Դուռն երկնից . աղօթ :
 Աստղ առաւօտեան . աղօթ :
 Առողջութիւն Տիւրանդայ . աղօթ :
 Ազատան մեղաւորաց . աղօթ :
 Ախիթարիչ վշտացելոց . աղօթ :
 Օգնական քրիստոնէից . աղօթ :
 Թագուհի Տրեշտակաց . աղօթ :
 Թագուհի նահապետաց . աղօթ :
 Թագուհի մարգարէից . աղօթ :
 Թագուհի առաքելոց . աղօթ :
 Թագուհի մարտիրոսաց . աղօթ :
 Թագուհի խոստովանողաց . աղ :
 Թագուհի կուսանաց . աղօթ :
 Թագուհի ամենայն սրբոց . աղ :
 Պահպանիչ որդեգրաց . աղօթ :
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
 աշխարհի . անսն մեզ Տէր :
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
 աշխարհի . յսր լուր մեզ Տէր :
 Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեզս
 աշխարհի . սղօրմեաց մեզ :

ԱՂՕԹՔ

Աստուած անձառելի ողորմու
 թեամբ, որ ուզեցիր մեզի համար
 մարդ ըլլալ ու որդի մարդոց ըսուիլ .
 դուն որ երկինքը ունէիր քեզի հայր
 զԱստուած, ծնանելով ի սուրբ կու
 սէն՝ աշխրբբիս մէջն ալ ունեցար
 քեզի մայր զսուրբ կոյսն Արիամ
 Աղաչէնք զքեզ տնր մեզի շնորհք
 որ ջերմեռանդութեամբ ընէնք ա
 մենասուրբ մօրդ պաշտօնը, ու ա
 նոր մայրութիւնն ալ սիրով մեծա
 րենք . խոնարհութեամբ նուիրենք
 զմեզ իրեն մեծութեանը, որ զքեզ
 հոգուով սրբով յղացաւ, կուսու
 թեամբ ծնաւ, ու իբրև մայր իրեն
 հնազանդ որդի ունեցաւ զքեզ՝ ըզ
 տէրդ մեր Յիսուս Քրիստոս, որ
 կենդանի էս ու կը թաղաւորէս ընդ
 հօր և ընդ հոգւոյն սրբոյ յաւի
 տեանս յաւիտենից . ամէն :

Աղօրք՝ առաօտանց, կեսօրը, ու
իրիկունը բսկոս:

Հրեշտակ Տեառն աւետեաց կու-
սին Սարիամու և յղացաւ 'ի Հո-
գւոյն սրբոյ: Աղջոյն քեզ Սարիամ,
լի շնորհք. և այլն:

Եւ ճաւասիկ կամ աղախին Տեառն,
էզիցի ինձ ըստ բանի քում: Աղջոյն
քեզ Սարիամ, լի շնորհք. և այլն:

Եւ Քանն մարմին եղև, և բնա-
կեաց 'ի մեզ: Աղջոյն քեզ Սարիամ,
և այլն:

Օ շնորհս քո՝ աղաչեմք Տեր, հե-
ղուլ 'ի միտս մեր, զի որք հրեշտա-
կին աւետեօք զՔրիստոսի որդւոյ
քո զմարդեղու թիւնն ծանեաք, չար-
չարանօք նորին և խաչին ժամա-
նեսցուք 'ի փառս յարու թեան տե-
րամք մերով Յիսուսիւ Քրիստո-
սիւ. ամէն:

Աղօրք եօրը ցաւոց ստոր Աստուածանայ:

Ո՛վ կոյս ամէնօրհնեալ՝ ցաւա-
զին դշխոյ և պսակ մարտիրոսաց,
կ'աղաչեմ խոնարհօւ թեամք որ քու
վերաւորեալ սիրտդ դնես իմ աւ-
ջևս, որպէս զի տեսնալով քու կին
ցաւերդ՝ ողբամ մեղքերուս վրայ,
որ ցաւերուդ պատճառ են եղեր. ու
տաս ինձ ի շնորհք շտկելու իմ վարքս:

Ա.

Ո՛վ սրբուհի կոյս, յիշելով քու
առջև ցաւդ՝ որ քաշեցիր Սիմէոն
ճերունիին մարդարեական խօսքո-
վը, երբ որ իմացուց քեզի թէ Յի-
սուս շատ բան պիտոր քաշէ աշխր-
քիս մէջը, ինչուան քու մայրական
սիրտդ ալ պիտի վերաւորուի անոր
քաշածներէն. կ'աղաչեմ զքեզ տաս
ինձ ի շնորհք, որպէս զի լուսաւո-
րուի միտքս Մատուծոյ երախտիք-
ները աղէկ ճանչնալու, ու իրեն ծա-

ուայու թեանը մէջ հաւատարիմ
մնալու : Աղջոյն քեզ Ս'արիամ :

Բ

Ո՛վ սրբուհի կոյս, միտքս բերե-
լով քու երկրորդ ցաւդ՝ որ քաշեցիր
Հերովդէս թաղաւորին վախէն,
երբ որ կ'ուզէր մեռցնել զՅիսուս
միաձին որդիդ՝ ու առիր փախար
Աշգիպտոս . կ'աղաչեմ զքեզ զիր
իմ սիրտս Մատուծոյ վախը, որպէս
զի կարենամ իմ չար կամքս կոտրել
ու Մատուծոյ կամքին հնազանդիլ,
պահելով իրեն պատուիրանքները,
որ տուեր է իմ փրկութեանս հա-
մար : Աղջոյն քեզ Ս'արիամ լի շնոր-
հօք . և այլն :

Գ

Ո՛վ սրբուհի կոյս, մտմբտալով
քու երրորդ ցաւդ՝ որ քաշեցիր ի-
րեք որ կորսնցնելով զՅիսուս սի-
րեղի զաւակդ, ու ետքը Արուստ .

դէմ տաճարին մէջը դանալով . կ'ա-
ղաչեմ զքեզ արթընցուր իմ թըմ-
րած հոգիս, որ իմ փրկիչս աչքէս
չի հեռացրնեմ, այլ սիրտս ու միտքս
անդադար Յիսուսին հետ ըլլայ .
տեսնալով իր ներկայութիւնը, ու
պատկառելով իր աստուածային մե-
ծութեանէն, հետեւիմ ամենասուրբ
վարուցը ու ինձի տուած օրինակնե-
րուն : Աղջոյն քեզ Ս'արիամ . և այլն :

Դ

Ո՛վ սրբուհի կոյս, յիշելով քու
չորրորդ ցաւդ՝ որ քաշեցիր տեսնա-
լով զՅիսուս միաձին որդիդ, երբ որ
խաչը կ'անակը Գողգոթա կ'ելլար .
կ'աղաչեմ զքեզ տուր ինձի շնորհք,
որ ես ալ լսելով ու մտմբտալով Յի-
սուսին չարչարանքները՝ վառուիմ
ու տոջորուիմ իրեն սիրով . գոցեմ
ահանջս աշխրբքին դէշ ու վնասա-
կար բաներուն, ու բանամ սիրտս
Յիսուսին ձայնը ու հոգւեոր խրատ-
ները լսելու իմ փրկութեանս հա-
մար : Աղջոյն քեզ Ս'արիամ . և այլն :

Ե

Ո՛վ սրբուհի կոյս, յիշելով քու հինգերորդ ցաւդ որ քաշեցիր տեսնալով զՀիսուս խաչին վրայ բւեռած, կ'ողբամ իմ մեղքին վրայ որ պատճառ եղեր է Հիսուսին խաչելու թեանը. ու կ'աղաչեմ զքեզ զօրացուր զիս ալ որ նեղութիւն քաշելով խաչակից ըլլամ Հիսուսին. ու ինչուան ՚ի մահս խաչին քովէն չիզատուելով՝ իրեն ձեռքը աւանդեմ իմ հոգիս: Ընուչնայ ինծի չարչարանքը ու Հիսուսին համար տանջուելը, ինչպէս որ իրեն անուշ երևցաւ լեղին՝ իմ փրկութեանս համար: Ողջոյն քեզ Սարիամ, լի շնորհօք, Տէր ընդ քեզ, և այլն:

2

Ո՛վ սրբուհի կոյս, մտմբտալով քու կին վեցերորդ ցաւդ որ քաշեցիր տեսնալով զՀիսուս խաչէն վար

առած, երբոր իրեն վիրաւորեալ մարմինը ինկով կը պատէին զերեզման գնելու համար, կ'աղաչեմ ըզքեզ տուր ինծի մեռնիլ զեպ ՚ի աշխրթբիս ունայնութիւնը. ու զգայութիւններս անանկ բանեցընել, որ ըլլան Հիսուսին իրբև անուշահոտ խունկ մը իրեն հետ թաղուելու, ու զմայլելու աստուածային քաղցր սիրովը: Ողջոյն քեզ Սարիամ. և այլն:

Ե

Ո՛վ սրբուհի կոյս մայր ցաւազին, մտածելով քու կին ետքի սաստիկ ցաւդ որ քաշեցիր՝ տեսնալով զՀիսուս զերեզմանը դրուած ու թաղուած. ծածկելով զինքը անարժան ու ապերախտ աչքերէն, որ չէին ուզէր շանչնալ իր մեծութիւնը ու ըրած բարերարութիւնները. կ'աղաչեմ զքեզ մայր ողորմութե, մի գներ զիս աննոց կարգին մէջը, այլ տուր ինծի շնորհք, որ նուիրե

լով Մտուծոյ իմ հոգիս ու մարմինս, թաղուիմ ու ծածկուիմ աշխարհքէս, որպէս զի ետքը կարենամ Յիսուսին փառաւոր յարութեանն ալ արժանի ըլլալ: Աղջոյնքեզ Մաւրիամ: և այն:

ԱՂՍԹԻՔ

Ո՛վ քաղցրագուծ կոյս մայր Բնուծոյ, ես մեղաւորս՝ որ անարժան եմ քու առջևդ երևնալու, զիտնալով մայրական սէրդ ու զթուծիւնդ՝ կը փափաքիմ ծառայել քեզի. ուստի կ'աղաչեմ որ ըլլաս ինձի ասոր թագուհի, պաշտպան ու մայր: Մաւրաջողբեմ հաստատուն սրտով, որ ասկից ետքը չե՛ թէ միայն ջերմեռանդ ըլլամ քեզի, այլ և ջանք ընեմ որ ուրիշներն ալ քեզի ծառայեն, քեզի որդեգիր ըլլան, ու քու սիրովդ վառուին: Մաղաչեմ մայր ամենագլխաւ, Յիսուսինսուրբ սիրոյն համար ընդունէ՛ զիս ալ քու ջերմեռանդ ծառաներուդ համբան:

քին մէջը: Տուր ինձի շնորհք, որ իմ ամէն դործքս, խօսքս ու խորհուրդս ըլլան հաճոյ քու աչքիդ, ու օգտակար իմ հոգւոյս: Մի թողուր զիս իմ ձեռքս, այլ քուկին մայրական սիրովդ պահէ՛, պահպանէ՛, խնամէ՛ ու առաջնորդէ՛ ինձի բարի գործքերու. և մի մոռնար զիս մայր Բնուծոյ իմ մահուանս ատենը: Աղաչէ՛ զՅիսուս աստուածորդիդ՝ որ ողորմի ինձի ու քաղցր ընէ իմ դատաստանս, արդարութեամբ չիդատէ գործքերս. այլ զթուծեամբ քաւէ իմ ամէն մեղքս, ու արժանի ընէ զիս իր աստուածային տեսութեանը:

Քարոզ տարբ Աստուածածկին:

Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ Ղնուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր, և ցնծութիւն աշխարհի ծնար զբանն Բնուած. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեմ:

Ղաչեան վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Մտուած, որ խոնարհեցաւ 'ի Հայրական ծոցոյ, էառ մարմին ըստ մարդկային ընուծես՝ առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեան:

Ղաչեան վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Մտուած, ներել մեզ անտես առնել զյանցանս մեր, և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել Հակառակամարտիցն 'ի պատերազմի. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեան:

Ղաչեան վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Մտուած, զի լուսցեն պատերազմունք, դադարեցին յարձակմունք թշնամեաց, անկեցի սէր և արդարութիւն 'ի յերկրի. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեան:

Ղաչեան վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Մտուած, աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բըզխումն աղբերաց, զառատ պողաբե-

րութիւն բուսոց և անկոց առ 'ի զբարձալի լինել ամենայն Հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեան:

Ղաչեան վասն մեր զառ 'ի քէն զմարմնացեալն Մտուած, զի միաբանեացէ զէկեղեցի իւր սուրբ, շինեալ 'ի վերայ Տիման առաքելոց և մարգարեից՝ պահել անարատ մինչև յոր երևելոյ զալստեան իւրոյ, աղաչեմք: Մայր սուրբ բարեխօսեան:

Ղաչեան վասն մեր սրբուհի բզմիածին քոզորդին, և վասն հօգուցն հանգուցելոց ընդունել յարբայութիւնն երկնից, և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն, աղաչեմք: Յիշեան Տէր և ողորմեան:

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զբորձս բարեաց պարգևել մեզ խնդրեմք: Տուր մեզ տէր Մտուած մեր:

Օ անձինս մեր և զմիմեանս Տեառն Մտուածոյ ամենակալին յանձն արասցուք: Բեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ տէր Աստուած
 մեր ըստ մեծի ողորմութեան բուժ,
 ասասցուք ամենեքեան միաբանու-
 թեամբ: Տէր ողորմեա՛, Տէր ողոր-
 մեա՛, մայր սուրբ բարեխօսեա՛ առ
 Տէր վասն մեր:

ՍՍՂԹՈՍ ՀԱ:

Աստուած զիրաւունս քո արքայի
 տուր, և զարդարութիւնս քո որ-
 դոյ թագաւորի: Վատե՛ղ զժողո-
 վուրդս քո արդարութեամբ, և զաղ-
 քատս քո իրաւամբք: Առցին լե-
 ըինք զխաղաղութիւն ժողովրդեան,
 և բլուրք զարդարութիւն: Իրաւ ա-
 ըացե՛կ ազբատաց ժողովրդեան, և
 կեցուցե՛կ զորդին անանկաց, և խո-
 նարհեցուցե՛կ զամբարտաւանս: Վաց-
 ցե՛կ և մնացե՛կ ընդ արևու, յառաջ
 քան զուսին ազգէ՛ մինչև յազգ:
 Իջցե՛կ որպէս զանձրև ՚ի վերայ գեղ-
 ման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր:

Բերեցո՞ւս յԵսայիայ մարգարէ:

ՃԱ. 1:

Եւ բղիւսեցէ՛ գաւազան յարմա-
 տոյն Յեսուեայ, և ելցէ՛ ծաղիկ յար-
 մատոյ անտի: Առ հանդիցէ՛ ՚ի վե-
 րայ նորա հօգի Աստուծոյ, հօգի ի-
 մաստութեան և հանձարոյ, հօգի
 խորհրդոյ և զօրութեան, հօգի զի-
 տութեան և աստուածպաշտու-
 թեան. և լցցէ՛ զնա հօգի երկիւղի
 Աստուծոյ: Առ ՚ի կարծ գատեցի,
 և ոչ ըստ խօսից յանդիմանեցէ:
 այլ արասցէ իրաւունս անանկին, և
 յանդիմանեցէ զնանարհս երկրի:

Ալէլուիա. ալէլուիա:

Հօգին սուրբ եկեցէ՛ ՚ի քեզ և
 զօրութիւն Քարձրելոյն հովանի լե-
 ցի՛ ՚ի վերայ քո:

Անտարակ ըստ Գոսիտոս:

Ա. 26:

Եւ յամենանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ Տրեշտակ յԱլուտուծոյ 'ի քաղաք մի գաղիլեացոց, որում անուն էր Կազարէթ. առկոյս խօսեցեալ անն, որում անուն էր Յովսէփ 'ի տանէ Գաւթի, և անուն կուսին Սարիամ: Եւ եկեալ առ նա՝ ասէ. Ուրախ լըր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ բանսն խաղկեցաւ և խորհէր ընդ միտս՝ Թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս: Եւ ասէ յնա Տրեշտակն. Ս'ի երկնցիր Սարիամ, զի գտեր շնորհս յԱլուտուծոյ: Եւ ահա յղաջիր և ծընցես որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս: Եւ եղիցի մեծ, և որդի Բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա տէր Լստուած զաթուն Գաւթի հօր նորա. և Թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակովբայ 'ի յաւիտեանս, և Թագաւորութեան նորա վախճանս:

մի լիցի: Եւ ասէ Սարիամ՝ ցհրեշտակն. Օ խաղդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պատասխանի ետ Տրեշտակն և ասէ յնա. Հոգի սուրբ եկեսցէ 'ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի 'ի վերայ քո. քանզի և որ ծնանելոյն է 'ի քէն՝ սուրբ է, և որդի Լստուծոյ կոչեսցի: Եւ ահա Եղիսաբէթ աղցական քո, և նա յղի է 'ի ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա, որ ամուլն կոչեսցեալ էր. զի ոչ տկարացի առ յԱլուտուծոյ ամենայն բան: Եւ ասէ Սարիամ. Լհաւասիկ կամ աղախին Տեան. եղիցի ինձ ըստ բանի քում. և զնաց 'ի նմանէ Տրեշտակն:

Գարոգ:

Սուրբ զԼստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ հայր 'ի յերկինս, զի կամեսցեալ ողորմեսցի, և զթացեալ կեցուցէ զարարածս իւր. ամենակալ տէր Լստուած մեր, կեցո՛ւ և ողորմեա՛:

ԱՂՐԹՔ

Ընկալ տէր զաղաչանս մեր բա-
րեխօսութեամբ սուրբ Աստուա-
ծածնին անարատ ծնողի միածնի
որդւոյ քո, և աղաչանօք ամենայն
սրբոց քոց, և որոց այսօր է յիշա-
տակ. ընդ մեզ տէր և ողորմեա՛.
ներեա՛ լաւեա՛ և թող զմեզս մեր:
Արժանաւորեա՛ զոհութեամբ փա-
ռաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ
սրբոց հոգւոյդ, այժմ՝ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից ամէն:

(Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիս-
տոս ամէն:
Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ
եղիցի անուն քո. և այլն:

Պ Ա Շ Տ Օ Ն

Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

ԱՂՐԹՔ ՄԵՆԱՅՈՒՍԵԻՒՆ ԻՕՒԳԵՐՈՂՐ

Մեծացոցէ անձն իմ զճեր, և ցեծացաւ
նոցի իմ յԱստուած փրկիչ իմ:

Ուրախութեամբ սրտի կրփառա-
ւորեմ զԱստուծոյ անբաւ մարդա-
սիրութիւնը, որ ուզելով մեր փրկ-
կութեանը համար մարդ ըլլալ, ընտ-
րեց զքեզ արժանաւոր մայր իր մե-
ծութեանը. զարդարեց զքեզ ան-
պատմելի շնորհքներով, լեցուց ըզ-
քեզ անհուն խնդութեամբ, հաս-
ցընելով զքեզ այնպիսի պատուոյ ու
փառաց, որ քեզմով երեցաւ ու կ'ե-
րենայ Աստուծոյ մեծութիւնը, կա-
րողութիւնը, սքանչելիքը, գթու-
թիւնը ու ողորմութիւնը մեր վրայ:
Վաղաչեմ զքեզ տիրուհի, մեծ-

ցուր քու անունդ իմ վրաս, ողորմե-
լով ինձի պէս անարժանին . փառա-
ւորէ քու աստուածորդիդ՝ առնե-
լով ինձի համար քաւութիւն ու
թողութիւն բրած մեղքերուս, ու
բով Մատուցոյ գթութիւնը կ'ե-
րենայ, ու քուկին մայրական սրտիդ
ուրախութիւնը կ'եւեւնայ :

Ձի հայեցաւ 'ի խոնարհութիւն աղախնոյ
խրոյ, զի անաշայտնեոտ կրակեացն ինձ
աւեւնայն ազգր :

Ար փառաւորեմ քուկին երկրը-
պագելի խոնարհութիւնդ մնայր Մա-
տուցոյ, որ արժանի ըլլալովդ ասանկ
բարձր պատուոյ ու մեծարանաց, խո-
նարհեցուցիր զքեզ աղախին ըսուե-
լով Մատուցոյ . ուստի Մատուած ալ
քու ցանկալի խոնարհութեդ համար
այնչափ բարձրացուց զքեզ ու փա-
ռաւորեց, որ է՝ թէ մինակ երկին-
քին հրեշտակները, այլ և ամէն
ազգ ու ազինք կը շանչանան, կ'օր-
հնեն, կը պատուեն, կը գովեն ու

երանութիւն կու տան քեզի սուրբ
Մատուածածին : Ար փափաքիմ էս
ալ անարժան բերնովս քանի որ ողջ
եմ նէ՝ օրհնել, գովել, պատուել,
փառաւորել զքեզ սուրբ կոյս տի-
րամայր : () օրհնեալ էս դու 'ի կա-
նայս, և օրհնեալ է պտուղ որովայ-
նի քո Հիսուս :

Ձի արար ինձ մեծամեծս հօգրն . և սարք
եւանսն եղաւ :

Ճանչալով քուկին արժանաւու-
րութիւնդ աստուածային անհուն
չնորհքներու, որով էլար բարձրա-
ցար փառքով քան զամէնը վեր, ին-
չուն եղար մայր ու ծնող Մատու-
ցոյ, խոնարհութեամբ սրտի ու որ-
դիական պատկառանքով կ'իշխիմ
սուրբ ոտքդ . գիտնալով որ Մա-
տուած իր ամենակարող զօրութեբ
աւեր է զքեզ միջնորդ, որպէս զի
քեզմով փառաւորուի իր ամենա-
սուրբ անունը . ըրեր է քեզի աս ա-
մենամեծ շնորհքը, որ ըլլաս մեզի

պաշտպան , օգնական , ապաւէն ,
 խնամակալ ու բարեխօս : Ա՛րդա-
 չեմ գրեզ տիրամայր , ցրցու՛ր իմ
 վրաս քու զօրաւոր մայրութիւնդ ,
 փառաւորէ՛ քու ցանկալի անունդ •
 փրկէ՛ զիս ՚ի փորձութենէ՛ ու ամէն
 վտանգէ՛ • որպէս զի անարատ վար-
 քով ծառայեմ Ա՛ստուծոյ , ու ան-
 դադար օրհնեմ քուկին մայրու-
 թիւնդ :

Եւ որչափոքիսն նորա ազգաց յազգս
 երկիրսւոց խրոց :

Գօհանամ Ա՛ստուծոյ անբաւ
 շնորհաց ու ողորմութեանը , որ քու
 միջնորդութեամբդ բերե՛ր է ու ան-
 դադար կ'ընէ մեզի , և պիտի ընէ
 ինչուան աշխրբբիս ետքը , Ա՛մէն
 ողորմ Ա՛ստուծոյ ամենագթած մայր
 ես • ո՛վ կրնայ յաւսահատիլ քու ո-
 ղորմութենէդ : Ի՞նչպէ՛տ մեղքերուս
 շատութիւնը կը վախընէ զիս , սա-
 կայն քու գթութիւնդ ու զօրաւոր
 բարեխօսութիւնդ կը քաջալերէ ,

տիրտ կու տայ ինձի , որ իմ յոյս բո-
 լոր քու վրադ դնեմ : Գ՛տեմ մայր
 ողորմութեան , որ չէ՛ թէ մինակ ին-
 ծի կ'ողորմիս , այլ և ընտանեացս՝
 աղգականներուս ու բարեկամնե-
 ռուս • քուկին մայրական խնամքդ ու
 գթութիւնդ չիպակսեցնելով ինձ-
 մէ ու մեր տանը վրայէն :

Արար զօրոքիսն բազկաւ խրոյլ , ցրուաց
 զամբարտաւանս մտօք սրտից խրուաց :

Ո՛վ որպիսի՛ մեծ ու անպատմե-
 լի հրաշք էր՝ որ Ա՛ստուած բրաւ մե-
 զի : Գ՛ատապարտուած էինք Ա՛գա-
 մայ մեղքովը , մատնուած էինք օս-
 տանային ձեռքը , անձար էինք մնա-
 ցեր մեր փրկութեանէն • սակայն Ա՛ս-
 տուած իր ամենամեծ իմաստու-
 թեամբդ գտաւ դեղը • ուզեց դալ
 ծնանիլ բեզմէ , ու մեր տկար բնու-
 թեանով յաղթել սատանային , աղա-
 տել զմեզ անոր իշխանութենէն :
 Զ՛րցուց իր զօրութիւնը , բաշխեց
 ողորմութիւնը՝ գրեզ դնելով միջ-

նորդ մեր փրկու թեանը : Վեղմով
 ամբացոց սատանային հպարտու-
 թիւնը . քու ցանկալի խոնարհու-
 թիւնդ ինժեղոց զՄատուած իր մե-
 ծու թեանէն , ըրաւ մեղի հաւասար .
 որպէս զի իր խոնարհու թէր մենք
 երկինքը ելէնք ու աստուածային
 փառքով զարդարուինք : Մ ամե-
 նամեծ Մատուծոյ բարերարու թիւ-
 նը քու միջնորդութեամբդ ընդու-
 նելով սուրբ Մատուածածին , կը
 ցնծանք ու կ'ուրախանանք մեծու-
 թեան ու փառացդ վրայ . և կ'աղա-
 շենք զմայրու թիւնդ , որ քու անուշ
 խնամքդ չիպակեցրնես մեզմէ :

Գրական գնդօրս յարոտց , և բարձրացոյց
 զխոնարհս :

Ո՛վ անբաւ մեծութիւն ու ան-
 ճանեղի դժու թիւն տէր Հիսուս
 Վրիստոս Մատուած բողոքից , որ
 քու կին քաղցր մարդասիրութեամբդ
 եկար մեզի համար մարդ եղար . պա-
 տուեցիր մեք տկար բնու թիւնը , զար-

դարեցիր աննման շնորհքներով , տը-
 ւիր մեղի իշխանութիւն կոխել ու
 տիրել սատանային վրայ : Վաղա-
 չեմ զքեզ Մատուած իմ Հիսուս ,
 ինչպէս որ զաս ամէն բարեքս ուղե-
 ցիր ընել աշխրբքիս՝ միջնորդու-
 թեամբ ամէնորհնեալ մօրդ , ասանկ
 ալ հիմա ողորմէ՛ ինձի անոր բարե-
 խօսութեամբը , որ ես ալ զօրանամ
 քու շնորհքովդ , ու իմ հոգեոյս
 պէտք եղած բաներուն ջանք ընե-
 լով , արժանի ըլլամ ճշմարիտ հա-
 ւաստքով , յուսով ու սիրով ծառայել
 քեզի : Իմ բոլոր կեանքս կը նուի-
 ըեմ քու սիրոյդ , որ իմ փրկութեանս
 սիրովը մոռցար քու կին մեծութիւնդ :
 Վաղաչեմ զքեզ ալ մայր ողորմու-
 թեան՝ զի քես իմ տկարութիւնս
 ու կը գժաս խեղճերուն վրայ , մի
 մոռնար զիս , որ բողոքով սրախ քու
 օգնութեանդ ապաւիներ եմ , ու
 քեզմէ՛ ՚ի զառ չունիմ ինձի ուրիշ
 ապաւէն ու մխիթարութիւն :

Ձրայցեալս լցոյց բարոյքեանք, և զմե-
ծատունս արձակեաց ունայնս :

Ո՛վ աղբիւր կենդանու թեան տէր
իմ Յիսուս Վրիտասս, որ քու զը-
թու թեամբդ ողորմելով մեր աղ-
քատու թեան վրայ՝ եղար հաց ան-
մահական կենաց. լեցուցիր մեր կա-
րօտու թիւնը երկնային շորհքնե-
րով, խաղբեցիր սատանային գերի-
ները. բացիր մեզի արքայութեան
ճամբան՝ որ համարձակ առանց վա-
խի կարենանք քայել ու հասնիլ
յաւիտենական երանութեան: Ա՛ս
ղաչեմ զքեզ փրկիչ իմ Յիսուս միջ-
նորդութեամբ ամենասուրբ մօրդ
տնւր ինձի ճշմարիտ փափաք ար-
քայութեան. արհամարհել զաշ-
խարհք, զգուիլ իր մեծութենէն ու
հանգստութենէն. քեզի ցանկալ,
քեզի հառաչել, զքեզ մտմտալ ու
քու սիրովդ սուչորուիլ: Ա՛յրբ կ'ըլ-
լայ որ աս իմ սրտիս փափաքը ու ա-
նօթութիւնը կշտանայ քու կին տե-

տութեամբդ, ու յաւիտեան ժա-
ռանդելով զքեզ արքայութեան մէջ:

Պաշտպանեաց խոյսելի ծառայի խրտմ՝
յիշել զողորմութիւնս :

Քիտեմ Տէր ու կը դառնիմ
բողորով սրտիւ, որ շատ ու անթիւ
բարիքներ բրեր ես քու ծառանե-
րուդ, չէ թէ իրենց արժանաւորու-
թեանը համար, այլ մինակ քու կին
ողորմութիւնդ ու զեւելով ցրցրնել մե-
զի ու իմացընել՝ որ բողորովին դժու-
թիւն ես: Ուստի ես ալ՝ թէպէտ
անարժան եմ՝ շորհքներուդ, սա-
կայն ապաւինելով անբաւ մարդա-
սիրութեանդ, կը յուսամ որ յի-
շելով քու ողորմածութիւնդ կը զօ-
րացընես իմ տկարութիւնս, կը
խնամես իմ կարօտութիւնս, կը
պահես փորձանքներէն, կը պաշտ-
պանես վտանգներէն, ու կու տաս
ինձի շորհքդ, որպէս զի առանց
մեղաց անցընեմ իմ կեանքս, ան-
դադար քեզի ծառայելով, ու միշտ

զբեզ փառաւորելով, որ արժա-
նի եւ ամէն փառաց: Աղաչեմ
զբեզ ալ տիրուհի, մայրական սի-
րովզ միջնորդ եղիր իմ աղաչանացս.
դիտեմ որ՝ եթէ բարեխօս բլլաս ին-
ծի համար, անտարակոյս կ'ընդու-
նիմ՝ Մտուծոյ ողորմութեան հետքը:

Սրբեա խօսեցաւ առ հարս մեր՝ Արրանա,
ուս և զաւակի նորս յախտեան:

Ո՛վ ամէնօրհնեալ սուրբ կոյս
տիրուհի, պսակ և պարծանք աս-
տուածային բարերարութեանցը,
քեզմով կատարուեցաւ Մտուծոյ
խտատմութիւնը. քեզմով լսեցինք մեր
փրկութեան աւետիքը. քեզմով լե-
ցուեցանք ու վնասանք Մտուծոյ
Հնորհրովը. քեզմով օրհնուեցան
ազգ ու ազինք. և քու միջնորդու-
թեամբզ պիտոր հասնինք մեր յա-
ւիտենական երանութեանը: Աս-
ղաչեմ զբեզ տիգրանայր՝ դուն որ
անարատ մտքութեամբ տաճար ու
կտակ եղար Մտուծոյ խտատմանը,

զրախա եղար անմահ ծառին կե-
նաց, տուիր բաշխեցիր մեզի քու
ցանկալի պտուղդ, որով կշտացանք
ու զմայրեցանք անձառելի խնդու-
թեամբ: Ողորմէ իմ խեղճութեանս
վրայ, որ իբրև անառակ որդի իմ
մեղքովս վատնեցի, կորսնցուցի
Մտուծոյ ինծի տուած Հնորհրու-
րը. չիճանցայ իր բարերարութիւն-
ները, ու իմ չար գործքերովս վա-
տրկեցայ ու շատցուցի հոգւոյս պա-
տիճները. ու հիմա զրկուած բլլա-
լով ամէն բանէն, ամբնջալով բրած-
ներուս վրայ՝ խոնարհութեամբ սրբ-
տի կը դիմեմ քեզի սուրբ Մտու-
ծածին: Վիտեմ որ գթած ես, դի-
տեմ որ զօրաւոր ես. դիտեմ որ բան
չիտկարանար քու առջևդ. անոր հա-
մար կ'աղաչեմ զբեզ՝ որ բլլաս ինծի
դեզ կենաց, պաշտպան փրկութեան,
միջնորդ երանութեան, ու ցնծու-
թիւնս անվախճանս փառաց արքայու-
թեանս մէջ. ուր տեսնալով և վայ-
լելով իմ Յիսուս փրկիչս, փառա-
ւորեմ քու մայրութիւնդ որ ցրցու-
ցիր ինծի պէս անարժան զաւակիդ:

երգ:

“Նահապետացն Արրահամու,
 Իսահակայ և Յակոբայ պարգևե-
 ցար ՚ի յԱստուծոյ կոյս Սարիամ
 դուստր նոցին. երանեն ազգ և ա-
 զինք այսօր զծնեալդ ՚ի յԱննայէ:
 Աղախին և մայր կենաց աջոյն ծնող
 Տօր միածնին, որ առ ՚ի քէն մար-
 մնոջն ընկէց զամբարտաանն յա-
 թուոյ. երան՝: Արբարծրացոյց զան
 կեալ ընու թիւնս ՚ի քէն ծննդեամբ
 Արդին յերկինս. զկարօտեալ ելլց
 Տացիւ, և զմեծատունն ելլցծ ու-
 նայն. երան՝” 7 :

Աղօրք Խոր խեղդեալ սուրբ
 Աստուածածնայ:

Ս.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
 կոյս, կը յնձամ՝ թու փառացդ վրայ՝
 որ աւետեօք Վարդիէլ Տրեշտակու

պետին եղար մայր Աստուծոյ, ընա-
 րուեցար միջնորդ ըլլալ մեր փրկու-
 թեանը, լեցուեցար աստուածային
 անթիւ շնորհքներով մեզի բաշխե-
 լու համար. կ'աղաչեմ գթեզ մայր
 ողորմութեան՝ մի զրկէր զիս մայրա-
 կան օրհնութեանէդ. մասնակից ըրէ
 իմ հոգիս ալ երկնային ուրախու-
 թեանդ, որում արժանի եղար թու
 ամբիժ մարբութեամբդ ու անձա-
 ւելի խոնարհու թեամբդ: Աղջոյն քեզ
 Սարիամ և այն:

Բ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
 կոյս, մտմբտալով թու անպատմելի
 խնդութիւնդ որ ունեցար Յիսուս
 միածին որդիդ ծնանելու ատենը,
 երբօր հրեշտակները երեւնալով հո-
 վուաց փառք կու տային Աստուծոյ,
 ու աշխարհիս ալ խաղաղութիւն կ'ա-
 ւետէին, կ'աղաչեմ գթեզ որ իմ հո-
 գիս ալ արժանացնես ան ուրախու-
 թեանը և շնորհքներուն, որ Յի-

սուս փրկիչը մեզնի համար բերաւ
աշխարհք իրեն սուրբ ծննդեամբը :
Ողջոյն քեզ Սարիամ, և այլն :

Գ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
կոյս՝ կ'ուրախանամ քու փառացդ
վրայ, որ իբրև թագուհի ու ծնող
Լստուծոյ սրատուեցար մագերէն •
ան երկրպագու թիւնը ու ընծաներն
որ տունն Յիսուսի, չէ թէ մինակ
զաւկիդ էր, այլ և քեզի, ըլլալովդ
մայր Լստուծոյ ու միջնորդ փրկու
թեան . կ'աղաչեմ զքեզ՝ որ իմ հո
գիս ալ մասնակից բնես ան օրհնու
թեան ու չնորհքներուն, ինչ որ մայ
րական սիրովդ տուիր երանելի մն
գերուն : Ողջոյն քեզ Սարիամ, լի
չնորհօք . և այլն :

Դ.

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
կոյս՝ կը ցնծամ քու անդամուելի ու

րախու թեանդ համար, որ ունեցար
տեսնալով Յիսուսին փառաւոր յա
րու թիւնը, երբոր եկաւ միսի թարեց
քու ցաւազնեալ սիրտդ . կ'աղաչեմ
զքեզ մայր ողորմութեան՝ արժանի
ըրէ իմ հոգիս ալ տեսնալու Յի
սուսին յարութեան չնորհքը, ու
կենդանի հաւատքով, հաստատուն
յուսով և ջերմեռանդ սիրով պաշ
տելու զՅիսուս իմ փրկիչս : Ող
ջոյն քեզ Սարիամ . և այլն :

Ե

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
կոյս՝ կ'ուրախանամ անձառելի իրն
դու թեանդ համար՝ որ ունեցար տես
նալով զՅիսուս միածին որդիդ, եր
բոր համբարձման օրը բազմութի
հրեշտակացիր աստուածային փառ
քովը ելաւ երկինքը ու նստաւ ընդ
աջմէ հօր . կ'աղաչեմ զքեզ մայր
ողորմութեան՝ արժանի ըրէ իմ
սիրտս ալ, որ միշտ Յիսուսին հետ
ըլլայ արբայութեան փափաքովը, և

բարի գործքերով փառաւորէ զինքը
աշխրբիս մէջը: Ողջոյն քեզ Սա-
րիամ. և այլն:

2

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
կոյս՝ կը յնձամ քու անպատմելի
խնդութեանդ համար, երբոր տե-
սար Տողոյն սրբոյ գալուստը առա-
քելոց վրայ՝ լեցընելով զանոնք ան-
թիւ շնորհքներով, որով եզան աշ-
խրբբիս մէջը քարոզ Յիսուսին աս-
տուածութեանը, ու քու կին մայր
Լստուծոյ ըլլալուդ: Ապղաչեմ՝ ըզ-
քեզ մայր գթութեան՝ լեցնուր զիս
ալ աստուածային շնորհքով, որով
ըլլամ շշմարիտ ծառայ Լստուծոյ
մտքով, գործքով ու բերնով փառա-
ւորեմ քու մայրութիւնդ, որ կը
ցըցընես ինձի: Ողջոյն քեզ Սա-
րիամ. և այլն:

1

Ո՛վ փառաւորեալ միշտ սուրբ
կոյս՝ կ'ուրախանամ անձառելի փա-
ռաց ու խնդութեանդ համար՝ որ
ունեցար վերափոխմանդ օրը, երբոր
բազմութեամբ հրեշտակաց մտար
յարբայութիւն, ու պսակեցար թա-
գուհի երկնի և երկրի. կ'աղաչեմ՝
զքեզ մայր ողորմութեան՝ ան զիս
ալ քու պաշտպանութեանդ տակը,
որ կը փափաքիմ ջերմեռանդու-
թեանդ մէջը մնալ ու մեռնիլ: Ող-
ջոյն քեզ Սարիամ. և այլն:

Մաղթանք:

“Րոտեմք՝ ի քէն աղերսիւ բա-
նի, որ ես քաղցրալուր գրաւ աշխար-
հի. միայն երանեալ և բարեբա-
նեալ, Տօրն հաճութեամբ հովա-
նաւորեալ. Ողբոյն ծնող, Տողոյն
վերընդունող, Արրորդութեան փա-
ռացն տարող: Ա երանկարեան զառ

ի յաւազանէն անախտ արգանդէ
զկարդացեալս անուն ՚ի գիր մատե-
նի վերնում դպրոցիդ ։ ։ ։

ԱՂՈԹԻՔ

Առնարհու թեամբ սրտի կ'ընիմ
քու ոտքդ սուրբ Աստուածածին ,
թաղուհի հրեշտակաց , աստատան
մեղաւորաց , մխիթար վշտացելոց ,
ողորմէ իմ կարօտեալ հոգւոյս , որ
զրկուած է ամէն հոգւոր մխիթա-
րութենէ . քեզմէ ՚ի զատ չունիմ
այլ յոյս մայր ողորմութեան . դուն
ես իմ ճարս , դուն ես իմ ապաւենս ,
դուն ես իմ մխիթարութիւնս : Ին-
կած եմ ալէկոծութեան մէջ , թէ
որ ձեռք չիտաս նէ ինձի , կը խորզ-
դուիմ : Ինանդ եմ հոգւով ու մար-
մնով . թէ որ դեղ մը չընես , ան-
տարակոյս կը մեռնիմ : Թաղուած
եմ մեղաց ու ախտից մէջը . թէ որ
չաղատես , պիտի կորսուիմ : Վի-
տեմ մայր ողորմութեան , որ անթիւ
է քու զթութիւնդ , մանաւանդ ա-

նոնց վրայ՝ որ իրենց բոլոր յոյսը
քեզի են դրեր : Ա՛ղաչեմ զթա-
իմ վրաս , ցրցուր քու մայրական
խնամքդ , որպէս զի փառաւորեմ
քու մեծութիւնդ , բուկին կարու-
ղութիւնդ , քու հրաշքդ , անպատ-
մել սէրդ ու զթութիւնդ , որ ու-
նիս մեղաւորներուն վրայ :

ԵՐԳ:

“ Աստուածածին անարատ մայր
Տեանն և կոյս սուրբ , բարեխօսեան
առ որդիդ քո միածին , զի փրկեցէ
զմեզ ՚ի սպառնալեաց գեհէնոյն . և
պարգևեցէ մեզ զերկինց արքայ-
ութիւնն , և հանգուցէ զհոգիս
մերնն ջեղեղոյն . օգնեա՛ւ ինձ : Քրիս-
տոս այսօր յաւաջին ճանապարհին ,
և ՚ի միւսանդամ դալստեանդ քո
օգնեա՛ ինձ ։ ։ ։

ԱՂՈԹԻՒՅԻ

Ո՛վ բարեգութ իոյս Ս՛արիամ,
 մայր Մատուծոյ, դանձապետ չնոր-
 հաց, փաստաբան ու պաշտպան մե-
 ղաւորաց, քու դժու թեամբդ մտիկ
 ըրէ աղաչանաց անարժան ծառայիս.
 տուր ինձի աս չնորհքս՝ որ էս ալ
 մտնամ ջերմեռանդ ծառաներուդ
 համրանքին մէջը: Ո՛վ ամենասուբբ
 կոյս՝ մաքրէ իմ սիրտս ամէն աղտո-
 տու թենէ. լուս՝ ու սրբէ իմ հոգիս
 ամէն պակտու թենէ, վառէ զիս ար-
 քայութեան սիրովը, զգուելի ըրէ
 ինձի աշխրբիս ունայն բաները, որ
 իս քեզմէ կը հեռացընեն: Քարե-
 խօսէ ինձի համար առ միածին որ-
 զիդ, մանաւանդ մեռնելուս ատե-
 նը, երբոր վախով պաշարուիմ դա-
 տաստան երթալու՝ պատասխան տա-
 լու իմ դորձքերուս համար, որպէս
 զի քու զօրեղ միջնորդութեամբդ
 ազատիմ յաւիտենական տանջան-
 քէն, ու աս ողորմելի կեանքէս ետ-

քը արժանի ըլլամ արքայութեան
 փառաց հասնելու: Ս՛ողաչեմ մայր
 ողորմութեան, անուշ աչքդ մի վեր-
 ցընէր իմ վրայէս. քեզի կը յանձ-
 նեմ իմ հոգիս ու մարմինս ալ. դուն
 պահէ, դուն պաշտպանէ ամէն փոր-
 ձանքէ. դուն մաքրէ ու զարդարէ
 զիս աստուածային չնորհքով: Տուր
 ինձի ճմարիտ ու կենդանի հա-
 ւատք, հաստատուն յոյս, և կատա-
 րեալ սէր. որպէս զի բարեգործու-
 թեան հետ ըլլալով՝ կարենամ աղէկ
 ծառայել Մատուծոյ: Ս՛ողաչեմ
 մայր Մատուծոյ՝ ողորմէ՛ աս քաղքիս
 ալ, պահպանէ կռիւներէն, ազատէ
 ժանտամահէն, փրկէ սովէն, կրա-
 կէն, դեմնաշարժէն ու այլ վնաս-
 ներէն: Ք՛նու մայրական սիրովդ հո-
 ղա՛ զիս ու ընտանիքս ալ, և զամե-
 նայն քրիստոնեայս, որ բոլորով սրբ-
 տիւ քու կին դժու թեանդ ապաւի-
 ներ ենք:

Ո՛վ քաղցրագութ տիրուհի իմ,
 մի մոռնար քաւարանին մէջի եղած
 հոգիներն ալ՝ որ կը սպասեն Մատու-

ծոյ ողորմութեանը, որպէս զի քու
բարեխօսութեամբդ շուտով ազա-
տին իրենց նեղութեանն, ու հաս-
նին արքայութիւն. ուր արժանի ըլ-
լալով աստուածային տեսութեան,
փառաւորեն զմիածին Արդիդ ընդ
հօր և ամենասուրբ Հօգւոյն այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից :

ԱՍՂՄՈՍ

Ի խորոց կարգացի առ քեզ Տէր,
Տէր լուր ձայնի իմում: Աղիցին ա-
կանջք քո 'ի լսել զձայն աղօթից ի-
մոց: Թէ՛ զանօրէնութիւնս իմ
քննես Տէր, Տէր ո՞ կարէ կալ ա-
ռաջի քո, զի 'ի քէն է քաւութիւնս:
Սան անուան քո համբերի Տէր.
համբեր անձն իմ բանի քում. յու-
սացաւ անձն իմ 'ի Տէր: Ի պահէ
առաւօտու մինչև յերեկոյ, 'ի պա-
հէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ
'ի Տէր: Ի Տեառնէ է ողորմութիւն
բազում, և 'ի նամնէ է փրկութիւն,
և նա փրկեաց զԻսրայէլ յամենայն

նեղութեանց նորա: Փառք հօր, և
այլն: Հայր մեր որ յերկինս:

Աղօրք բարի ման խնդրելու սուրբ
Աստուածածնէն:

Ո՛վ քաղցրագութ մայր Հիսու-
սի կոյս՝ արիամ, օգնական ու պաշտ-
պան անձարակ մեղաւորներու, լի
գթութեամբ և ողորմութեամբ, ա-
նուշ աչքովդ նայէ՛ ողորմելիս վրայ,
հասիր ինձի օգնութիւն քանի որ
մահս չէ եկեր մօտեցեր իմ քովս,
որ չըլլայ թէ յանկարծակի ու ա-
ռանց պատրաստութեան ելլեմ աշ-
խրքքէս: Մաղաչեմ զքեզ մայր ո-
ղորմութեան Հիսուսին չարչարա-
նացր ու մահուան սիրոյն համար,
պահէ՛ ու խնամէ զիս, որ հիմակուր-
նէ հեռանամ մեղքէ, փախչելով
սատանայէն ու իր ամէն չար գործ-
քէն. ճշմարիտ զղջմամբ՝ կատա-
րեալ խոտտովնութեամբ ու ար-
ժանաւոր ապաշխարութեամբ հաշ-
տուիմ Հիսուսին հետ: Աղօրմէ՛ ին-

Տի երանուհի մայր Աստուծոյ՝ ան սոսկալի ատենը՝ մեռնելու օրը, երբ որ շունչս բռնուի, ու լեզուս կապուելով չի կրնամ՝ աղաչել զքեզ, աչու ընդես մի ըննան, ու ականջներս խնան, ան ատենը մի մոռնար զիս մայր անարատ, այլ միտքդ բեր հի մակուան աղաչանքս որ կ'ընեմ քու մայրական գլուխ թեանդ, ու հասկրինձի օգնութիւն, որպէս զի խալըսիմ սատանային փորձանքներէն՝ ու անուշ մահուամբ քու ձեռքդ աւանդելով իմ հոգիս, արժանի ըլլամ արքայութեան ու մաննակցութեան սիրելի ծառաներուդ, որ քեզի հետ կը վայրեն զԱստուած յաւիտեանս յաւիտենից :

“Յարժանահայց և յամենազօրքո բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ, մնամբ ՚ի հաստատութեաննամեալք և հանդուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ Աստուածածնիդ . . . մայր հիմնադրութեան

հաստատութեան եկեղեցւոյ . . . ՚ի թեւս պահպանութեան լայնատարած քումի մաղթանաց ապաւինելով . . . աներկբայ յուսով հաւատամբ ապրիլ . . . Ար . Ի Կերբող . Կոմի :

Այոքք անարատ յղուքիս անարատ
Աստուածածնայ :

Ո՛վ ամէնօրհնեալ տիրամայր սուրբ կոյս Մարիամ, մամբտալով քու ամբիժ ու անարատ յղուքիս, որ առանց մեղաց յղացար ու աստուածային չնորհքով զարդարուցար, կ'աբախանամ Մատուծոյ անհուն մարդասիրութեանը վրայ, որ քեզմով ու զէց ջրցընել մեզի. և որովհետեւ իր ողորմութեամբը պիտի վերցընէր աշխրբբիս մեղքը ու անէճքը, անոր համար զարդարեց զքեզ իր չնորհքովը, որպէս զի անարատ յղանաս, ու քու անմեղութեանը երևնայ իր ամենակարող զօրութեանը ու անպատմելի գթութեանը մեր վրայ : Ա՛ղաչեմ մայր ողորմութեանը :

Թեան՝ անարատ յղութեանդ համար մարբէ՛ իմ հոգիս ալ ամէն աղտոտութեանէ, մասնակից ընելով քու սրբութեանդ, որ արժանի ըլլամ աստուածային չնորհաց. ու բարի վարքով, աղէկ գործքերով անցընեմ իմ բոլոր կեանքս Մատուծոյ ծառայութեան մէջ : Յանկալի ըլլայ ինձի մեռնիլը, քան թէ մեղքով սրդողցընել իմ տէրս, իմ փրկիչս, իմ բարերարս, որ է իմ բոլոր յոյս ու ապաւինութիւնս աս աշխրբբիս մէջը, և յաւիտենական յիսութեան ու փառքս անդին արքայութեան մէջ : Ա՛ղաչեմ մայր Մատուծոյ, մի զրկէր զիս քու գթութեանէդ, որ ամենուն սուրբ ըլլալը ու արքայութիւն հասնիլը կ'ուզես :

Երբ : « Այնքամա՞մ ծաղիկ, անդատապարտ շտապիչ, վերաբուսեալ յարմատոյն ! Եստեայ. զքեզ Երայիաս կանխաւ վերագոչեաց՝ եօթնարփեան չնորհաց հոգւոյն ընդունարան գոլ. Մատուածածին և կոյս զքեզ մեծացուցանելիք » :

Այոքք ծննդեան տարք Աստուածածնայ:

Ո՛վ ամբիժ և անարատ սուրբ կոյս Մարիամ, դու որ մնչուր ծնրն դեամբդ անպատմելի ուրախութիւն եղար աշխարհս, երևնալով իբրև աղուոր արուսեակ մը ու առաւօտ խաղաղութեան, իմացրնելով մեզի՝ թէ քեզմով պիտոր ծագի արեգակն արդարութեան Վրիստոս մեր փրկիչը. կը յնծամ ու կ'ուրախանամ Մատուծոյ ողորմութեանը վրայ, որ զբեզ աուաւ մեզի նշան իր հաշտութեանը ու անբաւ մարդասիրութեան: Վրու սուրբ ծնունդդ սկիզբն եղաւ աստուածային շնորհքն երուն, որ պիտի ընէր մեզի: Պսակ եղար նահապետաց, պարծանք մարգարէից, ուրախութիւն արդարոց, ու ապաւէն մեղաւորաց: Վաղաչեմ մայր ողորմութեան՝ անարատ ծննդեանդ համար նորոգէ՛ իմ սիրտըս, լուսաւորէ՛ իմ միտքս, սրբէ՛ ամէն զգայարանքս, որպէս զի ըլլամ

նոր մարդ ու աստուածային շնորհքով սրբութեամբ անցրնեմ իմ բոլոր կեանքս, պատուելով ու փառաւորելով քու սուրբ ծնունդդ, որ արժանի է ամենայն փառաց:

Երգ: “Սուսին նախնոց մօրն Եւայի՛ յորմէ Մգամն հին պարտի, բարձան անէժբքն արամական, քո սուրբ ծննդեամբ կոյս Մարիամ. աղաչեա՛ զքո միածին, թողու զմեզս որդւոց նոցին. յոր օրհնեցայք ազգք երկրածին, տնք օրհնութիւն պրաւ զոյ կուսին:”

Այոքք տարք Աստուածածնայ անուանք:

Ո՛վ անարատ կոյս Մատուածածին Մարիամ, ջանկալի կուսից և պարծանք ազցի մարդկանս, միջնորդ և բարեխօս մեր, տիրուհի և խաղաղարար այլեւո՞ժ ծովու աշխարհիս: Վրու սուրբ անունդ եղաւ մխիթարութիւն մեր սրտին. լուսաւոր աստղի մը պէս երևցար մեզի. ուրախացուցիր մարդկային բնութիւնը. ա-

ւեալք տուիր թէ պիտոր ըլլաս մայր
 փրկութեան. արդարոյց ցնծութիւն,
 մեղաւորաց ապաստան, վշտացելոյ
 հանդիսաւ, տարակուսելոյ քաջալե-
 բութիւն, դանձապետ շնորհաց և
 դուռն ողորմութեան Մատուծոյ :
 Վաղաչեմ զքեզ սրբուհի, ցրցուր
 իմ վրաս ցանկալի անուանդ պը-
 տուղը. եղիբ ինձի մայր, պաշտպան,
 ապաւէն, քաջալերութիւն և մխի-
 թարութիւն տառապեալ կենացս,
 որ կարօտ է ըստ զթուութեանդ ու
 օգնականութեան, մի զրկեր զիս
 մայրական խնամքէդ : Հեռացրեմ
 Մատուծոյ շնորհքէն, ու իբրև անա-
 ռակ որդի կորսնցուցեր եմ ամէն
 հոգեւոր բարիքս. մօտեցնըր զիս առ
 որդիդ քս միածին, հաշտեցնըր զիս
 իրեն հետ. մեծցնըր ու փառաւորէ
 քու անունդ իմ հօգւոյս փրկու-
 թեամբը :

Երգ : 66 Մարգարէից հանդիսա-
 րան և զրաւական կենաց մարդկան
 Մարիամ աստուածամայր. ընդու-
 նարան եօթնարփեան շնորհաց, խաւ

րիսխ յուսոյ հաստատութեան, զու-
 զաթիւ աւուրց դարուց անցաւօ-
 րաց. օրհնութեամբ երգով եկեղե-
 ցիք փեղեբաց այսօր տօնէն զյիշա-
 տակ ծննդեան քս ՚ի մօրէ ։

Աղօթք ընծայմաւ սուրբ Աստուածածնայ :

Ամէնօրհնեալ սուրբ կոյս Մա-
 րիամ, զաւակ ցանկալի, հարան եր-
 կնաւոր, որ մարբութեան սիրով
 ընծայուեցար Մատուծոյ, ու եղար
 մեղիօրինակ ամէնառաքինութեան :
 Պսակ եղար կուսութեան, պսակ
 խոնարհութեան, պսակ համբերու-
 թեան, պսակ աստուածպաշտու-
 թեան, պսակ աստուածային սիրոյ
 ու իմաստութեան : Եղար մէկ դե-
 ղեցիկ պատկեր մը ամենայն զօլեղի
 գործոց բարեպաշտութեան, երև-
 ցընելով զքեզ իբրև ձիթեխի պըա-
 զալից Մատուծոյ տանը մէջ. ինչուան
 արժանի եղար մայր Մատուծոյ ըւ-
 լալու : Վաղաչեմ զքեզ փրկուհի,
 քուկին աստուածային սիրովդ վա-

ուէ իմ սիրտս ալ հոգևոր ջերմե-
 ւանդութեամբ . որպէս զի ես ալ
 նուիրեմ Մտուծոյ իմ կեանքս հո-
 զուով ու մարմնով . ըլլամ ճշմարիտ
 ծառայ Մտուծոյ, ու արժանաւոր
 որդեղիր քու մայրութեանդ, հե-
 տեւելով քու կին տուած բարի օրի-
 նակներուդ . ու անով վայել մայ-
 րական խնամքդ ու սէրդ, որ կը յը-
 շընես քու ջերմեւանդներուդ :

Երբ . “ Մտուածատունկ իննկա-
 բեր ծառ յանուշահոտ բուրաստա-
 նէն, որ ՚ի գնացս հողւոյն վտակաց
 սնկեցար, և զանմահութեան պը-
 տուղն ՚ի ժամու ետուր մեզ . վասն
 օրոյ ամենեքեան զքեզ միշտ մեծա-
 ցուցանեմք ” :

Այոքք աւետման սուրբ Աստուածամկս :

Ո՛վ ամենասրբուհի կոյս, ընտ-
 րեալ և փառաւորեալ մայրդ Մ-
 տուծոյ, լի աստուածային չնորհքով .
 ուրախութիւն մարդկային բնու-
 թեանս և պարծանք եկեղեցւոյ :

Վեղմով կատարուեցաւ անքննելի
 խորհուրդն Մտուծոյ . քեզմով փա-
 ռաւորութեան մարդիկ, քեզմով նա-
 հագեալք ու մարդարէք հասան ի-
 րենց բաղձանքին : Մ ցանկալի օ-
 բուանս կը նայէին ամհնքը, որ Մ-
 տուած իր ողորմութիւնը յայտնէ
 աշխրբքիս . ասօր բացուեցաւ Մ-
 տուծոյ ողորմութեան դուռը, խըր-
 կուեցաւ Վարդիէլ հրեշտակապե-
 տը՝ որ դայ աւետիս տայ քեզի բո-
 լոր աշխրբքիս փրկութիւնը : Վ ու
 արժանաւորութիւնդ շարժեց զՄ-
 տուած, որ աս բարիքս քեզմով ընէ
 մեզի . քու սրբութիւնդ արժանի ե-
 ղաւ աս աստուածային պատուոյ .
 քու կին կուսական ամբիծ մաքրու-
 թիւնդ հասուց զքեզ ասանկ մեծա-
 բանաց : Աւրախանամ ու կը յըն-
 ծամ փառացդ վրայ, և խոնարհու-
 թեամբ սրտի կ'իցնիմ ոտքդ սուրբ
 Մտուածածին . կը փափաքիմ ող-
 ջունել զքեզ Վարդիէլ հրեշտա-
 կին հետ : Ուրան լեր բերկրեալ
 Տէր ընդ քեզ, լի ես ամենայն չնոր-

հօք, զարդարուած էս ամէն առա-
քինութեամբ, օրհնեալ էս դու 'ի
կանայս, և օրհնեալ է պտուղ որո-
վայնի քո: Աղաչեմ հուսական
մայրութիւնդ, կր պաղատիմ գթութե-
անդ, մի պակսեցնէր ինծմէ ա-
նուշ խնամքդ, մի զրկէր զիս քու
չնորհքէդ, որ կարօտեալ հոգւով
կր դիմեմ ողորմութեանդ: Ախտեմ
մայր Աստուծոյ, որ աս անձառելի
պատիւը մեզի համար ունեցար, որ-
պէս զի ըլլաս ծնող մեր փրկչին, ու
քու պաշտպանութեամբդ վայկնք
մեր հոգւոյն փրկութիւնը: Արբ
պիտի ըլլայ որ ես ալ մէկ օր մը լսեմ
քու անուշ բերնէդ, թէ մի վախ-
նար, իմ բարեխօսութեամբս կը դրա-
նաս Աստուծոյ շնորհքը, ու յաւի-
տենական երանութիւնդ:

Արդ: " Աստուածածին սուրբ
կոյս՝ անապական տաճար, անպա-
բաղիժ էին բոլորից բնութեանց
լայնածաւալ տեղի. այսօր ընդ բեր-
կրական զուարթնոյն կրեցեր աւե-
տեօք զտէրն տերանց 'ի քեզ. առ

որ մաղթեմք բարեխօսել վասն մեր
անլուելի ձայնիւ: "

Աղօրք այցելորեսն առքր Աստուա-
ծածնայ:

Ո՛վ քաղցրագութ սուրբ կոյս
Արեւիամ, քուկին ցնծալից այցե-
լութեամբդ մխիթարութիւն եղար
վշտացելոց, քաջալերութիւն տկա-
րաց, ու ուրախութիւն տանը Աղիւ-
սաբեթի, որ քու շնորհալի բարեդ
լսելով՝ լեցուաւ հոգւով օրբօյլ, ու
երանութիւն սուաւ անոնց՝ որ ճրշ-
մարիտ հաւատքով ընդունին քու
մայրութիւնդ: Աղաչեմ մայր ու-
ղորմութեան՝ փառաւորէ՛ մեծու-
թիւնդ իմ վրաս. մի նայիր իմ ան-
արժանութեանս, այլ մայրական
գթութեամբդ եկիր տեսութիւն
իմ աղքատ հոգւոյս. լուսաւորէ՛ խա-
ւարած միտքս. մխիթարէ՛ սքաւոր
սիրտս, որ մեղքերուս համար կ'ող-
բամ ու կը տանջուիմ: Ախի ըլլայ
օր մը, որ լսեմ քու անուշ բարեդ

իմ հոգւոցս մէջը, ու փառք տալով
 Մատուծոյ ողորմութեանը, լեցուիմ
 անպատմելի խնդու թեանք, տես-
 նալով մայրական դու թող ու խնամքդ
 իմ վրաս: Եւ թէ պէտ արժանի
 չեմ աս շնորհքին, սակայն քու մե-
 ծութեանդ ու գթութեանդ միջնակ
 կը վայլէ, ու մեծ փառք է ողորմիւ
 ինձի պէս անարժան մեղաւորին:

Երբ: «Վասք անմարմնոց հրեշ-
 տակաց քեզ երանեն ամհնորհնեալ
 կոյս Մարիամ, որ զէակից Քանն
 որ ընդ հօր կրեցեր ՚ի քեզ անսեր-
 մնապէս. առ նա միշտ բարեխօսեալ
 վասն քառութեան մեղաց մերոց»:

Աղօրք վերափոխման տարբ Աստուա-
 ծածնայ:

Ո՛վ ամենամեծ թագուհի, ար-
 ժանի ամենայն փառաց և մեծու-
 թեան՝ մայրդ Մատուծոյ, Վառն որ
 ասօր մտնալով յարքայութիւն, ա-
 մենատուրք Երբորդութենէն առիթ
 ծայրագոյն պատիւ իշխանութեան՝

թագուհի ըլլալով երկնի և երկրի.
 դանձապէտ եղար շնորհաց ու ողոր-
 մութեան: Պատուեցար հրեշտակ-
 ներէն ու անդագար կը փառաու-
 րուիս անպատմելի գովասանքներով.
 կ'օրհնեն զքեզ սերորէք, կը գովեն
 քերորէք, և ամենայն երկնային զօ-
 րութիւնը կը սպասաւորեն քու կին
 արժանաւոր սրբութեանդ ու աս-
 տուածամայրութեանդ: Վաղաչեմ
 զքեզ մայր ողորմութեան՝ մի՛ մոռ-
 նար զմեզ որ քու ծառայութեանդ
 ու որդեգրութեանդ նուիրեր ենք
 մեր հոգին: Վառն երկինքնես ան-
 պատմելի երանութեան մէջ. իսկ
 մենք աշխրբքիս անտանելի թշուա-
 ութութեան, մի՛ թողուր զմեզ միմեկ
 ու անօգնական: Վառն մեր տկա-
 րութիւնը, կը տեսնաս մեր խեղ-
 ճութիւնը, կ'իմանաս մեր սրտին
 փափաքը, կ'ողորմիս ու կը դժաս
 ամենուն վրայ, որ բողբոլ սրտիւ
 քու մայրութեանդ ապաւիներ են:
 Թէ որ արդարնեբուն ողորմիս, մեծ
 բան չէ, ինչու որ արժանի են ողոր-

մութեան, այլ ինձի անարժան մեղաւորին ցըցուր քու ղթութիւնդ, որով մեծութիւնդ կ'երևնայ, ու մայրական դուձդ կը փառաւորուի:

Երբ: «Շարն ընծայեալ յերկրէ յերկինս՝ յոր ամբառնամբ ասքեղ շնողիս, յոր լեւոյ քոյ զաւետիս՝ խնդրեմ լինել մեզ լեւիս, զձայն աւետեաց քոյ միածնին՝ եթէ եկայք օրհնեալք հօր իմ. յոր օրհնեցայք ազգք երկրածին՝ տուք օրհնութիւն ստղոյ կուսին»:

Այոքք Յիսուսին ձեկեակեր:

Ո՛վ ամենաբարի մարդացեալ Բստուած իմ Յիսուս, ստեղծող երկնի և երկրի, երկիրսպագանեմ ու կը պաշտեմ զքեզ, որ իմ փրկութեան համար եկար աշխարհք, ու աստուածային հրաշքով ծնար ՚ի կոյս մօրէ. չուզեցիր աշխրբիս փառքովը երևնալ մեզի, այլ խոնարհութեամբ ու աղքատութեամբ՝ ինչուան շիջանուեցաւ քու մեծու-

թեանդ արժանաւոր տեղ մը ծնանելու. ուստի ծնար խեղճ տնակ մը, պառկեցար մօրի մը մէջ, ու անով ցըցուցիր մեզի քու անհաւատալի կարողութիւնդ՝ թէ մեր սիրոյն համար որչափ կրնաս եղեր խոնարհիլ աստուածային բարձրութիւնդ: Շնորհակալ ըլլալով կը սիրեմ զքեզ մանկացեալ Բստուած իմ Յիսուս, կը պաշտեմ ու կը փառաւորեմ անձառելի խոնարհութիւնդ. և ամբնալով իմ հպարտութեանս վրայ, կ'իջնիմ քու ոտքդ. գիտեմ որ շէս զըզուիր մեղաւորներէն, կ'ուզես անոնց սրբութիւնը, ու չնորհքով կը զարդարես իրենց հողին. անոր համար կը բանամ իմ սրտիս դուռը, կ'աղաչեմ որ գաս ծնանիս իմ հօգիս. փարատես սրտիս խաւարը, լուսաւորես աստուածային շնորհքովդ. մխլթարես երկնային խաղաղութեամբդ որ բերիր աշխարհք մեր փրկութեանը համար. որպէս զի ես ալ երանելի հովիւներուն հետ ուրախութեամբ փառք տամ աս-

տուածային մեծութեանդ, և հրեշտակաց բազմութեանը հետ օրհնեմու գովեմքու անուշ մարդասիրութիւնդ որ ցըցուցիր մեզի :

Երդ :

“Փառք 'ի բարձունս Մատուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն, և օրհնութիւնքեզ 'ի բարձունս . օրհնեալ էս տէր Մատուած մեր, օրհնեմք զքեզ, և գովեմք զքեզ . խոստովանիմք տէր զքեզ, և երկիրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ, զօհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոյ . տէր թագաւոր սուրբդ երկնային՝ Մատուած և հայր ամենակալ : Տէր և Որդի հօր միածին Հիսուս Վրիստոս և սուրբ որդի . տէր Մատուած դառն Մատուծոյ և Որդի հօր . որ աւեր զմերս 'ի կուսէն, օղորմեցար բարձեր զմեզս աշխարհի . և արդ ընկալ զաղաչանս մեր, սուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ օղորմեանք մեզ :

դի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ էս, դու միայն տէր մեր Հիսուս Վրիստոս : Տէր և հոգի սուրբ՝ որ 'ի փառս Մատուած ընդ հօր . ամէն ,, :

Աղօրք Յիսուսին սատուածայայտու յիւանք :

Ո՛վ Մատուած իմ և թագաւոր իմ Հիսուս Վրիստոս, դու որ սատուածային յայտնութեամբդ փառաւորեցիր մեր ընտ թիւնը . ճշմարիտ Մատուած ըլլալովդ՝ ստեղծող երկնի և երկրի, մարդկային մարմնովդ ալ պատուեցար ու պաշտեցար իրեք թագաւորներէն . որք տեսնալով քու կին ծննդեանդ լուսաւոր աստղը, ու կարօտ ունենալով ցանկալի դալտեանդ և անուշ տեսութեանդ, փախաբանօք ելանք քեզ փնտրուելու . թողուցին իրենց աշխարհը, մոռցան իրենց մեծութիւնը, չինայեցան իրենց հանգիստը, մէկդի զրին իրենց հոգը ու աշխարհը :

քիս մտմբտուքը՝ զքեզ գտնալու,
 զքեզ պաշտելու, զքեզ սիրելու հա-
 մար: Աղաչեմ՝ փրկիչ իմ Յի-
 սուս. անը ինձի ալ աստուածային
 շնորհքդ, որ ես ալ մոռնամ չէ թէ
 մինակ աշխարքս ու աշխարհային
 բաները, այլ և իմ մարմինս ու հան-
 դիստս. և հոգւով ջերմեռանդու-
 թեան ելլամ քեզ փնտրուելու, ըզ-
 քեզ գտնալու, զքեզ սիրելու, քե-
 զի ծառայելու, ու յաւիտեան քեզ-
 մէ չիզատուելու: Աղաչեմ զքեզ
 ալ տիրամայր սուրբ կոյս, ինձի հա-
 մար միջնորդ եղեր Յիսուսին, որ
 արժանի ընէ զիս իր փառաւոր տե-
 սու թեանը արքայութեան մէջ. ուր
 մեծարելով փառաւորեմ քու մայ-
 րութեանդ ալ որ ցրցուցեր ես ինձի:

Երբ: « Զայնիւ առ քեզ Տէր
 պաղատիմք՝ և առջի քո անկանիմք.
 աղաչանօք Աստուածածնին՝ շիճո՛ ի
 մէնջ զբոց հնոցին. անը արտա-
 սուօք զմեզս ջնջել՝ և վերստին ըզ-
 մեզ նորոգել. յոր օր հնեցայք ազգք
 երկրածին՝ անք օրհնութիւն պըտ-
 զոյ կուսին », ,

Այոքք Յիսուսին մկրտութեանը:

Ո՛վ աղբիւր սրբութեան և ամե-
 նայն մաքրութեան տէր իմ Յիսուս
 Վերիտոս, գուն որ եկեր էիր աշ-
 խարհք մեր մեզքը մաքրելու և ըզ-
 մեզ սրբելու համար, յանձն առիր
 խոնարհութեամբ երթալ Յորդա-
 նան գետը, ու մկրտուիլ քու ծա-
 ռայեդ. ու անով մաքրեցիր և օր-
 հնեցիր զձօրը, որ ըլլայ մեզի նիւթ
 մկրտութեան՝ լուացուելու և սրբ-
 բուելու մեր սկզբնական մեղքէն:
 Կը փառաւորեմք աստուածային ի-
 մաստութիւնդ, կը գոհանանք ու
 շնորհակալ ենք անբաւ ողորմութե-
 նեդ. կ'երկրպագեմք քու կին մե-
 ծութեանդ, կը քարոզեմք քու կին
 սքանչելիքդ, ու կը դաւանինք զքեզ
 միածին Որդի Աստուծոյ. ինչպէս
 որ վկայեց չայրն երկնաւոր մկր-
 տուելուդ ատենը, ու հողին սուրբ
 ալ աղաւնակերպ երևնալով իմա-
 ցուց աշխրբիս քու աստուածու-

Թիւնդ : Բնաւեմ զքեզ փրկիչ հո-
գւոյ իմոյ, մաքրէ՛ իմ սիրտս ամէն
աղտոտութենէ մեղաց, ցոյուէ՛ ու
սրբէ՛ իմ հոգիս քու շնորհքովդ, ու
րով լուսաւորուի պայծառանայ ու
վառուի աստուածային սիրով :

Երբ : “ Ի հօրէ լոյս ծագեցար՝
մեռեալ բնութեանս կենդանարար-
առաքեցեր յառաջընթաց՝ սուրբ
զէջովհաննէս քարոզ կենաց . սորին
հայցմամբն ամենակալ՝ զպազտա-
նրս մեր ընկալ . տուք օրհնութիւն
անձառ լուսոյն , հօր և Արդւոյ և
սուրբ հօգւոյն , , :

Աղօթք տեստերերտաւիտ :

Արբութիւն սրբոց տէր իմ Հիւ-
տուս Վրիստոս, որ ուղեցիր քա-
ռանսօրեայ ընծայուիլ ՚ի տաճարն ,
ծածկելով աստուածութեանդ փառ-
քը՝ ցրցուցիր մեզի անձառելի խո-
նարհութիւնդ : Վառ որ ամենասուրբ
էիր հօգւով ու մարմնով, ընծայուե-
լովդ ՚ի տաճար՝ դրսուանց երևցու-

ցիր զքեզ և զսուրբ մայրդ կարօտ
մաքրութեան . ու անով սրբեցիր
մեր հօգին , և մեր բնութիւնը ըն-
ծայեցիր հօր Բնութոյ : Բնծայ-
ուիլդ ՚ի տաճարն , ու սիրով զբը-
կուիլդ Սիմէոն ծերունիէն՝ մխիթա-
րեց մեր ծերացած բնութիւնը , որ
կը փափաքէր քու զալտեանդ , որ-
պէս զի արժանանայ նորոգութեան
ու խաղաղութեան հօգւոյ : Բշան
եղար մեզի Բնութոյ հետ հաշտու-
թեան . իբրև ճիւղ զալար ձիւթե-
նոյ ՚ի գիրկս ամենասուրբ աղաւնոյ
մօրդ և կուսի ընծայուեցար ՚ի տա-
ճարն , որով իմացանք թէ իջած է
աստուածային բարկութեան ջրհե-
ղեղը , ու բացուած է մեզի ողորմու-
թեան դուռը : Առտի մենք ալ Սի-
մէոն ծերունիին հետ կաղաչէնք ըզ-
քեզ . սլ փրկութիւն մեր , լոյս հե-
թանոսաց , արձակիչ կապելոյ և
բժիշկ հօգւոց մերոյ , ողորմէ՛ քու
ժողովրդեանդ , որք կարօտ են եր-
կնաւօր պարգևացդ :

Երբ : “ Ար արձակիչդ ես կապե-

լոց պարզեւատու ամենեցուն, այսօր
հայցմամբ ծերունւոյն արձակեալ և
զիս զբաղմամբս 'ի կապանաց մա-
հու 'ի կեանսդ յախտենից ։ ։ ։

Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ
պաղատանք առ առջր Ստուռա-
ճաճիկն : Բան . 2 :

Եւ արդ 'ի վերայ այսբանեաց
յուսահատութեանց, և ահարկու
սրտաբեկութեանց, պահուցանողա-
կան սաստիութեց, աստուածային
բարկութեանց, տազնապեալ ողբով
Թախծութեան խսպառ, աղաչեմ
զքեզ սուրբ Բոտուածածին . հրեշ-
տակ 'ի մարդկանէ . մարմնատեսիլ
քերովլէ . երկնաւոր արքայուհի .
անխառն իբրև զօդ . մաքուր որպէս
լոյս . անշաղխ ըստ նմանութեան
պատկերի արուսեկին բարձրութե .
դերազանց բան զանախութիւն ան-
կոխելին սրբութեանց . երանաւոր
խոստմանն տեղի . եղեմ չնչական .
ծառ կենացն անմահից բոցեղէն սը-
րովն պարունակեալ : Ի բարձրեալն
հօրէ զօրացեալ և հովանացեալ .
հանդատեմք հօգւոյն հանդեր-

ձեալ և մարբազործեալ . բնաիւ-
 թեամբ Սրբւոյն յարդարեալ, և
 տաղաւարեալ : Սիածինն Հօր, և
 քեզ անդրանիկ որդի քո ծննդեամբ,
 և տէր արարչութեամբ : Բնդ ան-
 աղտ մարբութեանդ՝ և ամբիժ բա-
 րի . ընդ անարատ սրբութեանդ՝ և
 խնամակալ բարեխօս : Բնկալ զմազ-
 թանս այսր աղերսանաց քում դա-
 ւանողիս, և մատի ընծայեա՛ն ընդ
 սմին խառնեալ զբանն իմ նախնի՝
 մեծիդ ներբողի՝ ՚ի քոյդ պողա-
 տանս : Հիւսեան միացի զվեղուցե-
 լոյս դառն հեծութիւն ընդ քումդ
 երջանիկ և խնկաւորեալ հայցուա-
 ծոց, տունիդ կենաց պողոյն օր-
 հնութեան : Օյ ՚ի քէն միշտ օգ-
 նեալ և բարեզործեալ, և ՚ի մա-
 քրական քո ծնելութիւնդ ապաւի-
 նեալ և լուսաւորեալ՝ կեցից՝ Բրիս-
 տոսի սրբւոյ քոյ և տեառն :

() Ժամնդակեան թեւոցդ աղօթիք
 խոստովանեալ մայրդ կենդանեաց՝
 և յեկնն իմ յերկրէս հօլտէ, ա-
 ռանց լկանաց հետեւել ՚ի կեանս

օթեւանացդ պատրաստութեան . զի
 թեթեւացի կատարածն իմ՝ ինձ
 ծանրացելոյս անօրէնութեամբ : Բ-
 րացեալ տօն ինձ բերկրութեան՝
 զօրն իմ տաղնապի՝ ողջացուցիչ եր-
 կանցն Նշալի : Վարեխօսեան, խընդ-
 րեան, աղաչեան . զի ըստ անձաւելի
 մարբութեանդ՝ և ահա զբանիդ հա-
 ւատամ զընդունելութիւն : Բարտա-
 ստօք օգնեան վտանգեցելոյս՝ գո-
 վեալդ ՚ի կանայս . ծննր խոնարհե-
 ցո առ իմ հաշտութիւն՝ ծնողդ Բ-
 տուծոյ . ընդ իմում թշուառիս հո-
 զա՛ն խորան բարձրելոյն . ձեռն տուր
 անկելոյս՝ տաճար երկնային : Փա-
 աւորեան զորդիդ քո ՚ի քեզ՝ ա-
 տուածօրէն ինձ հրաշագործել քա-
 ւութիւն և ողորմութիւն, աղախին
 Բտուածոյ և մայր :

Վարձրացի պատիւ քո ինև, և
 ցուցցի փրկութիւն իմ քև, եթէ
 զիս գտցես՝ տիրամայր . թէ ինձ ո-
 ղորմեսցիս՝ սրբուհի . թէ զկորու-
 սեալս շահեսցիս՝ անարատ . թէ ըզ-
 հարթօւցեալս յանձանձեցես՝ եր-

ջանիկ . թէ զամաչեցեալս յառաջ
 մատուցես՝ բարեչնորհ . թէ յու-
 սահատելոյս ինձ միջնորդեսցես՝
 միշտ սուրբ կոյս . թէ զմերժեալս
 ընտանեցուցես՝ մեծարեալդ յԱս-
 տուծոյ . թէ յիս ցուցցես զգթա-
 ծու թիւն՝ լուծիցդ անիծից . թէ
 զժպիեալս հաստատեսցես՝ հանգիստ .
 թէ ՚ի խռովութեանցս յուզմանց
 փոխեսցես զիս՝ խաղաղարար . թէ
 վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գու-
 վեալ . թէ վասն իմ մտցես ՚ի հան-
 դէս՝ մահու նահանջից . թէ զգառ-
 նութիւնս իմանալեսցես՝ քաղցրու-
 թիւն . թէ զբաժանմանն իմ խըտ-
 րոց քահալեսցես՝ հաշտութիւն . թէ
 զանմարբութիւնս իմ բարձրես՝ եղծ-
 մանն ընդօտնիչ . թէ զմասնեալս մա-
 հու փրկեսցես՝ կենդանի լոյս . թէ
 զլալեացս ձայն հատցես՝ բերկրու-
 թիւն . թէ զխորտակեալս կազդու-
 րեսցես՝ դեղ կենաց . թէ ՚ի կոր-
 ծանեալս յիս ախնարիեսցես՝ հոգե-
 լից . թէ ողորմութեամբ ինձ պա-
 տահեսցես՝ կտակ նուիրեալ . որ

հնեալդ միայն ՚ի շրթունս ամբիծս
 լեզուաց երջանկաց : Բ՛հա կամ իլ
 մի կամ ին քու մդ կուտութեան յան-
 ձըն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ ,
 մայրդ բարձրելոյ տեառն : Յիսուսի
 արարչին երկնի և բնաւին երկրի :
 Օ որ անձառապէս ծնար բովանդակ
 մարմնովն , և համայն աստուածու-
 թեամբն . որ փառաւորեալն է ընդ
 հօր և հօգւոյն սրբոյ՝ էութեամբ ,
 և անքննութեամբ մերոյին բնու-
 թեամբս միացելով՝ ամենայն , և յա-
 մենայնում . մի յԱշրորդութենէն .
 նմա փառք յաւիտենից յաւիտեանս .
 ամէն :

ՄԱՂԹԱՆԲ

ԱՌ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԵ ՄԱՐԻԱՄ

Մարմանդ բանաւոր կենացն բուսոյ,
Փառաց օթեան անըստուեր լուսոյ,
Դիմելոցն 'ի քեզ ապաւեն յուսոյ,
Աբրիժ միշտ սուրբ կոյս մայրրդ Աստուծոյ :
Ամուր աղատան՝ առ քեզ զես դարձն ,
Տիրամայր սուրբ կոյս՝ ինձ ձեռն մատն .
Զհոգւոյս իմ՝ խաւար դու պայծառացն ,
Յարկածից չարին անվրտանդ զերծն :
Բամել աղաւեմ՝ ըզգանձ սիրոյ քոյ ,
Ի թափուր յիմ սիրա՝ արնանկիս հոգւոյ .
Յաղբիւրդ անըստառ կենդանի ջրոյ ,
Փրկութեան բաժակ պատքերոյս արբն :
Ի քեզ պաղատիմ՝ անարատ սուրբ կոյս ,
Հան զես 'ի մեղաց խաւարէս 'ի լոյս .
Միացն ձեռնտու ալեկոծ հոգւոյս ,
Լէր ինձ այցելու , զե գու ես իմ յոյս :

Ազերս 'ի սրբաէս առ քեզ մերձեացի ,
Գլժուժիւն կուսից յիս երեւացի .
Այցոյս 'ի կենաց քն 'նորագեացի ,
Եւ փառք զըշխոյնք ինն փայլեացի :
Միածնին ծընող՝ սուրբ կոյս Մարիամ ,
Շնորհօք բերկրեալ՝ գլժուժիւ փարժամ ,
Ազերացոյ յիս շնորհս յարժամ ,
Անկեղոյս 'ի քս մայրական խընամ :